



# ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ

- ՆԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
- ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ Իրավահամեմատական վերլուծություն
- ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՊԱՑՈՒՅՅՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ
- ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ ՆՆ Սահմանադրության լույսով
- ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՎՈ  
ՇՔԱՆՇԱՆ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁ  
ԱՂՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ**



Իրավակարգի և  
օրինականության  
ամրապնդման  
ուղորտում հայ-  
ռուսական  
համագործակցության  
գործում ներդրած  
մեծ ավանդի  
համար Հայաստանի  
Հանրապետության  
գլխավոր  
դատախազ Աղվան  
Գառնիկի  
ՀՈՎՍԵՓՅԱՆԸ  
Ռուսաստանի  
Դաշնության  
Նախագահ Դմիտրի  
Մեդվեդևի  
2012 թվականի  
ապրիլի 14-ի  
հրամանագրով  
պարգևատրվել է ՌԴ  
Պատվո Շքանշանով



ժ. ԲՆՅԱՆԻՆԻ ԿՐԹՆԵՐԻ  
ՆՇՆՆԵՐԻ ՆԱԿԵՆԵՐԻ  
ՆԱԿԵՆԵՐԻ ԿՐԹՆԵՐԻ  
1994 ԱՐԴՆԻ ԿՐԹՆԵՐԻ  
ՆՈՒՄԱՍՏԱՆԻ ԿՐԹՆԵՐԻ  
ՆԱԿԵՆԵՐԻ ԿՐԹՆԵՐԻ  
ՆԱԿԵՆԵՐԻ ԿՐԹՆԵՐԻ  
ՆԱԿԵՆԵՐԻ ԿՐԹՆԵՐԻ  
ՆԱԿԵՆԵՐԻ ԿՐԹՆԵՐԻ

**№ 71**

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆ

# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ  
ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1997 ԹՎԱԿԱՆԻՑ՝

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉ, ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ  
ՀԵՆՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ (1939-1998 ԹԹ.)  
ՆԱԽԱՉԵՆՈՒԹՅԱՄԲ

## Խմբագրական խորհուրդ.

Արմեն	ԴԱՆԻԵԼՅԱՆ - նախագահ
Գուրգեն	ԱՄԲԱՐՅԱՆ
Գևորգ	ԴԱՆԻԵԼՅԱՆ
Վահրամ	ՇԱՀԻՆՅԱՆ
Գառնիկ	ՍԱՖԱՐՅԱՆ
Հովհաննես	ՍՏԵՓԱՆՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ Գ. ԱՄԲԱՐՅԱՆ

Խմբագրության հասցեն.

375010, ք. Երևան, Հանրապետության փ., 85  
Հեռախոս՝ 52-33-76  
Ֆաքս՝ 56-76-72

© Համակարգչային շարվածքը,  
ոճը, տառաձևերը և էջադրումը՝  
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ»

Ստորագրված է տպագրության՝ 25.05. 2012 թ.  
Ֆորմատ՝ 70 X 108 1/16, տպաքանակ՝ 500 օրինակ  
Ծավալը՝ 5.6 պայմ. մամուլ  
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է  
«Պոլիգրաֆ բիզնես» ՍՊԸ-ի տպարանում  
Երևան, Գ. Բոչարի 21

**2012**

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2012 Ա.

# **ՆԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

**Հայաստանի և Ռուսաստանի գլխավոր դատախազները ստորագրեցին համագործակցության ծրագիր՝ նախատեսված 2012-2013թթ. համար**

Ապրիլի 25-ին աշխատանքային այցով Հայաստան էր ժամանել Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազ Յուրի Չայկան:

Նույն օրը տեղի է ունեցել երկրու երկրների գլխավոր դատախազների առանձնազրույցը, որի ընթացքում քննարկվել են ՀՀ և ՌԴ գլխավոր դատախազությունների միջև

համագործակցության մասին 2006 թվականի սեպտեմբերի 22-ին ստորագրված

Համաձայնագրի

չրջանակներում երկու պետությունների դատախազական կառույցների փոխգործունեությանը, այդ թվում՝ կոնկրետ քրեական գործերով իրավական օգնություն ցուցաբերելուն վերաբերող հարցեր:

Նույն օրը ՌԴ գլխավոր դատախազ Յուրի Չայկային ընդունել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը:

Հանրապետության Նախագահը հանդիպման ընթացքում նշել է, որ հայ-ռուսական բարձր մակարդակի քաղաքական երկխոսությունը, ակտիվ տնտեսական համագործակցությունն ամրապնդում են նաև իրավապաշտպանության ոլորտում երկու երկրների դաշնակցային հարաբերությունները:

Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազը երկկողմ հարաբերությունների և մասնագիտական ոլորտում սերտ փոխգործակցության ևս մեկ դրսևորում է համարել իր այցի շրջանակներում ՀՀ և ՌԴ գլխավոր դատախազությունների միջև ստորագրվելիք համագործակցության ծրագիրը՝ նախատեսված 2012-2013թթ. համար:

2012թ. ապրիլի 25-ին ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Դովսեփյանը և ՌԴ գլխավոր դատախազ Յուրի Չայկան ստորագրել են ՀՀ և ՌԴ գլխավոր դատախազությունների միջև 2012-2013 թթ. համագործակցության ծրագիրը: Ըստ այդմ կողմերը պայմանավորվել են 2012-2013 թթ. համատեղ կազմակերպել կլոր սեղաններ և քննարկումներ հետևյալ թեմաներով.

- Ծայրահեղական և ահաբեկչական



## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

նպատակներով ինտերնետն օգտագործելու դեմ պայքարի հիմնախնդիրները և պրակտիկան,

- Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում փորձի փոխանակման, պրակտիկայի, պայքարի արդյունքների և ձևերի արդյունավետության քննարկման, ինչպես նաև կոռուպցիոն և այլ իրավախախտումների կանխարգելման հարցում դատախազությունների կադրային ստորաբաժանումների միջև փորձի փոխանակում,

- Քրեական գործերով իրավական օգնություն տրամադրելիս միջազգային համագործակցության ժամանակակից ձևերը և մեթոդները, քրեական գործերով հանձնման և իրավական օգնության ոլորտում Հայաստանի և Ռուսաստանի դատախազության մարմինների միջև համագործակցություն:

Ստորագրումից հետո կայացած մամուլի ասուլիսում ՀՀ գլխավոր դատախազ Ադվան Հովսեփյանը, մասնավորապես, նշել է. «Մենք չսահմանափակվեցինք համաձայնագրով, այլ միասին ստորագրում ենք կոնկրետ ծրագիր՝ այդ համագործակցության շրջանակում: Սա իրավական համագործակցության լավագույն ձևն է: Մեր դրական աշխատանքն ընդօրինակեցին մի շարք այլ երկրներ, որոնք միմյանց միջև ունեն իրավական համագործակցություն, որը նպաստում է երկու երկրների իրավապահ ոլորտների աշ-

խատանքի արդյունավետության բարձրացմանը հանցավորության դեմ պայքարում և օրինականության հետագա ամրապնդմանը»:

ՌԴ գլխավոր դատախազ Յուրի Չայկան իր խոսքում ընդգծեց, որ Ռուսաստանի և Հայաստանի գլխավոր դատախազությունները միասին ակտիվ աշխատում են ԱՊՀ երկրների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի, Եվրոպայի խորհրդի և այլ միջազգային կազմակերպությունների շրջանակներում, որտեղ միասնաբար առաջադրում և պաշտպանում են դատախազական գործունեությանը առնչվող հարցեր ու նախաձեռնություններ:

«Վերջին տարիներին մեր համագործակցությունը ձեռք է բերել կայուն դրական արդյունք: Վստահ են, որ գործընկերային փոխհարաբերությունները լայն ծավալով կշարունակվեն նաև այսուհետև: Ստորագրված ծրագիրը, վստահ են, նոր խթան կդառնա մեր փոխհարաբերություններում: Ավանդաբար լավ հարաբերություններ են ստեղծվել մեր միջև, և մենք ավելի առաջ ենք գնալու: Այս փաստաթղթում նախատեսված են համատեղ աշխատանքների մի շարք ուղղություններ, որոնք սկզբունքորեն ամրապնդում են մեր իրավական կառույցները միջազգային համագործակցությունում», - նշեց ՌԴ գլխավոր դատախազը:



**Աշխատանքային այցի ընթացքում ՌԴ գլխավոր դատախազ Յու.Չայկան ՀՀ գլխավոր դատախազ Ա.Հովսեփյանին է հանձնել իրավակարգի և օրինականության ամրապնդման ոլորտում հայտնական համագործակցության զարգացման գործում ունեցած մեծ ներդրման համար ՌԴ Նախագահի՝ 2012թ. ապրիլի 14-ի հրամանագրով շնորհված պարգևը՝ Պատվո Շքանշանը:**

## **ԸՇ գլխավոր դատախազն ընդունել է Բավարիայի արդարադատության Նախարարի տեղակալին և գլխավոր դատախազին**

«Ը գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանն 2012թ. ապրիլի 2-ին ընդունել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բավարիայի Արդարադատության նախարարի տեղակալ դոկտոր Հելմուտ Փալդերին և Բավարիայի գլխավոր դատախազ դոկտոր Քրիստոֆ Շթրոյցին: Հ.Փալդերը և Բ.Շթրոյցը աշխատանքային այցով Հայաստան են ժամանել «Ը գլխավոր դատախազի հրավերով՝ մարտի 31-ին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների իրավապահ մարմինների համագործակցությանը վերաբերող հարցեր՝ կարևորելով փորձի փոխանակումը հատկապես անդրազգային հանցագործությունների դեմ պայքարում: ՀՀ գլխավոր դատախազը ներկայացրել է Հայաստանի դատախազության կառուցվածքն ու գործառույթները, լիազորությունների շրջանակը ինչպես քրեական դատավարության ընթացքում, այնպես էլ դրանից դուրս, մասնավորապես՝ պետական շահերի պաշտպանության բնագավառում: Հյուրերի խնդրանքով **Ա.Հովսեփյանը** մանրամասնել է նաև ընտրությունների ընթացքում հնարավոր ընտրախախտումներին արձագանքելու համար ձևավորված փորձը, ընտրախախտումների վերաբերյալ բողոքներն ու դիմումները գրանցելու, քննարկելու նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի լիազորությունների շրջանակն ու

աշխատակարգը: Կողմերը քննարկել են նաև զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցության մեխանիզմներն ու խնդիրները, դատախազության աշխատանքների թափանցիկությունն ապահովելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:

Բավարիայի գլխավոր դատախազին ու արդարադատության նախարարի տեղակալին ապրիլի 3-ին ընդունել է ՀՀ վարչապետ **Տիգրան Սարգսյանը**, իսկ մինչ այդ նրանք հյուրընկալվել են նաև ՀՀ արդարադատության նախարար **Հրայր Թովմասյանի** մոտ:

Աշխատանքային այցի ընթացքում Բավարիայի իրավապահ մարմինների պատվիրակությունը այցելել են նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Խոր Վիրապ, Սարդարապատի հուշահամալիր, Ջվարթնոցի տաճար, Մատենադարան ծանոթացել Հայաստանի պատմությանն ու մշակույթին: Ապրիլի 3-ին հյուրերը Ծիծեռնակաբերդում հարգանքի տուրք են մատուցել Մեծ Եղեռնի անմեղ զոհերի հիշատակին:

# Շանդիպում է՞ գլխավոր դատախազությունում

«ՎՎ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանն 2012թ. մարտի 29-ին ընդունել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտորդական առաքելության ղեկավար Ռադմիլա Շեկերինսկայի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը մասնակցել է ՎՎ գլխավոր դատախազի տեղակալ Արամ Թամազյանը:



Ողջունելով դիտորդական առաքելությանը՝ ԳՂ գլխավոր դատախազը հավաստել է դատախազության վճռականությունն ու պատրաստակամությունը հետամուտ լինել հնարավոր ընտրախախտումների վերաբերյալ հաղորդումների պատշաճ գրանցմանն ու քննարկմանը, դրանց համարժեք քրեաիրավական գնահատական տալուն: *Ա.Հովսեփյանը* հյուրերին տեղեկացրել է, որ իր հրամանով մարտի 23-ին ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ընտրախախտումների վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և քննարկման նկատմամբ դատախազական հսկողու-

յուն իրականացնելու համար: Խմբում ընդգրկվել է 10 դատախազ, որի գործունեության համակարգումը կիրականացնի ԳՂ գլխավոր դատախազի տեղակալ *Արամ Թամազյանը*:

*«Աշխատանքային խումբը ոչ միայն հսկողություն է իրականացնելու գրավոր ստացված հաղորդումների պատշաճ գրանցմանն ու քննարկմանն նկատմամբ, այլ նաև իրականացնելու է լրատվամիջոցների մշտադիտարկում՝ քննարկման առարկա դարձնելով հանցագործության հատկանիշներ պարունակող ընտրախախտումների վերաբերյալ մամուլի հրապարակումները»,-* նշել է Ա.Հով-

սեփյանը՝ ավելացնելով. «Քաղաքացիներն այսօր է վստահ լինի, որ հանցագործության մասին իր ահազանգը, պատշաճ քննության առարկա կդառնա»: Տեղեկացնելով, որ ընտրական գործընթացների վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված է 12 հանցակազմ՝ ՀՀ գլխավոր դատախազը համոզմունք է հայտնել, որ ստեղծված մեխանիզմը հնարավորություն կտա, որպեսզի ընտրախախտումների վերաբերյալ բոլոր հաղորդումները դառնան պատշաճ քննարկման առարկա: «Ստացված հաղորդումների և քննարկման ընթացքի, արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը կտեղադրվի դատախազության ինտերնետային էջում, ինչը հնարավորություն կտա բոլոր շահագրգիռ անձանց հետևել ստացված բողոքների քննարկման ընթացքին և բարձրաձայնել, եթե որևէ հաղորդում չգրանցվի և չդառնա իրավապահ մարմինների քննարկման առարկա», - նշել է ՀՀ գլխավոր դատախազը:

Դիտորդական առաքելության ղեկավար Ռ.Շեկերինսկայան իր հերթին կարևորել է ընտրությունների ընթացքի վերաբերյալ բողոքների պատշաճ քննարկման ապահովումն՝ արձանագրելով, որ հենց այդ ընթացակարգն է լավագույն վկայությունը, թե որքանով են իշխանությունները հետամուտ և պատ-

րաստական հարգելու ընտրական իրավունքը և անցկացնելու ազատ և արդար ընտրություններ: Այս առումով տիկին Շեկերինսկայան բարձր է գնահատել դատախազությունում ներդրված փորձը և հույս հայտնել, որ այն իրոք կապահովի ընտրախախտումների վերաբերյալ հնարավոր բողոքների պատշաճ արձագանքմանը:

ՀՀ գլխավոր դատախազը կարևորել է ոչ միայն հնարավոր ընտրախախտումներին համարժեք քրեաիրավական գնահատական տալն, այլ նաև նախականիչ քայլերի ձեռնարկումը և ընդգծել, որ այդ ուղղությամբ ևս դատախազությունը ձեռնարկել է որոշ քայլեր: Մասնավորապես 2012 թվականի մարտի 23-ին կազմակերպվել է գիտագործնական համաժողով՝ իրազեկելով ընտրախախտումների համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին, քաղաքացիական հասարակության առավել լայն շրջանակների հետ քննարկելով օրենսդրական մի շարք խնդիրներ: Եվ վստահեցրել է, որ այդ ուղղությամբ քայլեր կիրականացվեն նաև ընտրական ողջ գործընթացի ժամանակ՝ հնարավորինս ապահովվելով ստեղծված աշխատանքի խմբի գործունեության հրապակայանությունը:

Կողմերը պայմանավորվել են շարունակել համագործակցությունը:

**Î à à ð , Æ Û ≈ ò Æ à Û Ê à ð Ð ð , Æ  
≈ ð î ≈ Ð ° ð Â Û Æ ê î**

ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի գլխավորած պատվիրակությունը 2012 թվականի մայիսի 15-ին մասնակցել է ԱՊՀ անդամ-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի արտահերթ նիստին:

Նիստի օրակարգում ընդգրկված են եղել մի շարք հարցեր, այդ թվում՝ 2011 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների արդյունքների ամփոփումը:

Այցի շրջանակներում Ա. Հովսեփյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է նաև իրավաբանների պետերբուրգյան միջազգային ֆորումի աշխատանքներին:



## **Չինաստանի գերագույն ժողովրդական դատախազը կայցելի Հայաստան**

**ԸՇ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանն 2012թ. ապրիլի 23-ին ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի ժողովրդական Հանրապետության դեսպանի ժամանակավոր պաշտոնակատար ժառ Մինվենի գլխավորած պատվիրակությանը:**



**Հանդիպման**

**ընթացքում քննարկվել են երկու երկրների իրավապահ մարմինների համագործակցությանը վերաբերող հարցեր:**

**Դեսպանի պաշտոնակատարը տեղեկացրել է, որ ՉԺՀ գերագույն ժողովրդական դատախազությունն ընդունել է ԸՇ գլխավոր դատախազի հրավերը, և 2012թ. հունիսին Չինաստանի գերագույն ժողովրդական դատախազ Ցաո Ցզյանմինի գլխավորած պատվիրակությունը կայցելի Հայաստան:**

**Կողմերը վստահություն են հայտնել, որ այցը խթան կհանդիսանա**

**համագործակցության հետագա զարգացման համար՝ նախանշելով կոնկրետ ուղղություններ:**

**Նշենք, որ Հայաստանի և Չինաստանի դատախազությունները համագործակցության մասին հուշագիրն ստորագրել են դեռևս 1998թ.:**

Արմեն ԵՍԱՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության  
հատուկ հանձնարարությունների հարցերով  
ավագ դատախազ

## **Մարդու իրավունքները միջնադարյան հայ իրավական աղբյուրներում**

Մարդու իրավունքների ժամանակակից ըմբռումների և չափանիշների հիմքում ընկած են այնպիսի պատմական փաստաթղթեր, ինչպիսիք են «Ազատությունների մեծ շնորհագիրը» (1215թ.), «Habeas Corpus Act»-ը (1679թ.)՝ Անգլիայում, ԱՄՆ-ի Վիրջինիա նահանգի Հռչակագիրը (1776թ.), ԱՄՆ Անկախության հռչակագիրը (1776թ.), Ֆրանսիայի «Մարդու և քաղաքացիների իրավունքների հռչակագիրը» և այլն:

Տարբեր ժամանակներում, տարբեր երկրներում ստեղծված այդ ազգային իրավական ակտերի շնորհիվ են ձևավորվել մարդու իրավունքների և ազատությունների արդի միջազգային չափորոշիչները: Ընդհանրապես, անցյալում կուտակված փորձին և գիտելիքներին, պատմական զարգացման ընթացքում ստուգված հայեցակարգերին, մտքի չափանիշներին, ավանդույթներին, հեղինակություններին, դասականներին և արժեքների կայունացած համակարգերին դիմելը բոլոր ժամանակաշրջաններում հանդես է եկել ինչպես մարդկության, այնպես էլ կոնկրետ հասարակության և ազգի հոգևոր կեցության, ինքնաձանաչման և ինքնահաստատման կարևորագույն ձևերից մեկը:

Այս առումով ազգային իրավական ակտերի, այդ թվում նաև հայ իրավական հուշարձանների, հետազոտությունն ունի ոչ միայն գիտական - ձանաչողական, այլև գործնական - կիրառական նշանակություն:

Անշուշտ, հայ իրավական հուշարձանները (թե՛ կանոնական և թե՛ աշխարհիկ) մարդու իրավունքների ձևավորման և զարգացման բնագավառում չեն ունեցել այն հսկայական ազդեցությունը, ինչպես վերոնշյալ իրավական փաստաթղթերը: Սակայն, այդուհանդերձ, հայ իրավական հուշարձաններում նույնպես կարելի է տեսնել մարդու իրավունքների վերաբերյալ չափազանց հետաքրքիր և արժեքավոր իրավանորմեր, որոնք ժամանակին կոչված են եղել պաշտպանելու մարդու անվտանգությունը, նրա ինքնիշխան կամքը, պատիվը և արժանապատվությունը:

Այստեղ «իրավական հուշարձան» ասելով նկատի ունենք կանոնական որոշումների և աշխարհիկ օրենքների համակարգված ժողովածուները (օրինակ, «Կանոնագիրք Յայոցը», Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի Դատաստանագրքերը, սահմանադրական օրինագծերը), որոնցից շատ շատերը անմիջականորեն գործել են պատմական տվյալ ժամանակաշրջանում, իսկ դրանցից մի քանիսը՝ «Կանոնագիրք Յայոցը», Մխիթար Գոշի «Յայոց դատաստանագիրքը» շարունակել են գործել նաև հետագա դարերում: Նշենք նաև, որ դրանք գործել են նաև հայ-

կական գաղթավայրերում:

Մեր կարծիքով, հայ իրավական հուշարձանների գիտական ուսումնասիրությունը և ստացված արդյունքների վերահիմաստավորումը այսօր որոշակիորեն կնպաստեն ազգային օրենսդրության ծնավորման և զարգացման գործընթացին:

Հայոց ազգային օրենսդրությունը զարգացել է հիմնականում երկու ինքնավար իրավական համակարգերի՝ կանոնական իրավունքի և աշխարհիկ օրենսդրության ձևով:

Նախքան այդ երկու իրավական համակարգերում արտացոլված մարդու իրավունքներին առնչվող հարցերին անդրադառնալը, փորձենք շատ համառոտ ներկայացնել նաև V դարի հայ նշանավոր մտածողների հայացքները խնդրո առարկայի վերաբերյալ:

Դեռևս Մեսրոպ Մաշտոցը, խոսելով Աստծո կողմից մարդկանց բարեմասնություններով օժտելու մասին, ընդգծում է. «Եվ անձնիշխան կամոք մեծարեաց զմարդիկ» (Սրբոյն հօրն մերոյ Գրիգոր Լուսաւորչի Յաճախապատում ճառք, Վեներտիկ, 1954, էջ 34): Ըստ Մաշտոցի, մարդու բնական և անբաժանելի հատկանիշներից է կամքի ազատությունը, անձնիշխանությունը:

Մաշտոցի աշակերտներից փիլիսոփա Եզնիկ Կողբացին ընդհանրապես դեմ էր միջնադարում լայնորեն տարածված ճակատագրապաշտական ուսմունքին և պնդում էր, որ անձը և ազգը օժտված են ինքնիշխանությամբ: Յուրաքանչյուր անհատ և ժողովուրդ յուրովի է իրականացնում կամքի ազատությունը՝ կախված որոշակի իրադարձություններից և պայմաններից: Անձի ինքնիշխանությունը, ըստ Կողբացու, ամենևին էլ չի նշանակում ամենաթողություն, անպատասխանատվություն, հասարակության մեջ՝ անիշխանություն: Ընդհակառակը, պատիժը, պատասխանատվությունը ինքնաբերաբար ենթադրում են կամքի արտահայտություն, քանզի օրինազանցությունները տեղի են ունենում ոչ թե ճակատագրի կամոք, այլ անձի կամքի թելադրանքով: «Եվ եթե դեպքերը պիտի կատարվեն ճակատագրի ինչ-որ սահմանումով, գրում է Կողբացին, - ապա ո՛չ թագավորները պիտի մահվան հրաման տան, ո՛չ էլ դատավորները պիտի տանջեն ու սպանեն մարդասպանին: Այնինչ, նրանք պատիժ տալով հայտ են

դարձնում, որ հանցավորների հանցանքները ոչ թե ճակատագրի ինչ-որ սահմանումով, այլ չարագործ բռնությամբ են լինում»: Ըստ Կողբացու, ինքնիշխանությամբ օժտված են ոչ միայն անհատները, այլև ազգը, ժողովուրդը:

Ազգերն իրենք պետք է տնօրինեն իրենց ճակատագիրը, կերտեն իրենց ներկան ու ապագան, այլ ոչ թե ապավինեն ճակատագրի կույր ուժին կամ էլ ինչ-որ երկրորդ, երրորդ և այլ ուժերի ողորմածությանը: Այս կապակցությամբ Եզնիկ Կողբացին հետևյալ օրինակն է բերում. «... Երբ ավազակախումբը արշավում է երկիրը՝ մարդկանց կողոպտելու և կոտորելու համար, թող զորք չհավաքեն և իրար հետևից գնդեր չկազմեն՝ երկրից ավազակներին դուրս քշելու համար, այլ թող պատճառաբանեն, թե «երկրի ճակատագիրն է ավազակից կոտորվել, մենք ինչո՞ւ պիտի դեմ գնանք ճակատագրին»: Այնինչ զորքեր գումարելով ու երկրից թշնամուն վռնդելով՝ ցույց են տայիս, որ կոտորածները ճակատագրի ինչ-որ սահմանումով չեն տեղի ունենում, այլ՝ ավազակի բռնությամբ, որ գալով անհագաբար կոտորում է ժողովրդին, զրկում ունեցվածքից»:

Աստվածաշնչից բխող մարդու կամքի ազատության քրիստոնեական ասմունքն իր հսկայական ազդեցությունն է ունեցել հայ կանոնական և աշխարհիկ օրենսդրության վրա:

Հայ կանոնական իրավունքի ծնավորումը սկսվել է IV դարից, երբ քրիստոնեությունը Հայաստանում ճանաչվեց պետական կրոն (301թ.): Քրիստոնեության հաղթանակով, աշխարհիկ օրենսդրությանը զուգահեռ, ծնավորվեց նաև հայ եկեղեցական (կանոնական) իրավունքը: Ժամանակի քաղաքական պայմանները, մասնավորապես, հայոց պետականության թուլացումը և նրա անկումը, Հայաստանում խոչընդոտեցին աշխարհիկ օրենսդրության զարգացմանը և, ընդհակառակը, խթանեցին հայ կանոնական իրավունքի ծնավորումն ու զարգացումը: Ստեղծված պայմաններում հայոց եկեղեցին միանձնյա իր ձեռքում կենտրոնացրեց իրավաստեղծ և արդարադատության ֆունկցիաները: Հայ կանոնական իրավունքի հիմնական աղբյուրը դարձավ Ս. Գիրքը՝ Հին և Նոր Կտակարանները:

Հայոց կանոնական իրավունքը ձևա-

վորվել է հիմնականում ազգային - եկեղեցական և հոգևոր առաջնորդների իրավաստեղծ գործունեության շնորհիվ:

Չայտնի է, որ ազգային - եկեղեցական ժողովներին, սկսած 4-րդ դարի 50-60-ական թվականներից, մասնակցել են նաև հայ աշխարհիկ տերերը: Ահա թե ինչու հայոց եկեղեցական ժողովներն իրենց նշանակությամբ համազգային քաղաքական հաստատություններ էին, քանզի այդ ժողովներն, ի թիվս եկեղեցական - դավանաբանական հարցերի, քննում և ընդանում էին նաև աշխարհիկ օրենքներ, նորմեր, որոնք կարգավորում էին աշխարհիկ հասարակական հարաբերությունները: Այդ իմաստով, հայոց եկեղեցական ժողովները, անշուշտ, որոշակի վերապահումներով, կարելի է դիտել որպես եվրոպական պաշտամենտների նախատիպեր:

Չայ կանոնական իրավունքը համակարգվեց եկեղեցական և հասարակական նշանավոր գործիչ Յովհաննես Իմաստասեր (Օձնեցի) կաթողիկոսի (717-728թթ.) ջանքերով: Յովհաննես Իմաստասերը մեկ հավաքածուի մեջ համակարգեց հայ կանոնական իրավունքը և ստեղծեց իրավական կոթողային հուշարձան՝ «Կանոնագիրք Չայոց», որն առաջին «Corpus juris canonici»-ին էր համաշխարհային իրավագիտության պատմության մեջ՝ ամբողջ հարյուր տարի կանխելով Իսիդորոս Մերկատորի կանոնական ժողովածուն, և Չայաստանում գործեց 12 դար շարունակ, մինչև Չայաստանում խորհրդային կարգերի հաստատումը:

Մեզ են հասել ընդհանուր թվով 70-100 կանոնախմբեր, որոնք ընդգրկում են 1000-1 500 կանոններ:

Ի դեպ, անհրաժեշտ է նշել նաև, որ հայ կանոնական իրավունքը գրեթե ամբողջությամբ կարգավորել է ամուսնա - ընտանեկան հարաբերությունները:

Անձի կամքի ազատությամբ է պայմանավորված փոխադարձ համաձայնությամբ ամուսնանալու իրավունքը, որն իր իրավական ամրագրումն է ստացել կաթողիկոս Ս. Սահակ Պարթևի ԻԷ և ԻԸ կանոններում: Այսպես օրինակ, ԻԷ (27-րդ) կանոնը պատվիրում էր քահանաներին չօրհնել անչափահասների պսակը՝ առանց միմյանց տեսնելու և առանց նրանց համաձայնության: Նույն կանոնը, խոսելով անչափահասների ամուսնության մասին, քահանաներին պատվիրում էր չհամարձակ-

վել օրհնել նրանց պսակ՝ առանց միմյանց տեսնելու և հակառակ նրանց կամքի: Կանոնը պահանջում էր քահանաներից քննել և հարցնել ամուսնացողների «զուցե բռնադատությամբ ծնաւղացն ականայ հավանեալ իրենց», արգելվում էր քահանային հաստատելու ականա ամուսնությունը, քանզի այդպիսի անկարգության պատճառով երկրում ծագում էին հոգևոր և մարմնավոր բնույթի բազմաթիվ վնասներ:

Չայոց Չայրապետի սահմանած կանոնները օժտված էին բարձրագույն իրավաբանական ուժով, քանզի դրանք մարմնավորում էին հոգևոր բարձրագույն իշխանությունը և հետևաբար ենթակա էին պարտադիր գործադրման: Ամուսնության համար նշված պայմանի ոտնահարման պարագայում սահմանվում էին ներգործության որոշակի իրավական միջոցներ, մասնավորապես՝ ամուսնությունը ճանաչվում էր անվավեր, նզովվում էին մեղավորները, պաշտոնազրկություն էր սպառնում պսակն օրինականացրած քահանային, նրան ենթարկում էին ապաշխարանքի, տուգանքի և այլն:

Չայ կանոնական իրավունքում մարդու իրավունքների քրեա-իրավական պաշտպանության հարցերը որոշակիորեն արտացոլվել են Դավիթ Ալավկաորդու «Կանոններում» (1130թ.): Այսպես, նա մարդուն քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքը սահմանում է կատարած արարքում նրա մեղավորությունը: Այլ կերպ ասած՝ Դավթի կանոնները հանցագործության սուբյեկտ են ճանաչում միայն մեղսունակ ֆիզիկական անձին, որը հասել է որոշակի տարիքի: Ինչպես հայտնի է, հին և միջին դարերում բազմաթիվ են այն իրավական հուշարձանները, որոնք հանցագործության սուբյեկտ են ճանաչել նաև կենդանիներին և, նույնիսկ, բնության ուժերն ու անշունչ առարկաները: Կարևորենք, որ կանոնները խստիվ արգելում են ինքնադատաստանը, իսկ ինքնադատաստան իրականացնողները, համարվում են հանցագործներ և ենթարկվում քրեական պատասխանատվության: Կանոնները որոշակիորեն շարադրել են նաև քրեական իրավունքի կարևորագույն ինստիտուտներից մեկը՝ անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը, երբ մարդն ընդհանրապես ազատվում է քրեական պատասխանատվությունից:

Պատիժ նշանակելու հարցում ևս Դավիթ Ալավկաորդին սահմանել է մի շարք մարդասիրական կանոններ: Այսպես, օրինակ, պատիժ նշանակելիս, ըստ կանոնների, պետք է հաշվի առնել ինչպես պատասխանատվությունը մեղմացնող, այնպես էլ ծանրացնող հանգամանքները: Պատիժը մեղմացնող հանգամանքներից էին անզգույշ («ակամա») հանցագործությունները, որոնց դեպքում նախատեսված էին անհամեմատ մեղմ պատժատեսակներ՝ դրամական տուգանք, ապաշխարանք և այլն: Պատիժը ծանրացնող հանգամանքներ են նկատվում երբ հանցագործությունը կատարվում է դաժանաբար («անխնայ»), «զազանաբար»), երբ հանցագործությունները շարունակվում են երկար ժամանակ («զերկարութեան ժամանակն լինել»), չվերադաստիարակվող («անբժշկելի») հանցագործների, արարքը հարբած վիճակում և դիտավորությամբ կատարած լինելը: Այդպիսի հանցագործությունների համար կանոնները սահմանում էին խիստ պատժատեսակներ՝ մարմնական պատիժ, ազատազրկում և նույնիսկ մահապատիժ:

Դավիթ Ալավկաորդու կանոնները պարունակում են նաև ժամանակի համար բավականին առաջադիմական վարքագծի այնպիսի կանոններ, ինչպիսիք են՝ ամուսնության համար փեսացուի և հարսնացուի կամավոր համաձայնությունը, անհիմն ամուսնալուծությունների արգելումը, երեխաների անվճար ուսուցման սահմանումը, չափն անցած ավատատերերի դատապարտումը, աշխատանքի պաշտպանության հարցերը և այլն:

Հայ կանոնական իրավանքի հուշարձանների շարքում նշանակալի երևույթ է նաև միջնադարյան հայ իրականության ամենաերևելի գործիչներից և մտածողներից մեկի՝ Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը»: Այն Ներսես Շնորհալու անդրանիկ կոնդակն է՝ ուղղված հայ ժողովրդին: «Թուղթ ընդհանրականը» բաղկացած է երկու մասից, առաջինն ուղղված է հոգևորականությանը, իսկ երկրորդը՝ աշխարհիկ դասերի ներկայացուցիչներին: Առաջին մասում Շնորհալին սահմանել է հոգևորականության ներկայացուցիչների համար նախատեսված վարքագծի կանոններ, որոնցով վերջիններիս հորդորում է չբազմանալ աշխարհական գործերով, եկամուտները բաշխել աղքատներին և կարիքավորներին, հարբեցողությամբ չտար-

վել, վանքից վանք չթափառել, ազահույունից, չարախոսությունից, բամբասանքներից և ստախոսությունից զերծ մնալ, արդարության դեմ չմեղանչել, հարստացնել գիտելիքները և հոգևորականությանը ներհատուկ առաքինի վարք դրսևորել:

«Թուղթ ընդհանրական»-ի երկրորդ մասում Շնորհալին խոսքն ուղղում է աշխարհիկ դասի ներկայացուցիչներին՝ իշխաններին, զինվորականներին, քաղաքացիներին, երկրագործներին և կանանց: Կաթողիկոսը իշխաններին կոչ է անում պահպանել օրինականությունը, «մարդկանց չստիպել աշխատելու որպես անլեզու անասուններ», անիրավությամբ չվարվել հպատակների հետ, պահպանել ընչազուրկների իրավունքները և այլն:

Դիմելով զինվորական դասին, Շնորհալին նրանց խրատում է հավատարմությամբ և նվիրումով ծառայել իրենց իշխանություններին, պատվով կատարել զինվորական ծառայությունը և չհափշտակել հասարակ ժողովրդի ունեցվածքը:

Կաթողիկոսը քաղաքաբնակներին (քաղաքացիներին, առևտրականներին և արհեստավորներին) հորդորում է ուղիղ և անարատ կենցաղավարությամբ ապրել, խաբեություն և նենգություն չգործել, իրենց ունեցվածքից ողորմություն տալ աղքատներին:

Երկրագործներին և բոլոր ծխականներին ուղղված խոսքով Շնորհալին պահանջում է, որ նրանք հեռու մնան հարբեցողությունից՝ բացատրելով, որ հարբեցողությունը պատճառ է ամեն տեսակ անիրավության և անբարոյականության: Հատկապես պետք է մասնավորել կաթողիկոսի կոչը՝ երեխաներին խնամելու, դաստիարակելու և կրթություն տալու մասին:

Շնորհալին արգելում է զաղտնի պսակադրությունը, ապօրինի ամուսնալուծությունները: Բռնությամբ կամ հարկադրանքով կատարված ամուսնությունը Շնորհալին համարել է «ոչ հաստատուն» և «լուծելի»: Դատապարտելով ապօրինի ամուսնությունը և անհիմն ամուսնալուծությունը, Շնորհալին հետամուտ էր բարի և վսեմ նպատակի, որքան կայուն և անսասան է ընտանիքը, նույնքան առողջ և ամուր է ողջ հասարակությունը:

Առանց որևէ չափազանցության կարող ենք նշել, որ իր գրության ժամանակից (1166թ.) մինչև մեր օրերը Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը» պահպանել

է իր բացառիկ նշանակությունը և արդիականությունը ոչ միայն եկեղեցական բարեկարգության, այլև ողջ հասարակության բարեկրթման և հոգևոր կյանքի ինքնամաքման գործում:

Աստվածային և բնական իրավունքի վրա հիմնված մարդկանց ազատության և հավասարության գաղափարները, ինչպես նաև մարդու կյանքի անվտանգության, պատվի և արժանապատվության հարցերը առավել հնչեղ և ցայտուն են արտահայտվել հայ աշխարհիկ իրավական հուշարձաններում, մասնավորապես, Մխիթար Գոշի «Հայոց Դատաստանագրքում», Սմբատ Սպարապետի օրենսգրքում և XVIII - XIX դարերի սահմանադրական նախագծերում:

Միջնադարյան Հայաստանի իրավական հուշարձաններում մարդու իրավունքների առավել խորը և ամբողջական արտացոլումը մենք տեսնում ենք Մխիթար Գոշի «Հայոց Դատաստանագրքում», որը ստեղծվել է 1184 թվականին: Դատաստանագրքում ամուսնաընտանեկան հարաբերությունների իրավական կարգավորումը խարսխված էր ժամանակաշրջանի լավագույն ավանդույթների և առաջադեմ գաղափարների վրա: Այսպես, Գոշը Դատաստանագրքում ամրագրել է, որ ամուսնությունը պետք է լինի ամուսնացող զույգերի կամավոր համաձայնությամբ, «ոչ պսակել առանց զմիմեանս տեսանելոյ, զի անյայտ է, թե բնաւին, իսկ ոչ կամին ամուսնանալ իւ կամ ոչ հաւանիլ միմեանց» (Մասն 2-րդ, հոդ. 9Ա): Գոշը ոչ միայն Դատաստանագրքով, այլև իր առակներով ցույց է տալիս, որ եթե ամուսնությունը չի կայանում սիրո հողի վրա, ապա չի կարող լինել հիմնավոր և կայուն ամուսնական միություն:

Ամուսինը պարտավոր է հարգել կնոջ պատիվն ու արժանապատվությունը, մարդկային լինել նրա նկատմամբ: Գույքային հարաբերությունների բնագավառում Գոշը, ըստ էության, սահմանում է ամուսինների զույքային իրավահավասարությունը, մի բան, որ շատ հազվադեպ երևույթ էր միջնադարում:

Մխիթար Գոշը ունի նաև իր ուրույն քրեաիրավական ուսմունքը, որն ամենից առաջ աչքի է ընկնում մարդասիրական էությամբ: Գոշին հայտնի է, որ մարդկային բնությունը մեկընդմիջտ տրված ինչ-որ անփոփոխ բան չէ, այն ապրում է լինելիության և զարգացման անընդհատ գոր-

ծընթաց, որի հետևանքով հաճախ մարդը շեղվում է դեպի անիրավությունը և դառնում մեղսագործ: Ըստ Մխիթար Գոշի, մեղքը քրեաիրավական իմաստով ծագում է ոչ թե բնությունից կամ ինքնին, այլ երբ մարդը գիտակցաբար ոտնահարում է օրենքը. «չի ըստ բնութեան ոչ է մեղք, այլ ըստ օրինաց դրութեան յայտնելոյ գիտութիւն» (Մասն 2-րդ, հոդ. ԺԹ):

Մարդկանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցում Գոշը նախատեսում է երկու գլխավոր սկզբունք.

ա) քրեական պատասխանատվության հիմքում պետք է ընկած լինի մեղքը՝ այսինքն՝ միայն մեղավորությամբ կատարված արարքի համար մարդուն կարելի է ենթարկել քրեական պատասխանատվության:

բ) երկրորդ հիմնական սկզբունքը պատասխանատվության անհատականացումն է, այսինքն՝ մարդը ենթակա է քրեական պատասխանատվության միայն սեփական արարքի համար: Այս դրույթը հստակորեն ամրագրված է Դատաստանագրքի ԾԻՒ հոդվածում. «Մի մեռանիցին հարք ընդ որդւոց, եւ մի որդիք մեռանիցին ընդ հարանց, իւրաքանչիւր ոք ի մեղս իւրում մեռցի» (Մասն 2-րդ, հոդ. ԶԴ):

Այստեղից կարելի է եզրակացնել, որ մարդկանց քրեական պատասխանատվության ենթարկելու և պատժելու հիմքում Դատաստանագրքում ընկած է սուբյեկտիվ մեղսայնացման և անհատականացման սկզբունքը: Դրան հակառակ, Դատաստանագրքին խորթ է օբյեկտիվ մեղսայնացման սկզբունքը, ըստ որի պատասխանատվության նախապայմանը հանդիսանում է պատճառված վնասը կամ հանցավոր հետևանքի սոսկ փաստը:

Պատիժ նշանակելիս, բացի վերոհիշյալ հանգամանքներից, Դատաստանագիրքը սահմանում էր նաև հետևյալ սկզբունքները.

1) պատիժը պետք է համապատասխանի կատարված արարքի վտանգավորության աստիճանին, «իսկ պատիժն ըստ վնասու համեմատ լիցի» (Մասն 2-րդ, հոդ. ԾԻԶ):

2) պատիժ նշանակելիս պետք է պարզել հանցագործի անձը, մեղքի ձևը, հանցագործության կատարման միջոցներն ու մեթոդները, շարժառիթներն ու առաջացրած հետևանքները:

Պատժի նպատակը, ըստ Գոշի, ոչ միայն մարդուն ֆիզիկական տանջանքնե-

րի ենթարկելն է, այլ նաև հանցագործին խրատելը և ուղղելը. «Բանտ լինել դատաւորին առ ի խրատել նոքաք զստահական» (Նախ. գլ. 2):

Գոշի Դատաստանագիրքը, ժամանակի մյուս իրավական հուշարձանների համեմատությամբ առանձնանում է նաև ոչ այնքան դաժան պատիժներով: Հիմնական պատժատեսակներն են՝ դրամական տուգանքը, մարմնական պատիժները, ազատազրկումը և ապաշխարանքը: Ինչ վերաբերում է մահապատժին, որն այնքան տարածված էր ավատատիրական ժամանակաշրջանում, ապա Գոշը դեմ էր այդ պատժատեսակին, և Դատաստանագրքում այն նախատեսվում է շատ բացառիկ դեպքերում: Ըստ Գոշի «մեր թագավորները» չեն հրամայել հավատացյալներին մահվան դատապարտել («չհաւատացեալ սպանանել»), այլ միայն խրատել, այսինքն՝ մարմնական պատժի ենթարկել: Դատաստանագիրքը, որպես կանոն, մահապատիժը փոխարինել է տուգանքով, երբեմն նաև՝ անդամահատումով, բանտարկությամբ, աքսորով և այլն, ընդսմին՝ մերժելով մովսիսական «արյան փոխարեն արյուն» սկզբունքը:

Գոշի մարդասիրությունը, նրա առաջադիմական հայացքները առավել ցայտուն դրսևորվել են Դատաստանագրքի այն նորմերում, որոնք վերաբերում են արդարադատության իրականացմանը: Ըստ Դատաստանագրքի, դատարանի նպատակը պետք է լինի արդարության բացահայտումը, մարդկանց միջից խռովքը վերացնելը, նրանց միջև խաղաղություն հաստատելը: Եվ թեպետ բոլոր մարդկային գործերում ամենալավ վարքագիծը ուղորմած լինելն է, սակայն դատական գործում պատշաճ է ճշմարտության հայտնաբերումը («ուղղորդն է պատշաճ»):

Իսկ ինչպիսի՞ հատկանիշներ և բարեմասնություններ պետք է ունենա դատավորը: Այս հարցին Գոշը պատասխանել է «Նախադրության» Ե և Զ գլուխներում: Ըստ նրա, դատավորը պետք է օժտված լինի և՛ տեսական գիտելիքներով, և՛ ունենա գործնական աշխատանքի փորձ («հմուտ լինել, և՛ քաջուսումն, և՛ հանճարեղ»), որպեսզի անսխալ վարի դատական գործը: Դատավորը պետք է լինի հասուն, ուշիմ, գիտուն, որպեսզի անտեղյակության պատճառով սխալ որոշում չկայացնի: Դատավորը պետք է անկաշառ լինի, որպեսզի համարձակ լինի դատական

ատյանում և ուղիղ դատավճիռ կայացնի («զվճիռ դատաստանին ուղիղ հատցէ»), որպեսզի այն լսողների հավանությանն արժանանա («չի միտ լսողացն հաճեսցի»): Դատավորը պետք է նաև օր ու գիշեր զբաղվի ինքնակրթությամբ, յուրացնի բոլոր ազգերի իմաստուն մարդկանց խոսքերը, օրինակ վերցնի նրանցից: Նա անվերապահորեն պետք է բոլոր կողմերով բարի ու առաքինի լինի և ամենից ավելի՝ համբերատար բնավորություն ունենա, չբարկանա, երբեք նախանձոտ չլինի, «մանաւանդ ի ժամ դատաստանի», որպեսզի ներկաների մտքում թյուրիմացություն չառաջանա և նրանք չկարծեն, թե դատավորի նախանձոտության կամ բարկացկոտության հետևանքով սխալ վճիռ է կայացվել: Դատավորները պետք է նաև ներողամիտ լինեն:

Ահա այսպիսի մեծ պատասխանատվություն է դնում Գոշը դատավորների առջև, ինչը ներկայումս նույնքան արդիական է հնչում, որքան խորը միջնադարում: Մխիթար Գոշը հանգամանորեն անդրադարձել է նաև դատավարության հարցերին: Նա դեմ է եղել դատավարության ինկվիզիցիոն (հավատաքննչական) ձևին, որը ավատատիրական ժամանակաշրջանում տարածված բնույթ էր կրում: Ըստ Գոշի, դատավարությունը պետք է ընթանա մրցակցական սկզբունքով: Եթե միջնադարյան դատավարությունում ընդհանրապես խոստովանությունը համարվում էր «ապացույցների թագուհին», ապա Գոշը դրան որևէ առավելություն չի տվել: Ճիշտ է, մի քանի անգամ նա հիշատակում է «խոստովանությունը», բայց այն համարում է ոչ թե «ապացույցների թագուհի», այլ լրացուցիչ մի կռվան՝ դատական գործը լուծելու համար: Գոշը, որպես կանոն, դեմ էր նաև երդմանը՝ որպես ապացույցի տեսակ: Գոշը դեմ էր ոչ միայն երդմանը, այլև ընդհանրապես օրդալիաներին: Օրդալիան դատավարական քննության / փորձության/ մի բարբարոսական մեթոդ էր, որով փորձում էին բացահայտել «ճշմարտությունը»: Օրդալիան արտահայտվում էր երդման, հաղորդություն ընդունելու, շիկացած երկաթը ձեռքն առնելու, սառը ջուրը մտնելու կամ մենամարտելու /անզեն կամ զենքով/ միջոցով: Օրդալիայի ենթարկվածը «ապացուցում» էր իր անմեղությունը:

Թամարա ՇԱՔԱՐՅԱՆ  
ՀՀ գլխավոր դատախազի օգնական

## **ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ**

### **Իրավահամեմատական վերլուծություն**

«Կոլեկտիվ» պատասխանատվության ինստիտուտը և մարդկանց միավորումների հանրային պատասխանատվության գաղափարը ծագել են վաղուց: Դրանք առաջացել են դեռևս այն ժամանակաշրջանում, երբ ազգի (տոհմի) բոլոր ներկայացուցիչները «ընտանեկան» պատասխանատվություն էին կրում իրենց ազգականի կատարած արարքի համար, իսկ միջնադարում գոյություն ունեցող արյան վրեժի օրենքներն արտահայտվում էին նաև այդ ժամանակաշրջանի իրավունքի աղբյուրներում: Այսպես, դեռևս «Ռուսական պրավդայի» համաձայն՝ հանցագործին, որպես ամենածանր պատժատեսակի դատապարտում էին բանադրանքի, և այդ պատժն իր մեջ ներառում էր նաև հանցագործի գույքի բռնագրավումն ու նրան իր ընտանիքի հետ միասին ստրկության հանձնելը: Վերոհիշյալ իրավական աղբյուրի համաձայն՝ որպես պատժի տեսակ կիրառվում էր նաև «վիրա»-ն, այսպես կոչված՝ տուգանքը, որը նշանակվում էր ամբողջ համայնքի նկատմամբ<sup>1</sup>: «Կոլեկտիվ» պատասխանատվության ինստիտուտը Հին Չինաստանի իրավունքին հայտնի ավանդական այն ինստիտուտներից էր, որի դեմ պայքարում էին կոնֆուցիականները և լոգիստները, քանզի Հին Չինաստանում պետական դավաճանության համար մահապատժի էին ենթարկում ոչ միայն հանցագործին, այլ նաև նրա հոր, մոր և կողակցի կողմից ազգականների երեք սերունդ:

Հասարակության զարգացման հետ զուգընթաց, երբ սահմանվեցին մարդու և քաղաքացու իրավունքները, «կոլեկտիվ», «ընտանեկան» պատասխանատվությունից անցում կատարվեց ֆիզիկական անձի անձնական պատասխանատվությանը: «Անվիճելի է, որ անձնական պատասխանատվության գաղափարախոսությունը հանդիսացավ ժողովրդավարական ձեռքբերում ֆեոդալական կարգերի դեմ պայքարում»<sup>2</sup>: Կոլեկտիվ սուբյեկտների հանրային (քրեական կամ վարչական) պատասխանատվությունը սկսեց ամրագրվել տարբեր երկրների օրենսդրական ակտերում՝ բազմիցս ենթարկվելով նշանակալից փոփոխությունների, նույնիսկ վերացման, ու չնայած դրան՝ հետագայում այն կրկին օրենսդրորեն սահմանվեց:

Արտասահմանյան երկրների մեծամասնությունում հանրային-իրավական պատասխանատվությունը իրավախախտումների համար հանդես է գալիս որպես մեկ միասնական քրեական պատասխանատվություն, այլ կերպ ասած, մի շարք արտասահմանյան երկրների իրավական համակարգերում հստակ տարանջատում չկա վարչական և

<sup>1</sup> Stu՝ Исаев. И.А. История государства и права России. М., изд. «Юрист», 1996. с. 19.

<sup>2</sup> Stu՝ Никифоров А.С. Юридическое лицо как субъект преступления и уголовной ответственности. М., 2002. с.14.



քրեական արարքների միջև, իսկ շատ դեպքերում վարչական զանցանքները նույնիսկ նախատեսվում են քրեական օրենսդրությամբ<sup>3</sup>, ուստի հարկ ենք համարում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնահարցը ներկայացնելիս և իրավահամեմատական վերլուծություն իրականացնելիս տվյալ հոդվածում զուգահեռներ անցկացնել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հիմնահարցի հետ: Ի լրումն վերոշարադրյալի՝ հարկ ենք համարում նշել, որ «Ստրասբուրգյան» նախադեպային իրավունքը նպաստեց եվրոպայում «քրեական ոլորտում» նոր դոկտրինայի ձևավորմանը, քանզի եվրոպական կոնվենցիայի իմաստով՝ «քրեական» հասկացությունը չի սահմանափակվում յուրաքանչյուր պետության իրավական ներհամակարգում առկա տեսությամբ, ուստի վերոհիշյալ դոկտրինայի զարգացման արդյունքում «քրեական ոլորտը» տարածվել է նաև վարչական իրավախախտումների վրա: Այսպես, օրինակ. 1984 թվականի փետրվարի 21-ի Օտցյուրկն ընդդեմ Գերմանիայի գործով «քրեական ոլորտին» դասվեցին նաև վարչական իրավախախտումները<sup>4</sup>, ընդ որում, եվրո-

պական դատարանը համանման դիրքորոշում է արտահայտել նաև իր մի շարք այլ որոշումներում<sup>5</sup>:

Ֆրանսիայում մինչև 1789-1794թթ. հեղափոխությունը հայտնի էր կոլեկտիվ միավորումների, մասնավորապես՝ տարբեր տեսակի ընկերությունների, ձեռնարկությունների, համալսարանական միությունների, ինչպես նաև քաղաքների, որպես մեկ միասնական տարածքում ապրող մարդկանց միավորման, քրեական պատասխանատվությունը<sup>6</sup>: Քրեական իրավունքի ոլորտում 1670 թ. ընդունված խոշոր օրդոնանսում մի ամբողջ գլուխ նվիրված էր կոլեկտիվ միավորումների պատասխանատվությանը, ինչպես նաև սահմանված էր քաղաքների նկատմամբ նշանակվող պատիժների տեսակներն ու դրանց նշանակման կարգը: Ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխությունից հետո կոլեկտիվ միավորումների քրեական պատասխանատվությունը պաշտոնապես վերացվեց, և 1810 թ. քրեական օրենսգիրքն այլևս ոչ մի նորմ չէր պարունակում իրավաբանական անձանց պատասխանատվության վերաբերյալ: Սակայն, իրավաբանական անձանց պատասխանատվությունը դրան զուգահեռ նախատեսվում էր քրեաիրավական

<sup>3</sup> Այսպես, օրինակ, ԳԴԴ-ում արարքները բաժանվում են հանցագործությունների և զանցանքների (տես՝ Уголовный кодекс ФРГ, -М., 2000. С. 15.; Серебрянникова Л. П. Основные черты Уголовного кодекса ФРГ. - М., 1999. С. 13), Ֆրանսիայում արարքները բաժանվում են հանցագործությունների, զանցանքների և խախտումների, ընդ որում՝ նրանցից յուրաքանչյուրն ունի իր ենթատեսակները, (տես՝ Преступление и наказание в Англии, США, Франции, ФРГ, Японии: Общая часть уголовного права, - М., 1991, С. 57), ԱՄՆ-ում արարքները բաժանվում են հանցագործությունների և խախտումների: Վերջիններս թեթև արարքներ են, և ըստ Նյու-Յորքի նահանգի Քրեական օրենսգրքի առաջացնում են միայն տուգանքի նշանակում կամ կալանք 5-օրյա ժամկետով (տես՝ նույն տեղը՝ էջ 138-139): Ճապոնիայում քրեորեն պատժվող արարքները բաժանվում են ծանրի, ոչ մեծ ծանրության և խախտումների (տես՝ նույն տեղը՝ էջ 228): Վերջին 2 օրինակներում խախտումներն անալոգիայի կիրառմամբ կարելի է դիտարկել որպես վարչական իրավախախտումներ, քանզի այդ խախտումների համար պատիժը, ի տարբերություն արարքների մյուս տեսակների, նշանակվում է արտադատական, այսինքն՝ վարչական կարգով:

<sup>4</sup> Տես՝ ECHR case of *Öztürk v. Germany*, (application no. 8544/79, 21 February 1984, Strasbourg), p. 21, § 49,

<sup>5</sup> Տես՝ ECHR case of *Escoubet v. Belgium* (application no. 26780/95, 28 October 1999, Strasbourg), ECHR case of *Engel and others v. Netherlands* (application no. 5100/71; 5101/71; 5102/71; 5354/72; 5370/72, 8 June 1976, Strasbourg) p. 34-35, § 82-83, ECHR case of *Sergey Zolotukhin v. Russia* (application no. 14939/03, 10 February 2009, Strasbourg), ECHR case of *Lanndy v. Slovakia*, (application no. 53371/99, 16 November 2004, Strasbourg), ECHR case of *Lutz v. Germany*, (application no. 9912/82, 25 August 1987, Strasbourg) p. 23, § 55, ECHR case of *Ezeh and Connors v. the United Kingdom* (application no. 39665/98 and 40086/98, 9 October 2003, Strasbourg) § 82, ECHR case of *Weber v. Switzerland*, (application no. 11034/84, 22 May 1990, Strasbourg) p. 18, § 33 and 34, ECHR case of *Demicoli v. Malta*, (application no. 13057/87, 27 August 1991, Strasbourg) p. 17, § 34, ECHR case of *Ravnsborg v. Sweden*, (application no. 14220/88, 23 March 1994, Strasbourg) § 38, ECHR case of *Deweer v. Belgium*, (application no. 6903/75, 27 February 1980, Strasbourg) p. 22, § 42, and p. 24, § 46, ECHR case of *Eckle v. Germany*, (application no. 8130/78, 15 July 1982, Strasbourg) p. 33, § 73, և այլն:

<sup>6</sup> Տես՝ Уголовное право зарубежных государств. Общая часть / И. Д. Козочкин. - М., 2001. С. 309:

շատ այլ ակտերով, օրինակ՝ 1905 թ. դեկտեմբերի 9-ի «Եկեղեցին պետությունից անջատելու մասին» Օրենքով, 1934 թ. հուլիսի 19-ի «Ծովային առևտրի մասին» Օրենքով և այլն, որոնք հետագայում հանդիսացան իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի հիմնաքարը և արդեն, Ֆրանսիայի 1992 թվականի նոր քրեական օրենսգրքում<sup>7</sup> որպես պատասխանատվության սուբյեկտ ամրագրվեցին նաև իրավաբանական անձինք:

Ոչ պակաս դժվար է եղել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության սահմանման ուղին ընդհանուր իրավունքի ընտանիքին պատկանող երկրներում (օրինակ՝ Անգլիայում, Կանադայում, ԱՄՆ-ում)<sup>8</sup>: 1903 թ. ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից էլկինսի ակտի<sup>9</sup> ընդունումից հետո աշխատողի (կազմակերպության պաշտոնատար անձի) կողմից կատարված գործողությունները (անգործությունը), որոնք նա կատարել էր իր աշխատանքային պարտականությունները կատարելու ժամանակ, համարվում էին կազմակերպության կողմից կատարված: Ընդ որում՝ 1909 թ. ԱՄՆ-ի Գերագույն դատարանն իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը ճանաչեց երկրի հիմնական օրենքին չհակասող: Այնուհետև, կորպորացիաներին քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը ընդլայնվեց: «Աշխատանքային պարտականությունների շրջանակում» կատարված գործողությունները սկսեցին ներառել նաև կազմակերպության աշխատակցի կողմից կատարված

ցանկացած անօրինական գործողություն, որոնք ընդհանուր առմամբ կարող էին մեկնաբանվել որպես ի օգուտ կազմակերպությանը նպատակաուղղված գործողություններ<sup>10</sup>:

Որպես կանոն, իրավաբանական անձինք հանրային պատասխանատվության են ենթարկվում այնպիսի իրավախախտումների համար, որոնք ծագում են տնտեսական, հարկային և մաքսային ոլորտներում, այլ կերպ ասած՝ բոլոր այն ոլորտներում, որոնց հետ կապված է իրավաբանական անձանց գործունեությունը, իսկ մի շարք երկրներում իրավաբանական անձինք քրեական պատասխանատվության են ենթարկվում այդ երկրների համապատասխան օրենսդրությամբ սահմանված բոլոր տեսակի հանցագործությունների համար: Օրինակ՝ Ֆրանսիայի քրեական օրենսգրքում իրավաբանական անձինք հանդիսանում են այնպիսի հանցագործությունների սուբյեկտ, ինչպիսիք են սպանությունը, թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, ահաբեկչությունը, կավատությունը և այլն<sup>11</sup>: Այսպես, օրինակ, 1976 թվականին իրավաբանական անձանց քրեական բոլոր տեսակի հանցագործությունների համար պատասխանատվություն սահմանվեց Նիդերլանդներում (1950 թվականից մինչև 1976 թվականը այն սահմանված էր միայն գործարարական ոլորտում կատարված հանցանքների համար)<sup>12</sup>, 1982 թվականին՝ Պորտուգալիայում, 1995 թվականին՝ Ֆինլանդիայում, իսկ 1997 թվականին՝ Չինաստանում<sup>13</sup>, Ավստրալիայի քրեական օրենսգիրքը նույնպես սահմանում է իրավաբա-

<sup>7</sup> Տես՝ Ֆրանսիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 1992թ. հուլիսի 22-ին), <http://www.legislationline.org/ru/documents/section/criminal-codes>.

<sup>8</sup> Տես՝ Никифоров Б. С., Решетников Ф. М. Современное американское уголовное право. —М., 1990. С. 53.

<sup>9</sup> Տես՝ “Corporate criminal liability. National and international responses” by Markus Wagner, Background paper for the international society for the reform of criminal law 13<sup>th</sup> international conference commercial and financial fraud. Malta, 8-12 July, 1999., p.3:

<sup>10</sup> Տես՝ “Corporate criminal liability” discussion paper, March 2002, Ministry of Justice, Canada, հղումն ըստ համացանցի՝ <http://www.justice.gc.ca/eng/dept-min/pub/jhr-jdp/dp-dt/intro.html>, United States v. Basic Construction Co., 711 F.2d 570, 573 (4th Cir.), cert. denied, 462 U.S. 954 (1983); հղումն ըստ համացանցի՝ <http://law.justia.com/cases/federal/appellate-courts/F2/711/570/302619/>:

<sup>11</sup> Տես՝ Крылова Н. Е., Уголовная ответственность юридических лиц во Франции: предпосылки возникновения и основные черты // Вестник МГУ. Серия 11. Право. 1998. № 3, С. 70;

<sup>12</sup> Տես՝ Նիդերլանդների քրեական օրենսգիրք (ընդունվել է 1881 թ. մարտի 3-ին), [www.lexadin.nl/wlg/legis/nofr/eur/lxwened.htm](http://www.lexadin.nl/wlg/legis/nofr/eur/lxwened.htm)

<sup>13</sup> Տես՝ Չինաստանի ժողովրդավարական Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 1997թ. մարտի 14-ին) <http://www.lexadin.nl/wlg/legis/nofr/oeur/lxwechi.htm>, Պորտուգալիայի քրեական օրենսգիրք (ընդունվել է 1982) <http://www.lexadin.nl/wlg/legis/nofr/eur/lxwepor.htm>, Ֆինլանդիայի քրեական օրենսգիրք, (ընդունվել է 1889) <http://www.legislationline.org/ru/documents/section/criminal-codes>,

նական անձանց քրեական պատասխանատվությունը բոլոր տեսակի հանցագործությունների համար<sup>14</sup>: Հանցագործությունների տեսակների ցանկը, որոնց համար կորպորացիաները ենթարկվում էին հանրային պատասխանատվության, աստիճանաբար ընդլայնվում էր:

Վարչական պատասխանատվության ինստիտուտը ներկայումս կիրառում ունի որոշ նախկին հետխորհրդային պետություններում, սակայն, գրեթե բոլոր պետություններում, որոշ բացառություններով, այդ ինստիտուտը ենթարկվել է եական բարեփոխումների, ամբողջովին համապատասխանեցվել է միջազգային իրավական չափանիշներին և գրեթե ընդհանուր ոչինչ չունի այն հիմնադրույթների հետ, որոնք ամրագրված են, մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գործող օրենսգրքում:

Այսպես, չնայած ռուսական գրականության մեջ գերիշխող է այն տեսակետը, որ իրավաբանական անձանց որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ օրենսգրքում ամրագրելն աննպատակահարմար է<sup>15</sup>, այնուամենայնիվ, ՌԴ-նոր օրենսգրքում իրավաբանական անձինք նախատեսվեցին վարչական պատասխանատվության սուբյեկտների շարքում<sup>16</sup>: Հիրավի, այսօր արդեն, Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՕ) զեկույցի պահանջների հա-

մապատասխան մշակվել է «Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՌԴ օրենքի նախագիծ<sup>17</sup>, որով իրավաբանական անձինք սահմանվել են որպես քրեական պատասխանատվության սուբյեկտ, ինչպես նաև սահմանվել են նրանց նկատմամբ կիրառվող պատժի տեսակները և հասկացությունը, իրավաբանական անձանց դատվածությունը կարգավորող դրույթներ: Հետաքրքրական է, որ ԳՐԵԿՕ-ն համարել է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն ամրագրելու իր առաջարկությունը ՌԴ կողմից չկատարված, այն դեպքում, երբ ՌԴ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ արդեն իսկ սահմանված է իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտը: Ի դեպ այս նույն հիմնավորմամբ է նաև 2008 թվականի հունիսի 13-ի ԳՐԵԿՕ-ի Հայաստանին նվիրված զեկույցի<sup>18</sup> նույնաբովանդակ պահանջը չի կատարել Հայաստանի Հանրապետությունը:

Իրավաբանական անձինք որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ հանդես են գալիս նաև ԱՊՀ մի շարք երկրների վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ՝ Լատվիայի, Սլովակիայի, Ղազախստանի, Բելառուսի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Ադրբեջանի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ<sup>19</sup>: Էստո-

<sup>14</sup> Stu՝ Уголовный кодекс Австралии 1995 г., (ч.2 ст.12.1 раздела 12 части 2.5 «Уголовная ответственность корпораций») /И. Д. Козочкин, Е. Н. Трнкоз. - СПб., 2002. С. 89.

<sup>15</sup> Stu՝ Сорокин В. Д. О двух тенденциях, разрушающих целостность института административной ответственности //Правоведение. 1999. №1.

<sup>16</sup> Stu՝ Ռուսաստանի Դաշնության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրք (ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 20-ին ( 2007թ. հուլիսի 24-ի փոփոխություններով և լրացումներով), 2.10-րդ հոդված:

<sup>17</sup> Stu՝ «Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքի նախագիծ, 18.02.2011, հղումն ըստ համացանցի՝ <http://www.forbes.ru/ekonomika-opinion/vlast/63584-yurlitso-pod-sledstviem>:

<sup>18</sup> Stu՝ “Compliance report on Armenia” Greco RC-I/II (2008) 3E, Strasbourg, 13 June 2008, Recommendation xxii, հղումն ըստ համացանցի՝ [http:// www.coe.int/greco](http://www.coe.int/greco):

<sup>19</sup> Stu՝ Լատվիայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրք (ընդունվել է 1984թ. դեկտեմբերի 7-ին), Սլովակիայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրք (ընդունվել է 2008թ. հոկտեմբերի 24-ին), Ղազախստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրք (ընդունվել է 2001թ. հունվարի 30-ին), Բելառուսի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրք (ընդունվել է 2002թ. դեկտեմբերի 17-ին), Ղրղզստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրք (ընդունվել է 1998թ. օգոստոսի 4-ին), Տաջիկստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրք (ընդունվել է 1991թ. օգոստոսի 31-ին), Ադրբեջանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրք (ընդունվել է 2000թ. հունիսի 11-ին), Վրաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրք (ընդունվել է 1984թ. դեկտեմբերի 15-ին),

նիան կարելի է ասել հետևել է եվրոպական մի շարք երկրների փորձին (օրինակ՝ Ֆրանսիայի), և ընդունել է մեկ միասնական ակտ, որով կարգավորված են ինչպես՝ հանցագործությունները, այնպես էլ զանցանքները, և իրավաբանական անձինք այդ ակտում ամրագրված են որպես պատասխանատվության սուբյեկտ: Փաստորեն, նախկին խորհրդային երկրներից, թերևս միայն Ուկրաինայի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերում իրավաբանական անձինք որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ ամրագրված չեն<sup>20</sup>: Իսկ ինչ վերաբերում է եվրոպական երկրներին, ապա, ինչպես արդեն նշել ենք, վարչական պատասխանատվությունը խորհրդային ինստիտուտ է և շատ քիչ թվով եվրոպական պետություններ ունեն այդ ոլորտը կարգավորող իրավական ակտեր: Այսպես, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվություն սահմանված է Բուլղարիայի<sup>21</sup>, Իտալիայի<sup>22</sup>, Գերմանիայի<sup>23</sup>, Ավստրիայի<sup>24</sup>, Մակեդոնիայի<sup>25</sup>, Սլովենիայի<sup>26</sup>, Սլովակիայի<sup>27</sup>, Չեխիայի<sup>28</sup>, Խորվաթիայի<sup>29</sup>, Պորտուգալիայի<sup>30</sup>, Զինաստանի<sup>31</sup> օրենսդրությամբ:

Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի սահմանումը և զարգացումը հայրենա-

կան վարչական իրավունքում կարելի է դիտարկել նրա օրենսդրության ձևավորման և կատարելագործման չորս փուլերի հարթության վրա: Այսպես, առաջին փուլը՝ 1917-1961թթ. ընկած ժամանակաշրջանն է, երկրորդ փուլը՝ 1961-1981թթ., երրորդ փուլը՝ 1981-1991թթ., և չորրորդ փուլը՝ 1991 թվականից մինչև մեր օրերը ընկած ժամանակաշրջանը: Վերջին ժամանակաշրջանը կարելի է ներկայացնել որպես իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության օրենսդրության զարգացման հիմնական փուլ, որը բնութագրվում է վարչական պատասխանատվության սուբյեկտների վարչական պատասխանատվության նորմերի առավել բուռն և դինամիկ օրենսդրական առանձնացվածությամբ: Դժվար չէ նկատել, որ գործող իրավական ակտերի մեծամասնությունը, որոնք սահմանում են իրավաբանական անձանց վարչական պատասխանատվություն, սկսել են ընդունվել 1991 թ-ից մինչև մեր օրերը ընկած ժամանակահատվածում, ընդ որում, հենց այս ժամանակաշրջանում էլ սկսվեցին և դեռ շարունակվում են վարչական պատասխանատվության օրենսդրության բարեփոխումները:

Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության օրենսդրության զարգացման առաջին փուլը՝ առաջին հերթին կապված է ձեռնարկատիրական գոր-

<sup>20</sup> Տես՝ Թուրքմենստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1984թ. դեկտեմբերի 17-ին), Ուզբեկստանի Հանրապետության վարչական պատասխանատվության մասին օրենսգիրք (ընդունվել է 1994թ. սեպտեմբերի 22-ին), Ուկրաինայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (ընդունվել է 1984թ. դեկտեմբերի 7-ին), Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք (ընդունվել է 1985թ. դեկտեմբերի 6-ին),

<sup>21</sup> Տես՝ Բուլղարիայի Հանրապետության վարչական իրավախախտումների և վարչական տույժերի մասին օրենսգիրք (ընդունվել է 1969թ. նոյեմբերի 28-ին), 4-րդ գլուխ:

<sup>22</sup> Տես՝ Իտալիայի Հանրապետության օրենսդրական դեկրետ թիվ 231 (ընդունվել է 2001թ. հունիս 8-ին), Legislative Decree No. 231 of June 8th, 2001 (the "Decree") of Italy:

<sup>23</sup> Տես՝ «Վարչական իրավախախտումների մասին» Գերմանիայի Դաշնության օրենք, (ընդունվել է 1987թ. փետրվարի 19-ին), հղումն ըստ համացանցի՝ <http://www.aufenthaltstitel.de/owig.html#9>:

<sup>24</sup> Տես՝ Ավստրիայի Հանրապետության վարչական պատիժների մասին օրենսգիրք (ընդունվել է 1991թ.),

<sup>25</sup> Տես՝ Մակեդոնիայի Հանրապետության զանցանքների մասին օրենսգիրք, (ընդունվել է 1997թ.),

<sup>26</sup> Տես՝ «Մանր իրավախախտումների մասին» Սլովենիայի Հանրապետության օրենք, (ընդունվել է 1983թ. հուլիսի 21-ին),

<sup>27</sup> Տես՝ «Մանր իրավախախտումների մասին» Սլովակիայի Հանրապետության օրենք, (ընդունվել է 1990),

<sup>28</sup> Տես՝ «Ձանցանքների մասին» Չեխիայի Հանրապետության օրենք, (ընդունվել է 1990),

<sup>29</sup> Տես՝ Խորվաթիայի Հանրապետության զանցանքների մասին օրենսգիրք, (ընդունվել է 2008թ. հունվարի 1-ին),

<sup>30</sup> Տես՝ Պորտուգալիայի օրենսդրական դեկրետ թիվ 433/82 (ընդունվել է 1982թ.)

<sup>31</sup> Տես՝ Զինաստանի ժողովրդավարական Հանրապետության վարչական պատիժների վերաբերյալ օրենսգիրք, (ընդունվել է 1996թ. հոկտեմբերի 1-ին),

ծունեության ազատության սահմանման հետ: Այս փուլում Հայաստանի խորհուրդը 1918 թվականի դեկտեմբերի 6-ին օրենսդիր հանձնաժողովի առաջարկությամբ ընդունել էր «Նախկին Ռուսական Կայսրության օրենքները ՀՀ տարածքի վրա գործադրման մասին» օրենքը, համաձայն որի ՀՀ տարածքում ժամանակավորապես գործադրվելու էին նախկին Ռուսական Կայսրության օրենքները՝ ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի, Սեյմի, Հայաստանի խորհրդի փոփոխություններով և լրացումներով<sup>32</sup>: 1921 թվականի հուլիսից Հայաստանում ՌԽՖՍՀ-ի օրինակով ևս կատարվեց անցում «Նոր տնտեսական քաղաքականությանը» (ՆԷԱ): Վերջինիս սահմանման պայմաններում իրավաբանական անձանց համար վարչական պատասխանատվություն սահմանելը ձեռք բերեց առանձնահատուկ նշանակություն և անհրաժեշտություն: Այդ ժամանակաշրջանում հայրենական իրավունքը դեռ չէր սահմանել վարչական պատասխանատվության հասկացությունը, վարչական հարկադրանքի միջոցները, ուստի պարտադիր կարգադրագրերի խախտման համար վարչական տույժեր կիրառելու անհրաժեշտության դեպքում կիրառվում էին վարչական հարկադրանքի բոլոր միջոցները: Մինչև նախկին ԽՍՀ Միության Գերագույն խորհրդի նախագահության 1961թ. հունիսի 21-ի «Վարչական կարգով նշանակվող տուգանքների հետագա սահմանափակման մասին» հրամանագիրը, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվություն գոյություն ուներ քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա քաղաքացիների և պաշտոնատար անձանց պատասխանատվության հետ միաժամանակ: Իրականում, ինչպես նշում էին այդ ժամանակաշրջանի գիտնականները, մինչ ԽՍՀ Միության Գերագույն խորհրդի նախագահության 1961թ. հունիսի 21-ի «Վարչական կարգով նշանակվող տուգանքների հե-

տագա սահմանափակման մասին» հրամանագիրը. թույլատրվում էր իրավաբանական անձանց նկատմամբ նշանակել տուգանք որպես վարչական տույժ<sup>33</sup>, չնայած որ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության վերաբերյալ նույն ժամանակաշրջանի այլ գիտնականների աշխատություններում բավարար որոշակիությամբ չի նշվում այդ ինստիտուտի գոյության մասին: Այսպիսով, վարչական իրավունքի զարգացման, և, մասնավորապես, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության զարգացման 1-ին փուլում կազմակերպությունները հանդես էին գալիս որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ, սակայն վարչական պատասխանատվության օրենսդրության զարգացման և կայացման հետագա, այսինքն՝ 2-րդ փուլը, բնութագրվեց իրավաբանական անձանց նկատմամբ վարչական տույժերի նշանակման և կիրառման սահմանափակմամբ:

Սոցիալիստական տնտեսական պայմաններում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտը ցույց տվեց իր անկիրառելիությունը, քանի որ պետական հիմնարկները, իրավախախտումներ կանխարգելող միջոցառումներ իրականացնելու և հետագայում նոր իրավախախտումների կատարումը կանխելու նպատակով պայմաններ ստեղծելու փոխարեն, սկսեցին վարչական տուգանքների համար վճարվող գումարները իրենց ծախսերի նախահաշվում նախապես պլանավորել և արտադրվող ապրանքի ինքնարժեքի հիմքում դնել: Սա հենց հիմնական պատճառն էր հանդիսացավ, որ 1961 թվականի հուլիսի 21-ին ԽՍՀ Միության Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունեց «Վարչական կարգով նշանակվող տուգանքների հետագա սահմանափակման մասին» հրամանագիրը, որով կազմակերպություններին վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը վերացվեց<sup>34</sup>: Նման մո-

<sup>32</sup> Տե՛ս՝ Ա.Գ. Վաղարշյան «Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր», ԵՊՀ, Երևան 2003, էջ 22:

<sup>33</sup> Տե՛ս՝ Комментарий к законодательству о штрафах, налагаемых в административном порядке, под ред. Власова В.А., М., 1968, стр. 61., Տե՛ս՝ Студеникин С.С, Власов В.А., Евтихий И.И., Советское административное право, М., 1950, стр. 173, Советское административное право, М.,Госюриздат, 1949.

<sup>34</sup> Տե՛ս՝ Ведомости ВС СССР. 1961. №2 35. Ст. 386. հղումն ըստ համացանցի՝ <http://www.bestpravo.ru/ussr/index.htm>

տեցումն անընդունելի էր այնքանով, որ այլ անձանց՝ հիմնականում ենթակա աշխատողների, անգործության համար պատասխանատվության էր ենթարկվում միայն ղեկավար պաշտոնատար անձը, իսկ անմիջական իրավախախտողը խուսափում էր պատասխանատվությունից: Ի դեպ, Գերագույն խորհրդի նախագահությունն 1962 թվականի մարտի 3-ին ընդունեց «Վարչական կարգով նշանակվող տուգանքների հետագա սահմանափակման մասին» հրամանագիրը, որը կրկնեց նախորդ՝ վերոհիշյալ հրամանագրի դրույթները<sup>35</sup>:

Այս հրամանագրերի ընդունումից հետո նրանցում ամրագրված դրույթները թույլ տվեցին արձանագրելու խորհրդային Միությունում այդ ժամանակաշրջանում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի օրենսդրական վերացման մասին: Չնայած դրան՝ տուգանքների կիրառումը իրավաբանական անձանց նկատմամբ դեռ որոշակի կիրառություն ուներ<sup>36</sup>: Այս ժամանակաշրջանում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտը չէր ընդունվում, քանի որ նախ՝ գործում էին բացառապես պետական ձեռնարկություններ, որոնց ֆինանսական միջոցները ներառված էին միևնույն պետական բյուջեի համակարգում, ուստի իրավաբանական անձանց նկատմամբ տուգանք նշանակելը պարզապես արհեստական և սոսկ քարոզչական լծակի նշանակություն ուներ, և երկրորդ՝ ընդունված էր այն մոտեցումը, որ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու դեպքում իջնում է պաշտոնատար անձանց պատասխանատվության մակարդակը, ձևավորվում է վերջիններիս՝ որպես իրավախախտման անմիջական մեղավորների անպատժելիության մթնոլորտ: Խորհրդային իրավունքում վարչական

պատասխանատվությունը ընկալվում էր էությանը առավել մոտ կանգնած քրեական պատասխանատվությանը, և գիտնականները գտնում էին, որ իրավաբանական անձինք չեն կարող լինել ինչպես քրեական պատասխանատվության, այնպես էլ՝ վարչական պատասխանատվության սուբյեկտ: Իսկ այդ ժամանակաշրջանում կիրառվող վարչական տուգանքները տնտեսական իրավունքի հայեցակարգի կողմնակիցները համարում էին տնտեսական տուգանքներ և գտնում էին, որ հենց տնտեսական օրենսդրությունն է պարունակում համապատասխան սանկցիաներ, որոնք նախատեսում են տնտեսվարող սուբյեկտների գույքային պատասխանատվություն պետության առաջ<sup>37</sup>:

Օրենսդիրը արգելեց վարչական տուգանքի կիրառումը կազմակերպությունների նկատմամբ, սակայն տույժերի մյուս տեսակների կիրառումը օրենսդրական այդ ակտով չարգելվեցին: Եվ, իհարկե, պատճառը չէր կարող լինել այն, որ այդ ժամանակաշրջանում որպես վարչական տույժի տեսակ հանդես էր գալիս միայն վարչական տուգանքը: Այդ ժամանակաշրջանի իրավաբանական գրականության մեջ նշված էր. «վարչական պատասխանատվությունը չի կարելի բնորոշել միայն որպես պատասխանատվություն տուգանքի ձևով: Օրենսդիրը սահմանել է կոլեկտիվների նկատմամբ (*իրավաբանական անձանց-նշումն ըստ Թ.Շ*) նաև այլ պատժիչ սանկցիաներ, որոնք դրամական բնույթ չունեն (բռնագրավում, իրավունքից զրկում և այլն)»<sup>38</sup>: Եվ իրականում վարչական օրենսդրությունում տուգանքների հետ միաժամանակ սահմանում էին նաև վարչական տույժերի այլ տեսակներ, օրինակ՝ նախազգուշացում, հատուկ իրավունքից զրկում, ինչպես նաև արգելված առարկաների բռնագրավում<sup>39</sup>:

Այսպիսով, կազմակերպությունների նկատմամբ վարչական տույժերի մյուս

<sup>35</sup> Ств. Ведомости ВС РСФСР, 1962, №9, ст. 121. հղումն ըստ համացանցի՝ <http://www.bestpravo.ru/ussr/index.htm>

<sup>36</sup>Ств. Ведомости ВС СССР, 1955, №2, ст.46, Ведомости ВС РСФСР, 1959, №14, ст. 24, հղումն ըստ համացանցի՝ <http://www.bestpravo.ru/ussr/index.htm>

<sup>37</sup> Ств. Колесниченко Ю. Ю. Административная ответственность юридических лиц, автореф. дисс. к.ю.н., М., 2002, с 21-22:

<sup>38</sup> Ств. Студеникина М.С., Законодательство об административной ответственности и проблемы его кодификации, автореф. дисс.к.ю.н., М, 1968, стр.10.

<sup>39</sup> Ств. Новоселов В.И., Административная ответственность юридических лиц, Сов. юстиция, №23, 1981, стр.11.

տեսակները դեռ շարունակվում էին կիրառվել նույնիսկ վերոհիշյալ հրամանագրերի ընդունումից հետո: Եվ հատկանշական է, որ այդ ժամանակաշրջանի իրավական միտքը կողմ էր իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության սահմանմանը<sup>40</sup>:

Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի անհրաժեշտության և օրենսդրական ամրագրմամբ է պայմանավորված այս ինստիտուտի զարգացման 3-րդ փուլը: Վարչական օրենսդրության զարգացման և, մասնավորապես, այդ ժամակաշրջանում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության անուղղակի օրենսդրական ամրագրման արդյունք հանդիսացավ «ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության հիմունքներն ուժի մեջ մտնելու կարգի մասին»<sup>41</sup> ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1981 թ. փետրվարի 19-ի հրամանագիրը, որի 1-ին հոդվածում սահմանված էր, որ հիմունքների ուժի մեջ մտնելը չի տարածվում իրավաբանական անձանց վարչական կարգով պատասխանատվության ենթարկելու հարցերը կարգավորող գործող օրենսդրական ակտերի վրա: Հարկ ենք համարում նշել, որ վերոհիշյալ հոդվածում ամրագրված դրույթը, բնավ որևէ հստակություն չմտցրեց իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության առումով, սակայն սկզբունքային նշանակություն ունեցավ իրավաբանական անձանց որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ ճանաչելու հիմնահարցում և իրավաբան- գիտնականների կողմից իրենց աշխատություններում իրավաբանական անձանց որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ ա-

ռանձնացնելու տեսանկյունից:

Հարկ է նկատել, որ վերը նշված 1961 և 1962 թթ. հրամանագրերով սահմանված տուգանքների նշանակման արգելքը, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության հիմունքներն ուժի մեջ մտնելուց հետո միանգամայն այլ կերպ էր մեկնաբանվում: Իրավաբանական անձանց նկատմամբ «...վարչական իրավախախտումների համար կիրառվող վարչական տույժի տեսակներից բացի, կարող են կիրառվել վարչական հարկադրանքի այլ տեսակներ, մասնավորապես՝ վարչական-վերականգնման միջոցներ՝ ուղղված խախտված իրավակարգի վերականգնմանը: Այդպիսի միջոցներից հայտնի են ինքնակամ կառուցված շինությունները քանդելը, ձեռնարկության գործունեության դադարեցումը և այլն<sup>42</sup>»:

Ի դեպ, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության հիմունքներն ուժի մեջ մտնելուց հետո, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ընդունած օրենսդրական ակտերում դրույթներ էին պարունակվում կազմակերպությունների վարչական պատասխանատվության վերաբերյալ: Փաստորեն, ինչպես հետևում է վերոշարադրյալից, խորհրդային վարչական իրավունքում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնահարցի շուրջ միասնական տեսակետ չկար, նույնիսկ կասկածի տակ էր դրվում հիշյալ ինստիտուտի գոյության անհրաժեշտությունը, ու չնայած վերոհիշյալ օրենսդրական ակտերի առկայությանը, որոնցում սահմանված էր կազմակերպությունների վարչական պատասխանատվությունը, այնուամենայնիվ, խորհրդային վարչական իրավունքի տեսությունում գերակշռող էր այն տեսակետը, ըստ որի՝ վարչական պատասխա-

<sup>40</sup>Stu` Лунев А.Е., Проблемы административной ответственности, Соц.законность, 1972, № 5, стр.64:

<sup>41</sup>Stu` О порядке введения в действие Основ законодательства СССР и союзных республик об административных правонарушениях: Указ Президиума Верховного Совета СССР от 19.02.1981// Ведомости Верховного Совета СССР,1981 год, № 8, ст. 178.

<sup>42</sup>Stu` Новоселов В.И., Административная ответственность юридических лиц, //Советская юстиция-1981. - №23. стр.11, Матвеев С. В. Субъекты ответственности за совершение административных правонарушений //Советское государство и право. 1990. №5. С. 80- 85

նատվության սուբյեկտ կարող է լինել միայն ֆիզիկական անձը<sup>43</sup>: Այս ոչ միասնական հայեցակարգի պայմաններում վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության հիմունքների հիման վրա խորհրդային երկրները սկսեցին ընդունել վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքեր:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվեց 1985 թ. դեկտեմբերի 6-ին և ուժի մեջ մտավ 1986 թ. հունիսի 1-ին: Ընդ որում՝ 1984 թ. մինչև 1991 թ. ընկած ժամանակահատվածում օրենսդրորեն որևէ նոր նորմ չսահմանվեց, առ այն՝ որ իրավաբանական անձինք ենթարկվեին վարչական պատասխանատվության:

Խորհրդային իրավական համակարգում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության նկատմամբ զգուշավորությունը թելադրված էր հիմնականում սեփականության միայն մեկ ձևի գերիշխանությամբ, և ինչպես արդեն նշել ենք, գործում էին հիմնականում պետական ձեռնարկություններ: Ի վերջո միայն մասնավոր սեկտորի սահմանափակ կիրառումը հիմք տվեց վերանայելու իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության վերաբերյալ պատկերացումները և քաղաքականությունը:

Վերակառուցման անխուսափելի հետևանքը խորհրդային հանրապետությունների անկախացման գործընթացն էր: Անկախ պետությունների համագործակցության ստեղծման մասին 1991 թ. դեկտեմբերի 21-ի համաձայնագրի վավերացումից և հայկական ինքնիշխան պետականության ծանաչումից հետո դադարեցին գործել օրենսդրական նախկին բոլոր դրույթները, որոնք էլնում էին խորհրդային նախկին համակարգի գաղափարներից և սկզբունքներից, ու իրավաստեղծ

գործընթացը թևակոխեց վերը նշված 4-րդ փուլը՝ 1991 թ. մինչև մեր օրերը: Հարկ է նկատել, որ անկախացման գործընթացից հետո հետխորհրդային երկրներում մշակվեցին միջազգային չափանիշներին համահունչ վարչական իրավախախտումների ոլորտը կարգավորող օրենսգրքեր, և, ինչպես արդեն նշել ենք, մի շարք հետխորհրդային պետություններում դեռևս պահպանվել են մոդելային օրենսգրքի հիման վրա ընդունված վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերը, այնուամենայնիվ, նույնիսկ այդ օրենսգրքերում, օրինակ՝ Լատվիայի 1984 թ. դեկտեմբերի 7-ին ընդունված վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում, իրավաբանական անձինք արդեն իսկ ամրագրվել են որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ: Իսկ Հայաստանի Հանրապետությունը, թերևս այն եզակի երկրներից է (ինչպես և Ուկրաինան, Լիտվան, Թուրքմենիստանը, Վրաստանը), որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում, մասնավորապես՝ վերջինիս շուրջ 26 տարվա գործողության ընթացքում շուրջ 100 օրենսդրական ակտերով՝ ենթարկվելով փոփոխությունների և լրացումների, առ այսօր՝ իրավաբանական անձինք որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ չեն ամրագրվել: Հետաքրքարական է, որ դատաիրավական բարեփոխումների հսկայական փուլ անցած Հայաստանի Հանրապետությունում, այդպես էլ այդ հիմնահարցը վարչական օրենսդրությամբ դեռևս չկարգավորվեց և օրենսդրության մեջ այս տեսանկյունից հստակություն չմտցվեց:

Մասնավորապես, անցման ժամանակաշրջանում սա այն եզակի հիմնարար օրենսդրական ակտերից է, որը երբևէ համակարգված քննարկման առարկա չի դարձել, ու ներկայումս բազմաթիվ փոփոխությունների արդյունքում գործող Վար-

<sup>43</sup> Stu՝ Козлов Ю.М. Советское административное право. - М., Знание, 1984. С. 157; Коваль Л. В. Административно-деликтное отношение.-Киев, 1979. с. 118; Якуба О, М. Административная ответственность. - М., 1972. С. 38. Դրան հակառակ այդ ժամանակաշրջանի մի շարք այլ գիտնականներ պաշտպանում էին հակառակ տեսակետը, մասնավորապես՝ Бахрах Д. Н. Советское законодательство об административной ответственности: Учебное пособие /Бахрах Д. Н.; А. А. Ушаков. - Пермь: Пермский Государственный Университет, 1969.- с 97; Галагаи И. А. Административная ответственность в СССР, - Воронеж, 1970. С. 225; Новоселов В. И. Административная ответственность юридических лиц //Советская юстиция. 1981. №23. С. 10; Матвеев С. В. Субъекты ответственности за совершение административных правонарушения //Советское государство и право. 1990. №5, с. 81.



չական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքն առանձնանում է սուր հակասություններով և բացարձակապես չի համապատասխանում արդի իրավական համակարգի թե՛ տեսական և թե՛ գործնական պահանջներին, արդյունքում էլ ոլորտը կանոնակարգող օրենսդրական ակտերում պարբերաբար անխուսափելիորեն կատարվել են տարաբնույթ փոփոխություններ, լրացումներ, ինչպես նաև ընդունվել են նոր օրենսդրական ակտեր: Ընդ որում, վերջիններս չեն բավարարում միասեռ հարաբերությունների կարգավորման միասնականության նվազագույն պահանջները, իսկ հաճախ էլ գտնվում են ակնհայտ հակասության մեջ: Մտահոգող է նաև այն, որ հիշյալ ինստիտուտին նվիրված օրենսդրական ակտերում առկա են բազմաթիվ դրույթներ, որոնք այս կամ այն չափով չեն համապատասխանում նաև միջազգային իրավական չափանիշներին:

Ներկայիս վարչական պատասխանատվության օրենսդրության անկատարության պարագայում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտը բխում է միայն կոնկրետ օրենսդրական ակտերից, որոնցում հստակ չեն սահմանվում նաև այն իրավախախտումները, որոնք հիմք են հանդիսանում դրանց վարչական պատասխանատվության համար: Բնորոշ է նաև այն, որ իրավաբանական անձանց համար վարչական պատասխանատվություն սահմանող օրենսդրական ակտերը դասակարգված են ըստ կառավարման ոլորտների, ինչի արդյունքում կամ դրանք անհարկի կրկնում են միմյանց, կամ պարունակում խնդրահարույց հակասություններ: Հարկ է նկատել, որ օրենսդիրը միասնական մոտեցում չի դրսևորել նաև վարչական պատասխանատվության ենթարկվող սուբյեկտների առումով: Մի շարք օրենսդրական ակտերում որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ հստակ սահմանվում են իրավաբանական անձինք, մյուսներում՝ իրավա-

բանական անձանց պաշտոնատար անձինք, իսկ երրորդ խմբի իրավական ակտերում սուբյեկտների հստակ տարանջատում չկա, այլ բխում է տվյալ օրենսդրական ակտի դրույթներից և իրավակիրառ պրակտիկայում առաջացնում բարդություններ:

Որպես օրենսդրի հակասական մոտեցման և օրենսդրական ամրագրման օրինակ կարելի է դիտարկել նաև ներքոնշյալ օրենսդրական ակտերը: Այսպես, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի<sup>44</sup> 22-րդ հոդվածում ամրագրված է, որ հարկային ոլորտում կատարված կոնկրետ իրավախախտումների համար պատասխանատվությունը կրում են ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների պաշտոնատար անձինք, իսկ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի<sup>45</sup> դրույթներից բխում է, որ նշված օրենքի նորմերի համար պատասխանատվությունը կրում են հարկ վճարողները, որոնք ըստ նույն օրենքի 3-րդ հոդվածի՝ հանդիսանում են ֆիզիկական և իրավաբանական անձինք, նույնիսկ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները: Այնուամենայնիվ, առաջին լուրջ քայլը մեր օրենսդրության մեջ, որն ուղղակիորեն ամրագրեց իրավաբանական անձանց՝ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ, հանդիսացավ 1999 թ. «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքի ընդունումը<sup>46</sup>, որը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց՝ քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը, և օրենքի գործողությունը տարածվում է միայն իրավաբանական անձանց վրա, որոնք աշխատանքներ են իրականացնում քաղաքաշինական գործունեության բնագավառում: Ի դեպ, ներկայումս իրավական ակտերով սահմանված են որոշակի իրավախախտումների համար իրավաբանական անձանց նկատ-

<sup>44</sup> Տես՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքը, (ընդունվել է 1997թ. ապրիլի 14-ին), ՀՀՊՏ 1997.05.20/11:

<sup>45</sup> Տես՝ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքը, (ընդունվել է 1998թ. ապրիլի 7-ին), ՀՀՊՏ 1998.07.27/15(48):

<sup>46</sup> Տես՝ «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքը, (ընդունվել է 1999թ. ապրիլի 28-ին), ՀՀՊՏ 1999.06.11/15(81):

մամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ դրույթներ<sup>47</sup>: Ընդ որում, հարկ է նկատել, որ օրենսդրական ակտերն ընդունվել են անկախացման գործընթացից հետո տարբեր ժամանակահատվածներում, և կոնկրետ հնարավոր չէ առանձնացնել ժամանակաշրջան կամ ժամանակահատված այն կտրվածքով, որ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում իրավաբանական անձինք որպես սուբյեկտ սահմանված չեն, սակայն կոնկրետ ժամանակահատվածից սկսած դրանք որպես սուբյեկտ ամրագրվել են այլ օրենսդրական ակտերում:

Հարկ է նկատել նաև, որ 2005 թվականի նոյեմբերի 27-ին կատարված փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրությունը (2005 թ. փոփոխությամբ) լրացվեց՝ 42.1-րդ հոդվածով, ըստ որի՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությանմբ կիրառելի են դրանց նկատմամբ: Իսկ Սահմանադրության 83.5-րդ և պատասխանատվությանն առնչվող հարաբերությունների կանոնակարգմանը նվիրված մյուս հոդվածները ուղղակիորեն չեն նախատեսում իրավաբանական անձանց պատասխանատվություն, սակայն չեն էլ՝ բացառում: Այսպես, Սահմանադրության 83.5 հոդվածի 2-րդ կետը սահմանում է միայն այն որ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազա-

տությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը սահմանվում են բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով: Սահմանադրորեն ամրագրված պահանջը թելադրված է իրավաբանական անձ ստեղծելուն և ընդհանրապես դրանց գործունեության շրջանակները որևէ կերպ սահմանափակելուն առնչվող հարաբերությունների խիստ մեծ նշանակությամբ:

Թերևս, դատաիրավական բարեփոխումների շրջանակներում, Հանրապետությունում չգիտես ինչու ամեն անգամ շրջանցվել է վարչական պատասխանատվության օրենսդրությունը, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունման անհրաժեշտությունը արդեն դարձել էր ժամանակի հրամայական: Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծ մշակելու կոնկրետ քայլեր ձեռնարկելու սկիզբը, սակայն համընկավ դատաիրավական բարեփոխումների ավարտի հետ, երբ Հայաստանի Հանրապետության վարչապետի 1998 թ. նոյեմբերի 16-ի «Հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 635 որոշմամբ ստեղծվեց այդ օրենսդրության մշակման աշխատանքային խումբը: Հիշյալ աշխատանքային խումբը ձեռնարկեց որոշակի քայլեր վերը նշված նախագծի մշակման ուղղությամբ, սակայն այդպես էլ այս խմբի կողմից նախագիծ չմշակվեց, քանի որ հանձնաժողովի

<sup>47</sup> Տես՝ 2000թ. նոյեմբերի 6-ին ընդունված «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, 2001 թվականի մարտի 7-ին ընդունված «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը, 2003 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքը, 2003 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքը, 2003 թվականի դեկտեմբերի 3-ին ընդունված «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» ՀՀ օրենքը, 2004 թվականի սեպտեմբերի 28-ին ընդունված «Ինկասացիայի մասին» ՀՀ օրենքը, 2005 թ. հուլիսի 8-ին ընդունված «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքը, 2005 թ. հոկտեմբերի 24-ին ընդունված «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքը, 2004 թ. նոյեմբերի 22-ին ընդունված «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքը, 2006 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքը, 2004 թ. նոյեմբերի 24-ին ընդունված «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքը, 2007թ. հոկտեմբերի 11-ին ընդունված «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը, 1996 թվականի հունիսի 30-ին ընդունված «Բանկերի և բանկային գործունեության գործունեության մասին» ՀՀ օրենքը, 2007 թվականի ապրիլի 9-ին ընդունված «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքը, 2008 թվականի մայիսի 26-ին ընդունված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը և այլն:

կազմը ամբողջովին փոխվեց, իսկ աշխատանքները հանձնվեցին Գերմանական տեխնիկական համագործակցության ընկերության (GTZ) հայաստանյան գրասենյակին՝ ստեղծելով աշխատանքային խումբ «ՀՀ-ում ընդհանուր վարչական իրավունքի ռեֆորմ» անվանմամբ: Սակայն վերջինս բավարարվեց սոսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի մշակմամբ, ինչն էլ պարզապես Գերմանայի որոշ օրենսդրական ակտերի թարգմանությունն էր՝ մասնակի տեղայնացմամբ:

Վերջապես, 10 տարի անց Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ 2008 թ. հունվարի 23-ի «Աշխատանքային խումբ ստեղծելու մասին» թիվ ՆԿ-9-Ա կարգադրությամբ ստեղծվեց նոր աշխատանքային խումբ, որին հանձնարարվեց մշակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծ: Շուրջ երկու տարի տևեցին նոր օրենսգրքի մշակման աշխատանքները, որի առանցքային հարցադրումներից հանդիսացավ նախ այն, որ պետք է մշակվեր մեկ միասնական կողմնակցված ակտ՝ ներառելով նաև հարկային, մաքսային, բանկային ոլորտի իրավախախտումները և, անշուշտ, իրավաբանական անձանց՝ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտի ամրագրումը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը և դրան կից 52 այլ օրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենսդրական ակտերի նախագծերը ՀՀ կառավարությունը ներկայացվեց 2010 թ. հունվարին<sup>48</sup>: Մի բան որի իրականացման անհրաժեշտությունը նկատելի էր դարձել դեռևս նախկին աշխատանքային խմբի քննարկումների ժամանակ, առ այն՝ նոր օրենսգիրք կարելի էր մշակել արդեն իսկ ընդունված մի շարք օրենսդրական ակտերում էական փոփոխություններ կատարելու պայմաններում: Ընդ որում՝ ՀՀ կառավարությունը, նիստում քննարկելով ներկայացված նախագիծը, այնուամենայնիվ, հարկային և բանկային ոլորտի իրա-

վախախտումները և դրանց համար նշանակվող տույժերի տեսակները մեկ միասնական Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծում ներառելու շուրջ տարածայնությունների առկայության պայմաններում որոշում կայացրեց հետ վերադարձնել նախագիծը՝ ևս մեկ անգամ շահագրգիռ մարմինների հետ փոխադարձ համաձայնություն ձևավորելու նպատակով: Անշուշտ, ՀՀ արդարադատության նախարարության հետ ծավալած համատեղ քննարկումների արդյունքում՝ հարկային և բանկային ոլորտի իրավախախտումները հանվեցին նախագծից և արդյունքում մեկ միասնական կողմնակցված ակտ ունենալու հայեցակարգային հիմնարար դրույթներից մեկը կարծես թե անկատար մնաց: 2010 թ. սեպտեմբերին ՀՀ արդարադատության նախարարությունը ՀՀ կառավարությունը ներկայացրեց լրամշակված նախագիծը, վերջինս նույն թվականի հոկտեմբերի 26-ին ուղարկեց Ազգային ժողով<sup>49</sup>: 2011 թ. փետրվարի 4-ին Ազգային ժողովի պետաիրավական հանձնաժողովի նիստում, ընդունվեց ի գիտություն, որ ՀՀ կառավարությունը շրջանառությունից հանում է նախագիծը՝ պայմանավորված ՀՀ արդարադատության նախարարությունում կադրային փոփոխությունների հետ ևս մեկ անգամ այն լրամշակելու պատճառաբանությամբ: Ընդ որում, որևէ հիմնավոր պատճառաբանության այդպես էլ չբերվեց և այդ խիստ հրատապ օրենսդրական ակտի ընդունումը անհարկի և անորոշ տևական ժամանակով հետաձգվեց:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գործող օրենսգրքի կիրառման բնագավառում ծագող բազմաթիվ խնդիրները հենց պայմանավորված են նաև իրավաբանական անձի՝ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ օրենսգրքում չնախատեսվելու հանգամանքի հետ, ուստի, կարծում ենք, որ ողջունելի պետք է համարել այն, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ մշակվող նոր օրենսգրքում վարչական պատասխանատվության սուբյեկտների շարքում նա-

<sup>48</sup>Տես՝ հղումն՝ ըստ համացանցի <http://moj.am/am/download.php?view.328>, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=4516&Reading=0>:

<sup>49</sup>Տես՝ հղումն՝ ըստ համացանցի [http://parliament.am/draft\\_history.php?id=4516&lang=arm](http://parliament.am/draft_history.php?id=4516&lang=arm):

խատեսվեցին նաև իրավաբանական անձինք, ինչը կնպաստի օրենսդրության կիրառման բնագավառում առաջացող բազմաթիվ խոչընդոտները բացառելուն, հիմնախնդրի իրավական կարգավորման միջոցով վարչական զանցանքների բացահայտմանը, դրանց կատարմանը նպաստող պայմաններն ու պատճառները վերացնելուն, ինչպես նաև վարչական պատասխանատվության միջոցների ազդեցությունն ու արդյունավետությունը բարձրացնելուն:

Փաստորեն, ինչպես նկատեցինք, քննարկվող հիմնախնդրի իրավաստեղծ գործընթացի պատմական 4-րդ փուլը՝ 1991 թ. մինչև մեր օրերը, նույնիսկ կարելի է բաժանել 2 ենթափուլերի՝ 1991-2008թթ., և 2008 թ. մեր օրերը, երբ արդեն ձևավորվեց Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի մշակման աշխատանքային խումբ, մշակվեց նախագիծը և դեռևս շարունակվում են աշխատանքները վերը նշված նախագծի ընդունման հետ կապված:

Այսպիսով, վերը ներկայացրածը ցույց տվեց Չայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինտիտուտի զարգացումը ժամանակի տեսլականում, հընթացս՝ իրավահամեմատական տեսանկյունից այլ երկրների փորձն ու քննարկվող հիմնախնդրի շուրջ ընդունված օրենսդրությունն ու ձևավորված իրավակիրառ պրակտիկան: Ընդ որում, վերհիշյալ ուսումնասիրությունների արդյունքում կարող ենք նշել, որ նախկին ԽՍՀՄ պետությունների համար իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը անցել է օրենսդրական կարգավորման գրեթե նույն ուղին: Հետագայում, խորհրդային հանրապետությունների անկախացման գործընթացի արդյունքում արդեն հետխորհրդային երկրները սկսեցին ընդունել վարչական իրավախախտումներ-

րի վերաբերյալ նոր օրենսգրքեր, կամ կատարելագործել գործող օրենսգրքերում տեղ գտած դրույթները կատարելով լայնածավալ օրենսդրական փոփոխություններ և լրացումներ, որոնք բավականին հանգամանորեն ներկայացրեցինք վերևում: Հարկ է նշել, որ ուսումնասիրությունները թույլ են տալիս փաստելու, որ քննարկվող հարցադրման կապակցությամբ, ընդհանուր առմամբ, կարծում ենք, երկրները կարելի է բաժանել հիմնականում չորս խմբի, մասնավորապես, առաջին խմբում կարելի է ներառել այնպիսի երկրներ, որոնցում սահմանված է իրավաբանական անձանց համար միայն քրեական պատասխանատվություն, ընդ որում՝ խոսքը վերաբերվում է այն երկրներին<sup>50</sup>, որոնց իրավական համակարգում հստակ տարանջատում չկա քրեական և վարչական արարքների միջև, և բոլոր իրավախախտումները կարգավորվում են մեկ միասնական քրեական օրենսդրությամբ: Երկրորդ խմբում կարելի է ներառել այնպիսի երկրներ<sup>51</sup>, որոնց իրավական համակարգում հստակ տարանջատում կա քրեական և վարչական արարքների միջև, սակայն սահմանված է իրավաբանական անձանց միայն վարչական պատասխանատվության, և այս երկրներից<sup>52</sup> կարելի է առանձնացնել նաև երրորդ խումբը, որոնց օրենսդրությամբ սահմանված է իրավաբանական անձանց և՛ վարչական, և՛ քրեական պատասխանատվություն: Թվով շատ քիչ երկրներից կարելի է առանձնացնել նաև չորրորդ խումբը, որոնցում իրավաբանական անձանց հանրային պատասխանատվության և ոչ մի տեսակ կոնկրետ օրենսդրությամբ ամրագրված չէ<sup>53</sup>: Ընդ որում՝ Չայաստանի Հանրապետությունը այսօր հենց այս խմբի երկրներին է դասվում, քանի դեռ նոր օրենսգրքի նախագիծը Ազգային ժողովի կողմից չի ընդունվել:

<sup>50</sup> Տես՝ օրինակ՝ Ֆրանսիա, Եստոնիա, Նորվեգիա, Ռումինիա, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ավստրալիա և այլն:

<sup>51</sup> Տես՝ օրինակ՝ Ղազախստան, Բելառուս, Ղրղզստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ադրբեջան, Վրաստան, Իտալիա և այլն:

<sup>52</sup> Տես՝ օրինակ՝ Լատվիա, Լիտվա, Մոլդովա, Բուլղարիա, Գերմանիա, Չինաստան, Ավստրիա, Մակեդոնիա, Խորվաթիա, Պորտուգալիա, Ֆինլանդիա, Սլովենիա, Սլովակիա, Չեխիա, Սերբիա, Լեհաստան և այլն:

<sup>53</sup> Տես՝ օրինակ՝ Ուկրաինա, Ուզբեկստան և Չայաստան:

## **ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄԸ ԵՎ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

### **Ներածություն**

Հանցավորության դեմ պայքարում ներպետական միջոցները օտարերկյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հնարավորություններով ու միջոցներով համալրելու անհրաժեշտությունը շատ դեպքերում գրեթե անխուսափելի է: Հատկապես, գիտատեխնիկական զարգացմանը զուգընթաց դրանց նվաճումները քրեական գործերի քննության գործում օգտագործելու անհրաժեշտությունն ու հրատապությունը կարող է պայմանավորված լինել ներպետական դատափորձագիտական մեթոդոլոգիաների և տեխնիկական միջոցների անբավարարությամբ կամ բացակայությամբ, ինչպես նաև փորձաքննության ենթակա նյութերի, օբյեկտների և փաստաթղթերի օտարերկրյա տեղակայվածությամբ:

Սույն աշխատանքի նպատակը օտարերկրյա կամ, այսպես կոչված, միջառամանային փորձագիտական ապացույցների<sup>1</sup> ձեռք բերման կապակցությամբ ծագող հարաբերությունների կարգավորմանն ուղղված եվրոպական Միության (ԵՄ) փաստաթղթերի համապատասխան դրույթների վերլուծությունն է, դրանց ուսումնասիրության հիման վրա քր. գործերով միջազգային համագործակցության արդյունավետության գնահատումն ու դրա բարելավմանն ուղղությամբ առաջարկներ անելը՝ շեշտը դնելով փոխադարձ իրավական օգնության ընթացակարգի և դրա շրջանակներում օտարերկրյա փորձագիտական ապացույցների վրա:

### **1. Փորձագիտական ապացույցի հասկացության սահմանումը միջազգային համագործակցության համատեքստում**

Մինչև քր. գործերով միջազգային համագործակցության ընթացակարգերով փորձագիտական ապացույցների ձեռք բերմանն անդրադառնալը, կարծում ենք, քննարկման առարկա պետք է դարձնել այս տեսակի ապացույցի իրավական բնորոշումը, հատկապես՝ միջազգային իրավական համագործակցության համատեքստում: Հարկ է նշել, որ, համապատասխան միջազգային հարաբերությունները կարգավորող փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցից ոչ մեկում փորձագիտական ապացույցի սահմանումը տրված չէ (նույնը վերաբերում է նաև ապացույցների մյուս տեսակներին): Այս կապակցությամբ, որոշ հեղինակներ արդարացիորեն կարևորում են փորձագիտական եզրակացության (ապացույցի՝

<sup>1</sup>«Օտարերկրյա կամ միջառամանային փորձագիտական ապացույց» ասելով՝ նկատի է ունենցվում ԵՄ անդամ պետության կողմից մեկ այլ անդամ պետության հանձնարարությամբ իր պետությունում գործող փորձագիտական հաստատության կամ փորձագետի մասնագիտական օժանդակությամբ ձեռք բերված եզրակացությունը կամ ցուցմունքը:

Լ.Դ.) ճշգրիտ սահմանման անհրաժեշտությունն ազգային օրենսդրությամբ՝ պաշտպանության իրավունքի և կողմերի հավասարության սկզբունքի երաշխավորման տեսանկյունից: Ըստ այդ հեղինակների՝ փորձագիտական եզրակացության (ապացույցի՝ Լ.Դ.) ձեռք բերման գործում պաշտպանության կողմի մասնակցության իրավունքի հստակ ամրագրումը կարող է ծառայել կողմերի հավասարության սկզբունքի երաշխավորման նպատակին այն դեպքում, եթե ազգային իրավունքը նախատեսում է այդ ապացույցի ճիշտ հասկացությունը<sup>2</sup>: Համակարծիք լինելով նշված մոտեցման հետ՝ միաժամանակ գտնում ենք, որ ազգային իրավունքում փորձագիտական ապացույցի օրենսդրական հասկացությունը, պաշտպանության իրավունքի և կողմերի հավասարության սկզբունքի երաշխավորումից զատ, պետք է բխի միջազգային մակարդակով սահմանված ընդհանուր բնորոշումից՝ քր. գործերով միջազգային համագործակցության արդյունավետության ապահովման տեսանկյունից: Քր. գործերով փորձագիտական ապացույցի ձեռք բերմանն ուղղված միջազգային համագործակցությունը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ պետությունները կիսում են ապացույցի այս տեսակի միասնական ընդհանուր իրավական բնորոշումը: Նման հասկացության սահմանումը միջազգային մակարդակով կարևորվում է այնքանով, որքանով այն կանխորոշում է ապացույցի նշված տեսակի հիմնական բնորոշ գծերը, դատավարական տեսակները և արտահայտման ձևերը, ձեռք բերման, օգտագործման և գնահատման հիմնական սկզբունքները:

Տարբեր քրեադատավարական համակարգեր կամ, այսպես կոչված, դատավարության տիպեր (մեղադրական և մրցակցային) ունեցող պետությունների օրենսդրության համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փորձագիտական ապացույցը՝ որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, դրսևորվում է փորձագիտական եզրակացության (expert report)<sup>3</sup> և /կամ փորձագետի ցուցմունքի (expert testimony)<sup>4</sup> ձևով, իսկ որոշ դեպքերում, հատկապես՝ ընդհանուր իրավունքի երկրների մրցակցային քրեական դատավարությունում օգտագործվում է «փորձագիտական կարծիք» (expert opinion)<sup>5</sup> տերմինը, որը կիրառվում է թե՛ փորձագետի եզրակացությունը, թե՛ փորձագետի ցուցմունքը մատնանշելու համար՝ հաշվի առնելով, որ նշված դատավարական փաստաթղթերը բոլոր դեպքում բովանդակում են փորձագետի մասնագիտական կարծիքը գործի՝ հատուկ գիտելիքներ պահանջող հանգամանքների վերաբերյալ: Նույնը վերաբերում է նաև «փորձագիտական ապացույցին» (expert evidence), որն ընդհանուր հասկացություն է ու ներառում և՛ փորձագիտական եզրակացությունը, և՛ ցուցմունքը<sup>6</sup>:

Փորձագիտական ապացույցի վերը նշված տեսակներից յուրաքանչյուրը՝ փորձագետի եզրակացությունը և ցուցմունքը, ինչպես նշեցինք, պահանջում է դրա ձեռք բերմանն ուղղված առնաձևահատուկ դատավարական կարգի կիրառում, որը տարբեր երկրներում տարբեր կերպ է կարգավորված: Բացի այդ, դրանք միմյանցից տարբերվում են նաև արտահայտման դատավարական ձևով (գրավոր կամ բանավոր), ինչն իր հերթին պայմանավորում է ձեռք բերման դատավարական կարգի բովանդակությունը:

Միջազգային փաստաթղթերի համապատասխան դրույթներում, փորձագիտական ապացույցի իրավական բնորոշման բացակայության պայմաններում դրա ձեռք բերման վերաբերյալ, ինչպես կտեսնենք ներքևում, օգտագործվում են տարբեր ձ-

<sup>2</sup>Champod Ch., Vuille J., Scientific Evidence in Europe – Admissibility, Appraisal and Equality of Arms, Comparative Study on Scientific Evidence Drawn up for the Bureau of the Council of Europe's, European Committee on Crime Problems (CDPC), Report on 59th Plenary Session, Appendix VI, Strasbourg, 7-10 June 2010, էջ 90:

<sup>3</sup>Richard M., Steven P., Criminal evidence, 5th ed., London, 2004, էջ 125:

<sup>4</sup>Kampen van P.T.C., Expert evidence compared: rules and practices in the Dutch and American criminal justice system. Antwerpen: Intersentia, 1998, էջ 107-108:

<sup>5</sup>Roberts P., Zuckerman A., Criminal evidence, 2nd ed., New, York, 2004, էջ 469-470:

<sup>6</sup>Որոշ դեպքերում օգտագործվում է նաև «գիտական ապացույց» (scientific evidence) տերմինը՝ հաշվի առնելով, որ փորձագիտական ապացույցը հիմնված է գիտական տվյալների վրա (տե՛ս. Kaye H.D., Faigman D. et al., Modern scientific evidence: the law and science of expert testimony. St. Paul, 2002, Vol. 1, էջ 10-12):

ևակերպումներ: Մասնավորապես, մի դեպքում օգտագործվում է «երդմամբ տալ փորձագիտական ապացույց» (to give expert evidence on oath), մեկ այլ դեպքում՝ «փորձագետի լսում» (hearing of expert) ձևակերպումները: Դրանցից յուրաքանչ-յուրը ենթադրում է փորձագիտական ապացույցի որոշակի տեսակի և դրա ձեռք բերման որոշակի կարգի կիրառում, որի մասին մանրամասն կխոսվի ստորև: Ավելացնենք նաև, որ քննարկվող հարցը տարբեր երկրներում տարբեր կերպ է կարգավորվում: Ուստի, այդ տարբերությունների հաշվառմամբ փորձագիտական ապացույցի ընդհանուր սահմանումը, որն, ըստ էության, կբովանդակի ապացուցման այս միջոցին ներկայացվող նվազագույն պահանջները ԵՄ մակարդակով, կարևոր նշանակություն կարող է ունենալ միջազգային համագործակցության շրջանակներում փորձագիտական ապացույցների ձեռք բերման ընթացակարգի հստակեցման նկատառումով:

## 2. Փորձագիտական ապացույցների ձեռք բերման ընթացակարգերը և թույլատրելիության չափանիշները Եվրոպական Միությունում՝ փոխադարձ իրավական օգնության ռեժիմի շրջանակներում

Ներկայումս ԵՄ մակարդակով գործող միջազգային իրավական կարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ ԵՄ-ում փորձագիտական ապացույցը կարող է ձեռք բերվել քր. գործերով միջազգային համագործակցության երկու ռեժիմների (ընթացակարգերի), այն է՝ փոխադարձ միջազգային իրավական օգնության և փոխադարձ ճանաչման զուգորդված գործադրմամբ՝ դրանց հիմքը կազմող միջազգային փաստաթղթերի դրույթներին համապատասխան: Սույն հոդվածում քննարկման առարկա են դարձվել, մասնավորապես՝ քր. գործերով փոխադարձ միջազգային իրավական օգնության ռեժիմը և դրա շրջանակներում օտարերկրյա փորձագիտական ապացույցներ ձեռք բերելու հնարավոր ընթացակարգերը:

Քր. գործերով փոխադարձ միջազգային իրավական օգնությունը ԵՄ անդամ պետությունների միջև դատաիրավական համագործակցության ավանդական ռեժիմն է, որի դեպքում, մասնավորապես, փորձագիտական ապացույցներ ձեռք բերելու վերաբերյալ հարցում (հանձնարարություն) ուղարկող պետության իրավասու մարմնի (այսուհետ՝ հայցող պետություն) հարցման հիման վրա հարցումը կատարող պետության իրավասու մարմինը (այսուհետ՝ կատարող պետություն) միջոցներ է ձեռնարկում հայցվող փորձագիտական ապացույցի ձեռք բերման ուղղությամբ<sup>7</sup>:

Քննարկվող ռեժիմը կարգավորող միջազգային դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցով նախատեսված են օտարերկրյա փորձագիտական ապացույցների ձեռք բերման մի քանի ընթացակարգեր, ինչպիսիք են՝ ա) փորձաքննության կատարումը կամ փորձագետի հարցաքննությունը (լսումը) կատարող պետության տարածքում, բ) փորձաքննության կատարումը կամ փորձագետի հարցաքննությունը (լսումը) հայցող պետության տարածքում, գ) փորձագետի հարցաքննությունը (լսումը) կատարող պետության տարածքում՝ տեսազրույցի (videoconference) կամ հեռախոսազրույցի (telephone conference) միջոցով:

<sup>7</sup>Քր. գործերով միջազգային փոխադարձ իրավական օգնությունը կարգավորվում է մի շարք միջազգային փաստաթղթերով, ինչպիսիք են՝ Եվրախորհրդի 1959թ. «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» Եվրոպական կոնվենցիան (տե՛ս ETS No. 30 of 20.04.1959), դրա կից՝ 1978թ. Առաջին և 2001թ. Երկրորդ արձանագրությունները (տե՛ս համապատասխանաբար՝ ETS No. 99 of 17.03.1978 և ETS No. 182 of 08.11.2001), 1990թ. «Շենգենյան համաձայնագրի կատարման մասին» ԵՄ կոնվենցիան (տե՛ս OJ L 239 of 22.09.2000), «Յանդեման և փոխադարձ օգնության մասին» 1962թ. Բենելյուքսյան պայմանագիրը (տե՛ս UN Treaty Series, 1968, No. 8893), ինչպես նաև 2000թ. «Եվրոպական Միության անդամ պետությունների միջև քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» ԵՄ կոնվենցիան (տե՛ս OJ C 197 of 12.07.2000) և դրա 2001թ. լրացուցիչ արձանագրությունը (տե՛ս OJ C 326/1 of 21.11.2001):

## 2.1. Փորձաքննության կատարումը կամ փորձագետի հարցաքննությունը (լսումը) կատարող պետության տարածքում

ԵՄ անդամ պետության կողմից մեկ այլ անդամ պետության իրավասու մարմնի օժանդակությամբ այդ պետության տարածքում փորձաքննության կատարման և փորձագիտական ապացույցի ձեռք բերման հիմքը նախևառաջ 1959թ. Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ մասն է, որը կատարող պետությանը պարտավորեցնում է փորձագետից ապացույց վերցնել երդմամբ (to give evidence on oath), եթե այդպես է պահանջում հայցող պետությունը, և դա արգելված չէ կատարող պետության ազգային իրավունքով:

Ակնհայտ է, որ «փորձագետից ապացույց վերցնել» ձևակերպումն ունի բավականին լայն բովանդակություն: Այն իր մեջ ներառում է ոչ միայն փորձագետի գրավոր եզրակացությունը՝ տրված փորձագիտական հետազոտության արդյունքների հիման վրա, այլ նաև փորձագետի հարցաքննության (լսման) արդյունքում ձեռք բերված բանավոր ցուցմունքը: Նշված դրույթում, փաստորեն, կոնվենցիան չի կոնկրետացնում փորձագիտական ապացույցի տեսակը և ձևը՝ թողնելով այն որոշակի քր. գործով համագործակցող պետությունների համաձայնությանը:

Չարկ է նկատել, որ 1959թ. Եվրոպական կոնվենցիայի 2001թ. երկրորդ արձանագրության 8-րդ հոդվածով ապացույցներ ձեռք բերելիս կիրառման ենթակա իրավունքի հետ կապված մոտեցումը որոշակի փոփոխության ենթարկվեց: Այսպես, 1959թ. Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ կատարող պետությունը հարցումը կատարում է իր ազգային իրավունքին համապատասխան (այսինքն՝ *locus regit actum* սկզբունքով)<sup>8</sup>: 2001թ. երկրորդ արձանագրության 8-րդ հոդվածով, սակայն, սահմանվեց, որ չնայած կոնվենցիայի 3-րդ հոդվածի բովանդակությանը, եթե հարցումը ներառում է որոշակի ձևականություններ և ընթացակարգեր, որոնց պահպանումն անհրաժեշտ են հայցող կողմի իրավունքին համապատասխան, ապա կատարող կողմը, եթե նույնիսկ դրանք վերջինիս իրավունքին անժանոթ են, պարտավոր է հետևել այդ պահանջներին այնքանով, որքանով դրանք չեն հակասում իր ազգային իրավունքի հիմնարար սկզբունքներին, եթե այլ բան նախատեսված չէ նշված արձանագրությամբ: Այսինքն՝ այս փոփոխությամբ *locus regit actum* սկզբունքը որոշակիորեն փոխարինվեց *forum regit actum* սկզբունքով, որի համաձայն՝ ապացույցները ձեռք են բերվում այն պետության իրավունքին համապատասխան, որը ներկայացրել է դրանց ձեռք բերման վերաբերյալ պահանջը<sup>9</sup>:

*Locus regit actum* սկզբունքը *forum regit actum* սկզբունքով փոխարինելու միտումն ակնհայտ է նաև 2000թ. ԵՄ կոնվենցիայում, որի 4-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ փոխադարձ իրավական օգնության համաձայնություն տալու դեպքում կատարող պետությունը պարտավոր է հետևել հարցման մեջ շարադրված ձևական և ընթացակարգային պահանջներին, եթե այլ բան նախատեսված չէ կոնվենցիայով, և եթե այդ ձևականություններն ու ընթացակարգերը չեն հակասում կատարող պետության իրավունքի հիմնարար սկզբունքներին: Այսինքն՝ եթե կատարող պետությունը համաձայնություն է տալիս աջակցել հայցող պետությանը պահանջ-

<sup>8</sup>Ըստ նշված սկզբունքի՝ ապացույցներ ձեռք բերելու վերաբերյալ հարցումը ենթակա է կատարման կատարող պետության ներպետական իրավունքին համապատասխան: Այն փոխադարձ ճանաչման ռեժիմին բնութագրական տարր է (մանրամասն տե՛ս Allegrezza S., Critical Remarks on the Green Paper on Obtaining Evidence in Criminal Matters from one Member State to another and Securing its Admissibility. AUF SÄTZE / Europäisches Strafrecht Jahrgang, Ausgabe, Bologna, 9/2010, էջ 578):

<sup>9</sup>Vermeulen G., Bondt De W., Damme Y. V., EU cross-border gathering and use of evidence in criminal matters: towards mutual recognition of investigative measures and free movement of evidence? Portland, 2010, էջ 39-40:



վող ապացույցների ձեռք բերման գործում, ապա այդ դեպքում նա պարտավոր է հաշվի առնել հայցողի կողմից ներկայացված ձևական և ընթացակարգային բոլոր պահանջները և համագործակցությունն իրականացնել «ամբողջ փաթեթով»<sup>10</sup>:

Ձևականությունների և ընթացակարգերի հասկացությունը մեկնաբանվում է 2000թ. ԵՄ կոնվենցիայի բացատրական հաշվետվության մեջ<sup>11</sup>, որի 4-րդ հոդվածի համաձայն՝ հայցող պետությանը ձևականությունների և ընթացակարգերի պահանջներ կայացնելու իրավունք վերապահելու նպատակը ձեռք բերված տեղեկատվությունը որպես ապացույց օգտագործելու հնարավորության հեշտացումն է: «Ձևականություններ և ընթացակարգեր» բառերը պետք է մեկնաբանվեն նեղ իմաստով և կարող են ներառել, օրինակ, այնպիսի իրավիճակները, երբ հարցման մեջ նշվում է հայցող պետության իրավասու մարմինների կամ պաշտպանության կողմի ներկայացուցիչների մասնակցությունը օտարերկրյա պետությունում վկայից ցուցմունք վերցնելիս: Ընդ որում, հայցող պետությունը կարող է այնպիսի ձևականություններ և ընթացակարգեր պահպանելու պահանջ ներկայացնել կատարող պետությանը, որոնք իր ազգային իրավունքին համապատասխան քրեական գործի քննության ընթացքում ենթակա են պարտադիր կատարման:

Այսպիսով, վերը նշված դրույթների հիման վրա օտարերկրյա պետությունից փորձագիտական ապացույց պահանջելիս՝ հայցող պետությունը կարող է նշել այն ձևական և ընթացակարգային պահանջները, որոնք անհրաժեշտ է ստացված փորձագիտական ապացույցն իր երկրում որպես ապացուցման օրինական միջոց օգտագործելու համար: Կատարող պետությունն էլ այդ պահանջներին հետևում է այն դեպքում, եթե դա չի հակասում իր ազգային իրավունքի հիմնարար սկզբունքներին: Միևնույն ժամանակ, հայցող պետությունը որևէ կերպ կաշկանդված չէ օտարերկրյա պետության տարածքում կատարված փորձաքննության կամ փորձագետի հարցաքննության արդյունքում ձեռք բերված և իրեն փոխանցված փորձագիտական ապացույցը նշված նորմերի հիման վրա որպես թույլատրելի ապացույց օգտագործելու պարտականությամբ, քանի որ եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված համագործակցությունը հիմնված է քրեական գործերով իրավական օգնության, այլ ոչ թե փոխադարձ ճանաչման սկզբունքի վրա, որի դեպքում, օտարերկրյա ապացույցի թույլատրելիությունը հայցող պետության կողմից քննարկման ենթակա չէ և «մեխանիկորեն» առաջացնում է ապացույցի թույլատրելիություն այն հաշվով, որ ձեռք է բերվել օտարերկրյա պետության ազգային իրավունքին համապատասխան:

## **2.2. Օտարերկրյա փորձագետի կողմից փորձաքննության կատարումը կամ հարցաքննությունը (փորձագետի լսումը) հայցող պետության տարածքում**

1959թ. եվրոպական կոնվենցիայի 10-րդ և 12-րդ հոդվածները կարգավորում են հայցող պետության իրավասու մարմին փորձագետի ներկայանալու, այդ պետության տարածքում գտնվելու և այն լքելու հետ կապված իրավահարաբերությունները: Այն դրույթներ է բովանդակում նաև փորձագետին ծանուցելու և նրա տեղափոխությունն ապահովելու վերաբերյալ հարցումը կատարելուց հրաժարվելու հիմքերի և ընթացակարգի վերաբերյալ:

Այն դեպքում, երբ փորձագետը փորձաքննություն է կատարում կամ հարցաքննվում է հայցող պետության տարածքում, դրա կատարման դատավարական ողջ ընթացքը ենթակա է իրավական կարգավորման այդ պետության իրավունքին համա-

<sup>10</sup>Bondt De W., Vermeulen G., “Free movement of scientific expert evidence in criminal matters”, in Cools M., Ruyver De B. et al. (eds.) EU criminal justice, financial & economic crime: new perspectives. Portland: Maklu, 2011, Vol. 5, էջ 71:

<sup>11</sup>Explanatory Report on the Convention of 29 May 2000 on Mutual Assistance in Criminal Matters between the Member States of the European Union. OJ C 379/7 of 29.12.2000:

պատասխան: Յետևաբար, այդ փորձաքննության կամ հարցաքննության արդյունքում ձեռք բերվող փորձագիտական ապացույցի թույլատրելիությունը որոշվում է փորձագետին ընդունած (հայցող) պետության ներպետական իրավունքով, և փոխադարձ ճանաչման սկզբունքի կիրառման անհրաժեշտություն չի ծագում: Պարզ ասած՝ այս գործընթացում պետությունների միջազգային համագործակցությունը սահմանափակվում է միայն կատարող պետությունում փորձագետի անմիջական մասնակցությունը փորձագիտական հետազոտության կամ հարցաքննության կատարմանը ապահովելով, որի դեպքում, փաստորեն, փորձագետը տալիս է գրավոր եզրակացություն կամ բանավոր ցուցմունք հայցող պետության իրավունքին համապատասխան<sup>12</sup>:

### 2.3. Փորձագետի հարցաքննությունը (լսումը) կատարող պետության տարածքում՝ տեսազրույցի (videoconference) կամ հեռախոսազրույցի (telephone conference) միջոցով

1959թ. եվրոպական կոնվենցիայի 2001թ. երկրորդ արձանագրությունը (հոդվ. 9-10), ինչպես նաև 2000թ. ԵՄ կոնվենցիան (հոդվ. 10-11), որոնց բովանդակությունը հիմնականում համընկնում է, կարգավորում են օտարերկրյա փորձագետի հարցաքննությունը (փորձագետի լսումը - hearing of expert) կատարող երկրի տարածքում, այսպես կոչված, տեսազրույցի (videoconference) կամ հեռախոսազրույցի (telephone conference) միջոցով: Պետք է նկատել, որ «փորձագետի լսումը», ի տարբերություն «փորձագիտական ապացույց տալու», ունի առավել սահմանափակ նշանակություն, քանի որ ենթադրում է միայն փորձագետից բանավոր կարգով ցուցմունք վերցնելուն: Փորձագետի լսումը, փաստորեն, գրավոր փորձագիտական եզրակացություն տալու համար փորձաքննություն նշանակելու և կատարելու դեպքերին չի վերաբերում:

Ըստ վերը նշված միջազգային իրավական դրույթների՝ փորձագետի լսումը տեսազրույցի միջոցով կատարվում է այն դեպքում, եթե փորձագետը, որը ենթակա է լսման հայցող պետության իրավասու մարմնի կողմից, գտնվում է հարցումը կատարող պետության տարածքում և չի ցանկանում կամ հնարավոր չի համարում ֆիզիկապես (անձամբ) ներկա գտնվել հայցող պետության տարածքում՝ լսվելու նպատակով: Այդ դեպքում հայցող պետության իրավասու մարմինը կարող է կատարող պետությունից խնդրել ապահովելու փորձագետի լսումն իրավական օգնության այս գործիքի կիրառման վերաբերյալ կոնվենցիայով նախատեսված ընթացակարգով:

Այնուամենայնիվ, պետք է նկատել, որ փորձագետի լսումը տեսազրույցի կամ հեռախոսազրույցի միջոցով հնարավոր է միայն այն դեպքում, եթե՝

ա) փորձագետը նախապես կատարել է փորձագիտական հետազոտություն և դրա արդյունքների հիման վրա տվել գրավոր եզրակացություն, և անհրաժեշտ է պարզել կամ հաստատել իր կողմից նախկինում կատարված փորձագիտական հետազոտության ընթացքն ու արդյունքները: Այս դեպքում, ստացվում է, որ հայցող պետությունը նախապես պետք է դիմի կատարող պետությունում փորձաքննություն նշանակելու ընթացակարգին և դրա հիման վրա ձեռք բերված փորձագիտական եզրակացությունը պարզելու, ճշգրտելու կամ հաստատելու համար կիրառի տեսազրույցի կամ հեռախոսազրույցի միջոցով փորձագետի լսման իրավական օգնության գործիքը,

բ) հայցող պետության իրավասու մարմնին հետաքրքրող հատուկ գիտելիքներ պահանջող հանգամանքների վերաբերյալ փորձագետն ի վիճակի է հետևություններ անել առանց փորձաքննություն կատարելու, այսինքն՝ այս դեպքում գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման համար փորձագի-

<sup>12</sup>St'eu Bondt De W., Vermeulen G., "Free movement of scientific expert evidence in criminal matters", in Cools M., Ruyver De B. et al. (eds.) EU criminal justice, financial & economic crime: new perspectives. Portland: Maklu, 2011, Vol. 5, էջ 70:

տական հետազոտությունների կատարման և դրա հիման վրա փորձագետի գրավոր շարադրված հետևությունների անհրաժեշտություն չկա, և փորձագետը կարող է իր մասնագիտական կարծիքը հայտնել բանավոր հարցաքննության (լսման) շրջանակներում:

Փորձագետի լսումը հեռախոսագրույցի միջոցով կատարվում է, եթե փորձագետը, որը ենթակա է լսման հայցող պետության կողմից, գտնվում է կատարող պետության տարածքում: Այդ դեպքում, եթե հայցող պետության իրավունքը թույլ է տալիս, ապա վերջինս կարող է խնդրել կատարող պետությանը ապահովել լսման իրականացումը հեռախոսով՝ իրավական օգնության այս գործիքի համար նախատեսված որոշակի ընթացակարգով:

Սա նշանակում է, որ, եթե փորձագետը «հնարավոր համարում է և ցանկանում է» անձամբ ներկայանալ հայցող պետության տարածքում հարցաքննությանը մասնակցելու, այդ դեպքում իրավասու պետական մարմինը կարող է կիրառել համապատասխան ընթացակարգը, այն է՝ օտարերկրյա փորձագետի կողմից փորձաքննության կատարումը հայցող պետության տարածքում: Միևնույն ժամանակ, քննարկվող ընթացակարգի շրջանակներում ձեռք բերված փորձագիտական ապացույցի թույլատրելիությունը որոշվում է հայցող պետության իրավունքին համապատասխան, քանի որ, ինչպես արդեն քննարկել ենք, փոխադարձ ճանաչման սկզբունքն այս դեպքում կիրառելի չէ:

## Ամփոփում

Բացի փոխադարձ իրավական օգնության ռեժիմի շրջանակներում փորձագիտական ապացույցներ ձեռք բերելու ընթացակարգերի, ԵՄ ժամանակակից քրեական իրավունքը նախատեսում է նաև փորձագիտական ապացույցների ձեռք բերման հնարավորություն՝ փոխադարձ ճանաչման ռեժիմի հիման վրա: Այս առումով, վերջին տարիներին՝ սկսած 20-րդ դարի 90-ական թվականներից, քաղաքական և իրավական զարգացումները ԵՄ-ում ակնհայտորեն վկայում են դրա ընդգծված կողմնորոշումը քրեական գործերով միջազգային իրավական օգնության ավանդական գործիքները փոխարինելու փոխադարձ ճանաչման սկզբունքի վրա հիմնված համագործակցության ժամանակակից ռեժիմով: Նշված սկզբունքը ապացույցների հնարավորինս բոլոր տեսակների վրա տարածելու ԵՄ քաղաքականության միտումն է վերջո հանգեցնելու է այն օտարերկրյա փորձագիտական ապացույցի վրա նույնպես լիարժեք տարածելուն<sup>13</sup>:

ԵՄ քրեական իրավունքի հետագա բարեփոխումներում, օտարերկրյա փորձագիտական ապացույցների ձեռք բերման հետ կապված, կարծում ենք, պետք է նախ սահմանել փորձագիտական ապացույցի իրավական բնորոշումը: Ապացույցման այս միջոցի իրավական սահմանումը միջազգային մակարդակով պետք է հիմք հանդիսանա անդամ պետությունների ներպետական օրենսդրությամբ համապատասխան հասկացության միասնական սահմանման համար: Այդպիսի սահմանման առկայությունը հնարավորություն կտա ապահովել միջազգային մակարդակով փորձաքննություն նշանակելու կամ փորձագետի հարցաքննության միջոցով փորձագիտական ապացույցների՝ եզրակացության և ցուցմունքի ձեռք բերման գործընթացի հեշտացումը և այդ ապացույցների ճիշտ գնահատումը:

ԵՄ օրենսդրության հետագա փոփոխությունները, մեր կարծիքով, պետք է ներառեն հստակ և մանրամասն իրավական կարգավորումներ անդամ պետությունում փորձաքննություն նշանակելու կամ փորձագետի հարցաքննության ընթացակարգի և դրանց արդյունքներով ձեռք բերված փորձագիտական ապացույցների թույլատրելիության չափանիշների վերաբերյալ:

<sup>13</sup>2009թ. Ստոկհոլմի գործողությունների ծրագրում մատնանշված ԵՄ գործունեության գերակա ուղղությունների շարքում նույնպես առանձնացվեց «միջսահմանային ուղղվածության գործերով ապացույցների ձեռք բերման բազմակողմանի համակարգի ստեղծումը՝ հիմնված փոխադարձ ճանաչման սկզբունքի վրա» (տե՛ս OJ C 115/01, 04.05.2010):

**հասկացությունը և տեղը  
քաղաքացիաիրավական պայմանագրերի  
համակարգում**

Մրցակցային պայքարի ժամանակակից պայմանները գործարարական գործունեության՝ սուբյեկտներին պարտադրում են տարբեր ուղղություններով մշտապես կապեր պահպանել շուկայի հետ, այսինքն միշտ ունենալ անհրաժեշտ տեղեկություններ փոփոխություններին ժամանակին արձագանքել: Մարքեթինգային տեղեկատվությունը ընկերության ղեկավարությանը թույլ է տալիս գնահատել՝ որքանով են իրենց ընթացիկ գործունեության արդյունքները համապատասխանում պլանավորված նպատակներին, ազդում են արդյոք ընդունված օրենքները սպառողների գնողունակության, ոլորտի կազմակերպությունների գործունեության վրա, արդյոք փոփոխվել է սպառողների արժեքային համակարգը, նրանց կյանքի ոճը, օգտագործվել են մրցակիցների կողմից նոր ռազմավարություններ և այլն<sup>2</sup>: Մարքեթինգային տեղեկատվությունը, որպես հաճախորդի պատվերով իրականացրած մարքեթինգային հետազոտությունների արդյունք, նպաստում է ստացված տվյալների և մասնագետ-մարքեթոլոգների հանձնարարականի հիման վրա կոնկրետ մարքեթինգային խնդրի լուծմանը:

Տնտեսվարող սուբյեկտի և մասնագիտացված ընկերության միջև՝ վերջինիս կողմից մարքեթինգային հետազոտությունների իրականացման առթիվ ծագած հարաբերությունների կազմակերպման միակ միջոցը, այդ հարաբերությունների իրավաբանական ամրագրման և բոլոր ասպեկտների կարգավորման եղանակը հանդիսանում է մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագիրը:

ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը պայմանագիրը սահմանում է որպես երկու կամ

մի քանի անձանց համաձայնություն, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն (ՀՀ Քաղ. օր-ի հոդված 436 կետ 1): Հայրենական քաղաքացիական իրավունքը պայմանագիրը ավանդաբար դիտարկում է որպես իրավահարաբերությունների առաջացման, փոփոխման և դադարման հիմք, որպես ինքնին իրավահարաբերությունը և որպես այն ձևը, որն ընդունում է համապատասխան իրավահարաբերությունը<sup>3</sup>: Իրավաբան-գիտնականների

<sup>1</sup> Ինչպես գիտենք ՀՀ Քաղ. օր-ը օգտագործում է «ձեռնարկատիրական գործունեություն» տերմինը, որի հոդված 2-ի համաձայն «Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքների վաճառելուց, աշխատանքներ կատարելուց, ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»: Սակայն աշխատանքի մեջ մենք օգտագործում ենք գործարարական գործունեություն, հետևաբար նաև գործարարական հարաբերություններ, գործարար եզրույթները: Այս մասին ավելի մանրամասն տես Բարսեղյան Ս.Կ. Գործարարական իրավունք: Երևանի համալս. հրատ., 2007, էջ 15-17:

<sup>2</sup> Տե՛ս Голубков Е.П. Процесс маркетинговых исследований // Маркетинг в России и за рубежом, 1997, էջ 7:

<sup>3</sup> Տե՛ս Բարսեղյան Ս.Կ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս.- Երևանի համալս. հրատ., 2004, էջ 384-385:

կարծիքները տվյալ հարցի վերաբերյալ տարբերվում են, սակայն այդ տարբերությունները, հիմնականում, սկզբունքային չեն:

Մեր կարծիքով, ըստ գործնական նշանակության պայմանագիրը յուրահատուկ իրավաբանական գործիք է, տնտեսական կյանքի կարգավորման իրավական միջոց: Սակայն, գործող օրենսդրությամբ նախատեսված պայմանագրային կառուցվածքների նույնիսկ նման մեծ քանակությունը սկսում է ամբողջովին չհամապատասխանել ժամանակակից հայաստանյան շրջանառության կարիքներին:

Ս.Ա.Խոխլովի կարծիքով, «Պատմականորեն պայմանագիրը ծագել և զարգանում է որպես իրավական ակտ, որը կարող է իրավաբանորեն ներառել ընդհանրացնող օրենսդրական կանոնակարգի բացակայության դեպքում», ինչպես նաև «պայմանագիրը դառնում է օրենսդրական գործող համակարգով ուղղակիորեն չկարգավորվող նոր հարաբերությունների ձևավորման և զարգացման ժամանակ վարքագծի կանոնների անմիջական և հիմնական աղբյուր»<sup>4</sup>:

Մարքեթինգային հետազոտությունների իրականացման պայմանագրի սահմանման համար անհրաժեշտ է առանձնացնել նրան բնորոշ հատկանիշները: Այս նպատակով դիտարկենք տվյալ պայմանագրի առարկան, մարքեթինգային հետազոտությունների մասնակիցների միջև կապերի կազմակերպման եղանակները, պայմանադիր կողմերի հիմնական իրավունքներն ու պարտականությունները:

Նախ և առաջ կատարողը պատվիրատուի հանձնարարության համաձայն իրականացնում է մարքեթինգային հետազոտություն: Հանձնարարությունը պետք է պարունակի կատարողի կողմից լուծման ենթակա խնդիրը, մարքեթինգային հետազոտության նպատակները, ուղղություններն ու օբյեկտը: Ընդ որում հանձնարարության բովանդակությունը թույլ է տալիս բացահայտել մարքեթինգային հետազոտության սպասվող արդյունքին ներկայացվող պահանջները, ինչպես նաև գնահատել կատարվող աշխատանքների որակը:

Համաձայն պատվիրատուի կողմից տրված հանձնարարության, մասնագետ-մարքեթոլոգը իրականացնում է մարքեթին-

գային տեղեկատվության հավաքում, մշակում և վերլուծություն՝ պատվիրատուին հետաքրքրող հարցերի շրջանակներում:

Ստացված տեղեկատվության հիման վրա կատարող-մարքեթոլոգը ձևավորում է եզրակացություններն ու հանձնարարականները, որոնք նախատեսված են պատվիրատուի գործարարական գործունեության խնդիրների լուծման համար: Սակայն, անհրաժեշտ է հատուկ ընդգծել, որ մարքեթինգային հետազոտությունների արդյունք են հանդիսանում հավաքված և մշակված մարքեթինգային տեղեկատվությունը, ինչպես նաև մարքեթոլոգների եզրակացություններն ու հանձնարարականները, ընդ որում պատվիրատուի համար արդյունքի երկու բաղկացուցիչներն էլ ունեն գրեթե հավասար նշանակություն:

Մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագրի առարկան բնութագրելիս անհրաժեշտ է որոշել, թե դիտարկվող պայմանագրի առարկային վերաբերվում են միայն մարքեթինգային հետազոտության ընթացքում իրականացվող աշխատանքները (մարքեթոլոգի կողմից տեղեկատվության հավաքման, վերամշակման, վերլուծության և դրա հիման վրա պատվիրատուի կողմից պահանջվող հանձնարարականների մշակման գործողություններ), միայն կատարված հետազոտությունների արդյունքը (մարքեթինգային տեղեկատվությունը և կատարողի հանձնարարականները պարունակող հաշվետվություն), կամ էլ առարկան ունի համալիր բնույթ և ներառում է ինչպես մարքեթինգային հետազոտության ընթացքում իրականացված բոլոր աշխատանքները, այնպես էլ հաշվետվության տեսքով առարկայացված դրանց արդյունքը:

Մարքեթինգային հետազոտությունների հաջող անցկացումը, պատվիրատուի պահանջներին համապատասխանող և նրա առջև դրված խնդիրը լուծելու ունակ արդյունքների ստացումը անհնար է առանց պատվիրատուի և կատարողի սերտ համագործակցության, պատվիրատուի կողմից աշխատանքների ընթացքի վերահսկողության, պատվիրատուի կողմից կատարողին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման: Այսպիսով, մարքեթինգային հետազոտությունների իրականացման պայմանագրի առարկան կրում է համալիր բնույթ և ներառում է՝

<sup>4</sup>Տե՛ս Խոխլով Ս.Ա. Организация договорной работы в народном хозяйстве. Красноярск: Изд-во Красноярск. Ун-та, 1986, էջ 26-27:

1. մարքեթինգային հետազոտությունների ընթացքում կատարողի կողմից իրականացվող աշխատանքները (մարքեթինգային տեղեկատվության հավաքում, վերամշակում, համակարգավորում և վերլուծություն),

2. հետազոտությունների արդյունքները (մարքեթինգային տեղեկատվությունը և կատարված հետազոտության վերաբերյալ հաշվետվության տեսքով ներկայացված հանձնարարականները):

Ըստ մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագրի կատարողի գործունեության արդյունքը կրում է ոչ նյութական բնույթ (մարքեթինգային տեղեկատվություն և եզրակացություններ, կատարողի հանձնարարականներ), բայց մշտապես առարկայացվում է որոշակի նյութական կրիչի վրա, այսինքն ունի առարկայացված (նյութական) բնույթ: Ինչպես նշում է Ա.Ե.Շերստոբիտովը, «տեղեկատվության փոխանցումը այն դեպքում, երբ դրա կրիչը ունի իրային բնույթ (փաստաթուղթ, մագնիսական ժապավեն և այլն), ըստ էության իրենից ներկայացնում է տեղեկատվության կրիչի ուրույն հատկություններով օժտված իրի փոխանցում»<sup>5</sup>:

Մարքեթինգային հետազոտությունների իրականացման պայմանագրի կողմերն են հանդիսանում պատվիրատուն և կատարողը: Հաշվի առնելով մարքեթինգային հետազոտությունների առանձնահատկությունները, դրանց ուղվածությունը տնտեսական գործունեության խնդիրների լուծմանը՝ մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագրի պատվիրատուներ են հանդիսանում, որպես կանոն, առևտրային կազմակերպությունները և անհատ գործարարները: Սակայն մարքեթինգը ներթափանցում է նաև ոչ առևտրային ոլորտ: Այսպես, մարքեթինգային հնարքներն ու միջոցները օգտագործվում են ուսումնական հաստատությունների կողմից ուսուցանվողների ներգրավման նպատակով, հասարակական կազմակերպությունների, քաղաքական գործիչների կողմից և այլն<sup>6</sup>, իսկ դա իր հերթին պահանջում է մարքեթինգային հետազոտությունների իրականացում:

Հստակ խնդրի լուծմանն ուղղված մարքեթինգային հետազոտությունների իրակա-

նացումը բավականին թանկարժեք գործընթաց է: Միաժամանակ տարածված են դեպքեր, երբ մի քանի պատվիրատուներին հետաքրքրում է նմանատիպ խնդրի լուծումը: Այդպիսի դեպքերում անց են կացվում այսպես կոչված կոոպերացված հետազոտություններ (cooperative survey), այսինքն կատարողը անց է կացնում մարքեթինգային հետազոտություն մեկ խնդրի ուղղությամբ, բայց մի քանի պատվիրատուների հանձնարարությամբ, որոնք արդյունքում ստանում են միևնույն տեղեկատվությունը, և հաճախորդների (պատվիրատուների) քանակին համապատասխան յուրաքանչյուրի համար հետազոտության արժեքը նվազում է, քանի որ մարքեթինգային հետազոտության գինը «բաշխվում է» մի քանի անձանց միջև:

Համաձայն ՀՀ Քաղ. օր-ի 360-րդ հոդվածում ամրագրված ընդհանուր կանոնի, եթե պարտավորությանը մասնակցում են մի քանի պարտատերեր, ապա նրանցից յուրաքանչյուրը իրավունք ունի պահանջել պարտավորության կատարում մյուսների հետ հավասար այնքանով, որքանով օրենքից, այլ իրավական ակտերից կամ պարտավորության պայմաններից չի բխում այլ բան: Իսկ համաձայն ՀՀ Քաղ. օր-ի 361 հոդվածի համապարտ պարտականությունը ի հայտ է գալիս, մասնավորապես, պարտավորության առարկայի անբաժան լինելու դեպքում (Քաղ. օր-ի 361 հոդված կետ 1), ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության հետ կապված պարտավորությամբ (Քաղ. օր-ի 361 հոդվածի 2-րդ կետի այս դրույթը կրում է դիսպոզիտիվ բնույթ):

Ինչպես վկայում է պրակտիկան, որպես կատարող կարող են հանդես գալ ինչպես մարքեթինգային հետազոտությունների իրականացման ոլորտում մասնագիտացված մարքեթինգային ընկերություններն ու գովազդային գործակալությունները, այնպես էլ ցանկացած գիտահետազոտական կազմակերպություններ, բարձրագույն ուսումնական հաստատություններ, քոլեջներ, անհատ գործարարներ, ովքեր օժտված են մարքեթինգային հետազոտություններ անցկացնելու հմտություններով և ունեն դրա համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազա, այ-

<sup>5</sup>Տե՛ս Шерстобитов А.Е. Гражданско-правовое регулирование обязательств по передаче информации. Автореферат дисс. ...к.ю.н. М., 1980, էջ 17:

<sup>6</sup>Տե՛ս Котлер Ф. Основы маркетинга / Пер. с англ. В.Б.Боброва. М.: Росинтер, 1996, էջ 605-613:

սինքն քաղաքացիական իրավունքի ցանկացած սուբյեկտներ<sup>7</sup>:

Մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագրի սահմանման համար կարևոր նշանակություն ունի պայմանագրի կողմերի հիմնական իրավունքների ու պարտականությունների սահմանումը: Դիտարկվող պայմանագրում կատարողի հիմնական պարտականությունն է հանդիսանում պատվիրատուի հանձնարարությանը համապատասխան մարքեթինգային հետազոտության անցկացումը (մարքեթինգային տեղեկատվության հավաքում, վերամշակում և վերլուծություն, իսկ պատվիրատուի ցանկությամբ՝ նրա տնտեսական գործունեության վերլուծություն և եզրակացությունների ու հանձնարարականների մշակում) և պատվիրատուին հետազոտության արդյունքների (հաշվետվության) փոխանցումը: Կատարողի տվյալ պարտականությանը համապատասխանում է պատվիրատուի մարքեթինգային հետազոտությունների կատարումը պահանջելու, աշխատանքների ընթացքի վերահսկումը իրականացնելու և հետազոտության արդյունքների փոխանցումը պահանջելու իրավունքը: համապատասխանաբար, կատարողն իրավունք ունի պատվիրատուից պահանջել նշված գործողությունների կատարումը:

Այսպիսով, մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագրով կատարողը պարտավորվում է պատվիրատուի հանձնարարությանը իրականացնել մարքեթինգային հետազոտություններ:

Մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագրի բնութագրման ժամանակ անհրաժեշտ է որոշել դրա էական պայմանները: ՀՀ Քաղ. օր-ի 448 հոդվածի 1-ին կետի 2-րդ մասի համապատասխան էական են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանները, օրենքում կամ այլ իրավական ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի: Հետևաբար պայմանագրի այս կամ այն պայմանը էական պայմանների դասին վերագրելու հարցը պետք է լուծվի երկու

չափորոշիչների կիրառմամբ՝

1. օբյեկտիվ չափորոշիչ, այսինքն՝ օրենքի կամ այլ իրավական ակտի պահանջը պայմանագրի էական պայմանների վերաբերյալ,

2. սուբյեկտիվ չափորոշիչ, այսինքն՝ պայմանագրի կնքման ժամանակ կողմի ուղղակի հայտարարությունը որոշակի պայման նախատեսելու անհրաժեշտության վերաբերյալ:

Պետք է համաձայնվել Մ.Ի. Բրագինսկու կարծիքի հետ, որը պնդում է, որ քաղաքացիական օրենսգրքով կամ այլ իրավական ակտերով չնախատեսված պայմանագրային մոդելների (մասնավորապես, մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագրերի-Ն.Ս.) առումով, էական պետք է ճանաչվեն առարկան, պայմանները, որոնք անհրաժեշտ են տվյալ պայմանագրի համար, ինչպես նաև այն պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի պահանջով պետք է հասնել համաձայնությանը<sup>8</sup>:

Մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագրի առարկայի համաձայնեցումը, անխոս, որոշիչ նշանակություն ունի դիտարկվող պայմանագրի կնքման ժամանակ: Սակայն մարքեթինգային հետազոտություններն ուղղված են շուկայի մշտապես փոփոխվող վիճակի ուսումնասիրմանը, տվյալ կոնկրետ ժամանակահատվածում սպառողների կարիքների և պահանջմունքների բացահայտմանը: Հետևաբար, մարքեթինգային հետազոտությունների իրականացման աշխատանքները ժամանակին սկսելուց և ավարտելուց է կախված օբյեկտիվ արդյունքի ստացումը և պատվիրատուի հետաքրքրությունների բավարարումը: Ուստի մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագրի համար էական և անհրաժեշտ պայման պետք է ճանաչել մարքեթինգային հետազոտությունների կատարման սկզբնական և վերջնական ժամկետի վերաբերյալ պայմանը: Մարքեթինգային հետազոտությունների կատարումը ըստ պատվիրատուի և կատարողի միջև պայմանագրի իրականացվում է հատուցման հիմունքով:

ՀՀ Քաղ. օր-ի 440 հոդվածի 3-րդ կետին համապատասխան այն դեպքերում, երբ հատուցելի պայմանագրում գին նախատեսված չէ և չի կարող որոշվել պայմանագրի պայմանների հիման վրա, պայմանագրի կատարումը

<sup>7</sup>Տե՛ս Բերезин И.С. Проведение массовых опросов // Маркетинг и маркетинговые исследования в России., 1996, թիվ 5:

<sup>8</sup>Տե՛ս Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. Книга первая: Общие положения. 2-е изд. М.: Статут, 2000, էջ 240:

պետք է վճարվի այն գնով, որը համեմատելի հանգամանքներում սովորաբար գանձվում է նույնանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար: Սակայն ժամանակակից հայաստանյան պայմաններում մարքեթինգային հետազոտությունների անցկացման և դրանց պայմանագրային կարգավորման պրակտիկան այնքան փոքրաթիվ և հակասական է, որ մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագրում գնի վերաբերյալ պայմանի բացակայության դեպքում դժվար, իսկ հաճախ նաև անհնար է լինում որոշել համեմատելի հանգամանքներում մարքեթինգային հետազոտության համար սովորաբար գանձվող գինը: Տվյալ հանգամանքը անհրաժեշտություն է առաջացնում պայմանագրի կնքման ժամանակ կողմերի կողմից մարքեթինգային հետազոտության գնի համաձայնեցման անհրաժեշտությունը:

Այսպիսով, մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագրի անհրաժեշտ պայման է հանդիսանում պայմանագրի առարկան, աշխատանքների կատարման ժամկետը և մարքեթինգային հետազոտությունների գինը:

Մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագիրը կնքելիս պետք է պահպանվեն պայմանագրի ձևին ներկայացվող օրենքի պահանջները, որոնք նախատեսված են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի գլուխ 18-ով («Գործարքներ») և գլուխ 29-ով («Պայմանագրի կնքելը»): Բայց հաշվի առնելով դիտարկվող պայմանագրի յուրահատուկ գծերը, դրանց կատարման աշխատանքների ցանկի և ծավալի, ժամկետների համաձայնեցման անհրաժեշտությունը, նպատակահարմար է մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագիրը կնքել պարզ թղթային ձևով՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որը բովանդակում է պայմանագրի հիմնական պայմանները և հավելվածները: Մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագիրը կարող է կնքվել նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով փաստաթղթեր փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ որոշել, որ փաստաթուղթ ելնում է պայմանագրի կողմից:

Մարքեթինգային հետազոտության ընթացքում կատարողի կողմից իրականացվող աշխատանքների առանձնահատկությունները, մարքեթինգային տեղեկատվության և հաշվետվության տեսքով արդյունքի արտահայտման

յուրահատուկ ձևը, պատվիրատուի տնտեսվարման պրակտիկայում հետազոտության ստացված արդյունքների ներդրման և դրա հիման վրա իրական տնտեսական արդյունքի ստացման պայմանագրի ընդհանուր ուղղվածությունը թույլ են տալիս եզրակացնել, որ մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագիրն ինքնուրույն պայմանագիր է:

Այժմ անհրաժեշտ է որոշել մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագրի տեղը քաղաքացիաիրավական պայմանագրերի համակարգում: Մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագիրն ուղղված է վերջնական արդյունքի ստացման մեջ շահագրգռված պատվիրատուի և մարքեթինգային ընկերության միջև վերջինիս կողմից մարքեթինգային հետազոտություններ իրականացնելու և դրանց արդյունքը փոխանցելու առիթով ծագած հարաբերությունների կարգավորմանը, ընդ որում պատվիրատուին հետաքրքրում է ոչ միայն հետազոտության սպասվող արդյունքը, այլ նաև կատարող մարքեթոլոգի կողմից իրականացվող աշխատանքների ընթացքը: Հետևաբար դիտարկվող պայմանագիրը կարելի է դասել աշխատանքների կատարման պայմանագրերի կամ ծառայությունների մատուցման պայմանագրեր շարքում:

Տվյալ հարցի դիտարկման ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ կարևոր հանգամանքին: Ծառայությունների մատուցման ընթացքում կատարողը նաև կարող է պատվիրատուին մատուցել իր գործունեության որոշակի առարկայացված արդյունքներ: Օրինակ, իրավաբանական հարցերով զրավոր խորհրդատվություններ և բացառություններ, պայմանագրերի, դիմումների, բողոքների և իրավական բնույթի այլ փաստաթղթերի նախագծեր ներկայացնել:

Հետևաբար ծառայությունների մատուցման պայմանագրերի և աշխատանքների կատարման պայմանագրերի՝ ըստ դրանց արդյունքի սահմանազատման ժամանակ անհրաժեշտ է որոշել, ինչին էր ուղղված համապատասխան պարտավորությունը՝ որոշակի առարկայացված արդյունքի ստացմանը, թե կատարողի կողմից որոշակի գործունեության իրականացմանը:

Չնայած, որ հայրենական գործարարական պրակտիկայում մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագիրը սովորաբար անվանում են մարքեթինգային ծառայությունների մատուցման պայմանագիր,



այնուամենայնիվ, մեր կարծիքով, այդ պայմանագիրը դասվում է աշխատանքների կատարման պայմանագրերի խմբին:

ՀՀ Քաղ. օր.-ի գլուխ 37-38-ում պարունակվող նորմերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ չնայած որոշակի նմանությանը կապալի պայմանագիրը, գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների կատարման պայմանագիրը և մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագիրը իրենցից ներկայացնում են երեք միանգամայն ինքնուրույն պայմանագրերի տեսակ և չեն հարաբերվում միմյանց հետ որպես տեսակ և նրա տարատեսակներ:

Պայմանավորված այն հանգամանքով, որ մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագրով պատվիրատուն շահագրգռված է հենց արդյունքի ստացման մեջ, մարքեթինգային հետազոտությունների արդյունքի պատահական կորստի ռիսկը պետք է կրի կատարողը, ինչը համապատասխանում է կապալի պայմանագրով նախատեսված կողմերի միջև ռիսկի բաշխման կանոններին (ՀՀ Քաղ. օր.-ի հոդված 703):

Հաշվի անելով այն փաստը, որ մարքեթինգային հետազոտությունները պատշաճ կերպով կարող են իրականացվել համապատասխան որակավորմամբ և տվյալ ոլորտում աշխատանքի որոշակի հմտություններով օժտված ցանկացած մասնագետի կողմից՝ կատարողը իրավունք ունի մարքեթինգային հետազոտությունների կատարման աշխատանքներում ներգրավվել երրորդ անձանց, իսկ կատարողի կողմից պայմանագրային պարտականություններն անձամբ կատարելու պարտականությունը նախատեսելը պետք է դիտարկել իբրև բացառություն կանոններից:

Արտասահմանյան պրակտիկայում մարքեթինգային հետազոտությունների իրականացման գործընթացը կարգավորվում է կապալի պայմանագրի շրջանակներում<sup>9</sup>: Սակայն հայրենական պրակտիկայում նման մոտեցման կիրառումը բավականաչափ ընդունելի չէ հետևյալ պատճառներով: **Սուաշինը**, մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագրի դիտարկումը իբրև կապալի պայմանագրի պարզ տարատեսակ

հաշվի չի առնում մարքեթինգային հետազոտության անցկացման ընթացքում իրականացվող աշխատանքների յուրահատկությունը, մասնավորապես գիտական մեթոդների, հնարքների և գործիքների կիրառումը: **Երկրորդը**, մարքեթինգային աշխատանքներին հատուկ է հետազոտական տարրը, ինչը ընդհանրապես բնորոշ չէ կապալային պայմանագրերին: **Երրորդը**, մարքեթինգային հետազոտությունների արդյունքը՝ մարքեթինգային տեղեկատվությունը, թեև առարկայացվում է իրային տեսքով (կատարված հետազոտությունների վերաբերյալ հաշվետվության տեսքով), այնուամենայնիվ իրենից ներկայացնում է ոչ նյութական օբյեկտ և չի կարող հանգեցվել նյութական կրիչի: Հետևաբար կապալի պայմանագրին նվիրված նորմերը ի վիճակի չեն կարգավորել մարքեթինգային հետազոտությունների իրականացման ընթացքում կողմերի փոխհարաբերությունների բոլոր ասպեկտները:

Հաշվի առնելով մարքեթինգային հետազոտությունների ընթացքում իրականացվող աշխատանքների առանձնահատկությունները, մարքեթինգային հետազոտությունների արդյունքի յուրահատկությունը, մարքեթինգային տեղեկատվությունը՝ կարելի է եզրակացնել, որ մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագիրն իրենից ներկայացնում է ինքնուրույն քաղաքացիաիրավական պայմանագիր, հանդիսանում է աշխատանքների կատարման պայմանագրերի տեսակներից մեկը և պահանջում է առանձին իրավական կարգավորում:

Մարքեթինգային հետազոտությունների կատարման պայմանագրի՝ իբրև աշխատանքների կատարման պայմանագրի ինքնուրույն քաղաքացիաիրավական պայմանագրի հստակ և մանրամասն մշակումը կոչված է կարգավորելու մարքեթինգային հետազոտությունների անցկացման պրակտիկան, բարձրացնելու դրանց արդյունավետությունը, ապահովելու մարքեթինգային հետազոտությունների ընթացքում կողմերի իրավունքների և շահերի լավագույն պաշտպանություն:

**Նաիրա ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ**  
**Իրավագիտության մագիստրոս**

<sup>9</sup>St'u Гражданское и торговое право капиталистических государств / Под ред. Е.А. Васильева. М.: Международные отношения, 1993, էջ 347-348:

## **Ավագակությունը որպես հանցակազմ և հափշտակության տեսակ**

Սեփականության դեմ ուղղված շահադիտական-բռնի հանցագործություններից ամենավտանգավորը ավագակությունն է<sup>1</sup>, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 175 հոդվածով. «1. Ավագակությունը ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակումը, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնության գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով»:

Ինչպես նշում է պրոֆեսոր Ս.Ս. Ավետիսյանը. «Ավագակությունը սեփականության (հիմնական օբյեկտ) ինչպես նաև կյանքի և առողջության (լրացուցիչ օբյեկտ) դեմ ուղղված ամենատարածված և առավել վտանգավոր հանցագործություններից մեկն է»<sup>2</sup>:

Գույքային հանցագործությունների շարքում ավագակությունն աչքի է ընկնում հասարակական վտանգավորության առավել բարձր աստիճանով, քանի որ այն ուղեկցվում է անձի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնության կամ այդպիսի բռնություն գործադրելու սպառնալիքով<sup>3</sup>:

Ավագակությունը հանդիսանում է հափշտակության տեսակներից մեկը<sup>4</sup>:

Ավագակությունը, որպես կանոն, նախօրոք պլանավորվում է:

Նախապատրաստական գործողությունները բնորոշ են նախնական համաձայնությանը կամ կազմակերպված խմբի կողմից կատարվող ավագակային հարձակումներին:

Ավագակության հիմնական հատկանիշներն են՝ ա) հարձակումը, բ) կյանքի և առողջության համար ֆիզիկական կամ հոգեբանական բռնության գործադրումը կամ այդպիսի

բռնության գործադրման սպառնալիքի առկայությունը և գ) ուրիշի գույքին տիրելու նպատակը<sup>5</sup>:

Ավագակության հանցակազմի, որպես ինքնուրույն ձևի վերաբերյալ հարցը խիստ վիճելի է<sup>6</sup>: Այսպես, Ս.Ս. Կոչոյը ավագակությունը դասում է սեփականության դեմ ուղղված շահադիտական հանցագործությունների շարքին, որը չի պարունակում հափշտակության հատկանիշներ<sup>7</sup>:

Ն.Ա. Լոպաշենկոն գտնում է, որ «ժամանակակից օրենսդրական կառուցակարգը ավագակության մասին գտնվում է խորը հակասության մեջ հափշտակության օժտորական բնորոշման հետ: Հարձակումը նպատակ հետապնդելով հափշտակելու ուրիշի գույքը՝ կապված տուժողի նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական ներգործությամբ, հավասարազոր չէ հափշտակությանը: Առավելևս, հափշտակությունն ընդհանրապես մնում է ավագակության սահմաններից դուրս: Հետևաբար ավագակությունը դիտարկել որպես հափշտակության ձև՝ չունի ոչ մի հիմնավորում»<sup>8</sup>:

Ստեղծված դրությունից դուրս գալու հա-

<sup>1</sup>Տե՛ս Ավետիսյան Ս.Ս. Разбой и вымогательство (ст. 162 и 163 УК РФ) / Энциклопедия уголовного права. Т. 18. Преступления против собственности. СПб., 2011, с 582-606; Коваленко В.И. Современные рабежи и разбой и их предупреждение. Ростов-на Дону. 2008.

<sup>2</sup>Տե՛ս Սերջիկ Ավետիսյան. Некоторые проблемы квалификации разбоя в свете обеспечения справедливости и других принципов №12 (137), 2010, էջ 18:

<sup>3</sup>Ենգիբարյան Վ.Գ. Առանձին տեսակի հանցագործությունների քննության մեթոդիկա (կրիմինալիստական մեթոդիկա): Երևան, 2009, էջ 119:

<sup>4</sup>Տե՛ս Ավետիսյան Ս.Ս., նշվ. աշխ., էջ 584:

<sup>5</sup>Տե՛ս Полный курс уголовного права. В. 5-и томах. Том 3. Преступления в сфере экономики. СПб., 2008, с. 180.

<sup>6</sup>Տե՛ս Шульга А.В. Объект и предмет преступлений против собственности в условиях рыночных отношений и информационного общества.- Дисс. ... докт. юрид. наук. Волгоград, 2008, Герасимова Е.В. Предмет хищения в российском уголовном праве.-Дисс. ... к.ю.н. М., 2005; Мазуренко Е.А. Объект и предмет уголовно-правовой охраны преступлений против собственности: современные проблемы квалификации — Дисс. ... канд.юрид. наук: Н. Новгород, 2000.

<sup>7</sup>Տե՛ս Кочои С.М. Ответственность за корыстные преступления против собственности по законодательству России. Дисс. ... докт. юрид. наук. М., 2008, с. 98.

<sup>8</sup>Լոպաշենկո Н.А. Преступления против собственности. М., 2005, с. 68-69.

մար Ս.Մ. Կոչոյը առաջարկում է փոփոխել քրեական օրենքը՝ ավագակությունը ձևակերպել որպես նյութական հանցակազմ<sup>9</sup> :

Նման կարծիք է արտահայտված նաև «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք» դասագրքում<sup>10</sup> :

Վերոնշյալ կարծիքների հետ համամիտ չէ պրոֆեսոր Ս.Ս. Ավետիսյանը: Թեզն այն մասին, որ հափշտակությունը դուրս է մնում ավագակության սահմաններից, անվիճելի չէ<sup>11</sup> :

Մասնագիտական գրականության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ ավագակությունը հանդիսանում է հափշտակության տարատեսակ<sup>12</sup> : Նման տեսակետը պաշտպանում է նաև պրոֆեսոր Ս.Ս. Ավետիսյանը<sup>13</sup> : Ես նույնպես միանում եմ այդ տեսակետին, քանի որ ավագակության հիմնական նպատակն է՝ ուրիշի գույքի հափշտակությունը, անկախ օբյեկտիվ կողմից դրսևորած առանձ-նահատկություններից:

Այս իմաստով գտնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված ավագակության բնորոշումը ավելի ընդունելի և հիմնավորված է:

Ավագակությունը երկօբյեկտ հանցագործություն է: Օբյեկտներից առաջինը վերաբերվում է սեփականության հասարակական հարաբերություններին՝ կապված նյութական բարիքների բաշխման կարգի հետ, որը համընկնում է ցանկացած հափշտակության օբյեկտի հետ<sup>14</sup> : Սեփականության հարաբերությունը հանդիսանում է ավագակության գլխավոր օբյեկտը<sup>15</sup> :

Ավագակության հիմնական անմիջական օբյեկտի հարցը կարող է տարակուսանք առաջացնել, քանզի ինչպես հայտնի է, ներկայումս քրեական օրենսդրությունը առաջնային է համարում մարդու կյանքն ու առողջությունը և հետո միայն այլ արժեքները, այդ թվում սեփականությունը: Սակայն ավագակության հիմնական անմիջական օբյեկտի վերաբերյալ մոտեցումն արդարացվում է նրանով, որ սպանությունը դուրս է մնում ավագակության դիսպոզիցիայից և ավագակության հետ կապված սպանությունը որակվում է համակցությամբ: Իսկ եթե ավագակության ժամանակ

տուժողի առողջությանը դիտավորյալ ծանր վնաս է պատճառվում, այն համարվում է ավագակության ծանրացնող հանգամանք և ավելի խիստ է պատժվում: Առողջությանը պատճառված մյուս վնասները կլանվում են ավագակության հանցակազմում: Բացի այդ, շատ կարևոր է հանցավորի դիտավորությունը: Ավագակության ժամանակ այն առաջին հերթին ուղղված է գույքի հափշտակմանը, իսկ անձի կյանքի և առողջության համար վտանգավոր բռնությունը կամ այդպիսի բռնության սպառնալիքը, հանդիսանում է միայն նպատակին հասնելու միջոց:

Գրականության մեջ կան նաև այլ տեսակետներ, որոնք մեր կարծիքով, նույնպես արժանի են ուշադրության<sup>16</sup> :

Ավագակության օբյեկտիվ կողմը արտահայտվում է ակտիվ և ագրեսիվ գործողությամբ՝ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով, որը կատարվել է կյանքի և առողջության համար վտանգավոր բռնության գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով<sup>17</sup> : Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 175 հոդվածի բովանդակության վերլուծությունից կարելի է ենթադրել, որ ավագակության օբյեկտիվ կողմի հիմնական հատկանիշներն են՝ 1) հարձակումը՝ խիստ ընդգծված ագրեսիվությամբ, 2) բռնությունը՝ ռեալ (առկա), որն ուղղված է կյանքի կամ առողջության դեմ, 3) կամ բռնության գործադրելու սպառնալիքը, որը նույնպես ռեալ (առկա) է, 4) ուրիշի գույքի հափշտակությունը:

«Հարձակումը» և «բռնության գործադրելը» (կամ «բռնություն գործադրելու նպատակը») թեկուզև ինքնուրույն հասկացություն են, սակայն խիստ փոխկապված և փոխպայմանավորված երևույթներ են: Քանզի հարձակումը ավագակության ժամանակ միշտ կապված է բռնության հետ: Առանց բռնության կա դրա գործադրման սպառնալիքը, հարձակումը կորցնում է իր քրեաիրավական բնույթը: Սակայն Ս.Մ. Կոչոյը գտնում է, որ «ավագակության դեպքում վճռորոշը ոչ թե հարձակումն է, այլ բռնության գործադրումը տուժողի նկատմամբ»<sup>18</sup> :

Քրեական իրավունքի տեսության մեջ

<sup>9</sup>Кочои С.М., նշվ. աշխ., էջ 90-91.

<sup>10</sup> Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: Երևան, 2011, էջ 349:

<sup>11</sup>Տե՛ս Энциклопедия уголовного права. Т.18. Преступления против собственности – СПб., 2011, с. 583.

<sup>12</sup>Տե՛ս Бойцов А.И. Преступления против собственности. СПб., 2002; Устинов В.С. Преступления против собственности: уголовно-правовые вопросы. Н. Новгород, 1998; Векленко В.В. Квалификация хищений чужого имущества. Дисс. ... докт. юрид. наук. Омск, 2001; Верина Г.В. Дифференциация поголовной ответственности за преступления против собственности: проблемы теории и практики. Дисс. ... докт. юрид. наук. Саратов, 2003.

<sup>13</sup>Տե՛ս Энциклопедия уголовного права. Т.18. Преступления против собственности – СПб., 2011, с. 584.

<sup>14</sup>Տե՛ս Энциклопедия уголовного права. Т.18. с. 584.

<sup>15</sup>Տե՛ս նույն տեղը:

<sup>16</sup>Տե՛ս Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. /Под ред. В.М. Лебедева. М., 2002, с. 378-379.

<sup>17</sup>Տե՛ս Энциклопедия уголовного права. Т.18. с. 18. (հեղինակ՝ Ս.Ս. Ավետիսյան), էջ 585:

նշված հարցի վերաբերյալ միատեսակ մոտեցում գոյություն չունի:

Ըստ պրոֆեսոր Բ. Վ. Վոլժենկինի. «բռնությունը կամ բռնության սպառնալիքը՝ հարձակման տարրերից մեկն է, որը ներառում է նաև այլ գործողություններ»<sup>19</sup>:

Ավագակության կատարման եղանակների հիմքում ընկած է ֆիզիկական կամ հոգեկան բռնության կիրառումը: Հանցագործների կողմից բռնությունը կիրառվում է տուժողի կամ այլ անձանց դիմադրությունը կոտրելու, համաշտակվելիք արժեքների գտնվելու տեղը պարզելու, տուժողի կամ այլ անձանց կողմից իրավապահ մարմիններին դիմելը կանխելու կամ հետաձգելու համար:

Իրավաբանական գրականության մեջ կարելի է հանդիպել տեսակետի, ըստ որի ավագակությունը դիտվում է որպես ձևական հանցակազմ<sup>20</sup>: Մենք համամիտ ենք պրոֆեսոր Ս.Ս. Ավետիսյանի կարծիքի հետ, ըստ որի. «Ավագակությունը տիպիկ հատված հանցակազմ է»<sup>21</sup>:

Ըստ պրոֆեսոր Գ.Լ. Կրիգերի. «Ավագակության օբյեկտիվ կողմը երկակի բնույթ ունի՝ հարձակում և բռնություն կամ գործադրման սպառնալիք»:

Հարձակումը որպես ավագակության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, բնութագրվում է հետևյալ հատկանիշներով. 1) այն իրենից ներկայացնում է արարքի ազդեցիվ ներգործություն տուժողի նկատմամբ, 2) այն տուժողի համար անսպասելի և հանկարծակի է, 3) այն միշտ ուղեկցվում է բռնությամբ՝ ֆիզիկական կամ հոգեբանական դրսևորումներով, 4) բռնությունը ավագակության ժամանակ վտանգավոր է կյանքի կամ առողջության համար, 5) հարձակման ժամանակ գործադրվող բռնությունը կամ դրա գործադրման սպառնալիքը պետք է լինի իրական և վտանգավոր կյանքի կամ առողջության համար:

Գրականության մեջ կարծիք կա, ըստ որի առաջարկվում է ավագակության դիսպոզիցիայից հանել «հարձակում» հասկացությունը և թողնել միայն վտանգավոր բռնություն գործադրելը կամ դրա գործադրելու սպառնալիքը:

Նման կարծիքի հետ կարելի է համաձայնվել, քանի որ ինչպես ցույց է տալիս հանցավորության արակտիկան, ավագակություն

հնարավոր է իրականացնել առանց հարձակման, սակայն վտանգավոր բռնության եղանակով (օրինակ՝ հանգիստ մուտք են գործում բնակարան և հետո գործադրում բռնություն)<sup>22</sup>: Հանցակազմի այդպիսի կառուցվածքը հնարավորություն կտա ավագակության հանցակազմը ծիշտ սահմանազատել կյանքի և առողջության դեմ ուղղված ոտնձգություններից: Սակայն այս պարագայում անհրաժեշտ է ընդգծել, որ բռնությունը կամ դրա գործադրման սպառնալիքը, որպես ավագակության օբյեկտիվ կողմից պարտադիր հատկանիշ, պետք է վտանգավոր լինի տուժողի կյանքի կամ առողջության համար:

Բռնությունը կամ դրա գործադրման սպառնալիքը պետք է բնութագրվի դիտավորությամբ և ուրիշի գույքը համաշտակելու նպատակ հետապնդի: Եթե բռնությունը տեղի է ունենում հանցավորի անզուլ գործողությունների հետևանքով, ապա դրանք չեն կարող դիտվել որպես բռնություն՝ ավագակության դիսպոզիցիա իմաստով՝ որպես «հանցավոր բռնություն»:

Ավագակության սուբյեկտը՝ իր քրեաիրավական հատկանիշներով, չի տարբերվում գողության և կողոպուտի սուբյեկտից: Ավագակության սուբյեկտ կարող է լինել 14 տարին բոլորած մեղսունակ ֆիզիկական անձը:

Ավագակության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ և ուրիշի գույքը համաշտակելու նպատակով:

Իր օրենսդրական ամրագրումով՝ ավագակությունը դասվում է, այսպես կոչված, հատված հանցակազմների շարքին: Հատված (հատած) հանցակազմերը ձևական հանցակազմի տարատեսակ են, սակայն սրանցում հանցագործության ավարտն օրենսդիրը կապում է ավելի վաղ պահի հետ: Հատված հանցակազմերով նկարագրված հանցագործությունը ավարտված ճանաչելու համար բավական է օրենքում ամրագրված այն գործողությունների կատարումը, որոնք, փաստորեն, հանցագործության նախապատրաստություն են ներկայացնում: Դիցուկ, ավագակությունը ավարտված է համարվում հարձակման պահից՝ կապված բռնության հետ, որը վտանգավոր է կյանքի համար:

Սակայն, հանդիպում ենք նաև այլ տեսակետի: Օրինակ, Ս.Ս. Կոչոյը գտնում է, որ ավա-

<sup>19</sup> St' u Kochi C.M. Ответственность за корыстные преступление против собственности по законодательству России. Дисс. ... докт.

<sup>20</sup> St' u Volzhenkin B. V. Вопросы квалификации краж, грабежей и разбоев, современных с целью завладения имуществом граждан. Л., 1981, с. 16; St' u Gal Simonov B.I., Шумихин В. Г. Преступное насилие: понятие, характеристика и квалификация насильственных посягательств на собственность. Пермь, 1992, с. 88-89.

<sup>21</sup> St' u Serzhik Avetisyan. Некоторые проблемы квалификации разбоя в свете обеспечения справедливости и других принципов уголовного права // Դատական իշխանություն, 12, 2010, էջ 23:

<sup>22</sup> «Հանգիստ» մուտք գործելը կարող է դրսևորվել տարբեր եղանակներով՝ խաբեությամբ, ղռան կողպեքը բացելով, զագ օգտագործելով և այլն:

զակությունը՝ ձևական հանցակազմ է<sup>23</sup> :

Մեր կարծիքով, այդպիսի տեսակետի հետ դժվար է համաձայնվել, քանի որ ձևական հանցակազմերում հետևանքները նկարագրված չեն որպես հանցակազմի պարտադիր հատկանիշ: Նման դեպքերում արարքն ավարտված հանցագործություն ճանաչելու համար բավական է օրենքով նկարագրված հանցավոր արարքի կատարումը:

Ավագակությունը հանդիսանում է տիպիկ հատված հանցակազմ: Ինչպես նշում է Ս.Ս. Ավետիսյանը. «Հատված հանցակազմը գտնվում է ձևական և նյութական հանցագործությունների միջև որպես միջանկյալ դրություն»<sup>24</sup>: Ավագակությունը չի կարելի դիտարկել նաև որպես նյութական հանցակազմ, քանի որ ավագակության ժամանակ հափշտակված գույքը ինքնին չի կազմում առանձին ինքնուրույն հանցակազմ, այլ ներառվում է ավագակության հանցակազմի մեջ:

Բռնության գործարդումը համարելով ավագակության պարտադիր հատկանիշ՝ օրենքն այն ձևակերպել է երկու ձևով՝ ա) կյանքի համար վտանգավոր և բ) առողջության համար վտանգավոր:

Բռնությունը պետք է համարել կյանքի համար վտանգավոր, երբ՝

1) Հանցավորը դիտավորությամբ տուժողին կյանքից զրկում է՝ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով: Ինչպես արդեն նշվել է, ավագակության հանցակազմը սպանությունն իր մեջ չի ներառում և նման դեպքերում արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ ավագակություն (քր. օր-ի հոդված 175-ի համապատասխան մասով) և ավագակության հետ զուգորդված սպանություն (հոդված 104-ի երկրորդ մասի 8-րդ կետ): Ինչ վերաբերում է այնպիսի բռնությանը, որի հետևանքով մեկ ուրիշը կյանքից զրկվել է անզուշտությամբ, ապա արարքը պետք է որակել միայն որպես ավագակություն (եթե բռնությունը դրսևորվում է դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելով, որը անզուշտությամբ առաջացնում է տուժողի մահ, ապա արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ քր. օր-ի հոդված 175-ի երրորդ մասի երրորդ կետով և հոդված 112-ի երկրորդ մասի տասնչորսերորդ կետով):

2) Հանցավորը տուժողի նկատմամբ կատարում է այնպիսի գործողություններ, որոնք վտանգի տակ են դնում տուժողի կյանքը, և շարունակվում են այնքան ժամանակ, քանի դեռ չի կատարվում հանցավորի պահանջը՝ հանձնել գույքը կամ ասել գույքի տեղը: Ընդ որում, նշանակություն չունի՝ տուժողին փաս-

տացի վնաս պատճառվել է, թե՞ ոչ:

Եթե հանցավորը կամովին դադարեցնում է կյանքի համար վտանգավոր գործողությունները, սակայն շարունակում է պահանջել գույքը, ապա արարքը որակվում է միայն որպես ավագակություն:

Եթե նշված գործողությունները դադարեցվում են հանցավորի կամքից անկախ հանգամանքներով (տուժողի դիմադրություն, կողմնակի անձանց միջամտություն և այլն), սուբյեկտիվ կողմի առկայության դեպքում (գործողությունները, հակառակ դեպքում, կշարունակվեին մինչև տուժողին կյանքից զրկելը), արարքը պետք է որակել որպես ավագակություն և ավագակության հետ զուգորդված սպանության փորձ:

Առողջության համար վտանգավոր բռնություն են հանդիսանում առողջությանը ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս պատճառելը: Առողջությանը հասցված վնասը արտաքին միջավայրի ֆիզիկական, քիմիական, կենսաբանական և հոգեկան գործոնների ազդեցության արդյունքում մարդու օրգանների, հյուսվածքների անատոմիական ամբողջականության և/կամ ֆիզիոլոգիական գործառույթների խախտումն է, որը հանգեցրել է քրեական օրենքով նախատեսված հետևանքների: Առողջությանը թեթև կամ միջին ծանրության վնաս պատճառելը ընդգրկվում է հասարակ ավագակության հանցակազմի մեջ և ինքնուրույն չի որակվում: Սակայն ավագակության հիմնական անմիջական օբյեկտի վերաբերյալ մոտեցումն արդարացվում է նրանով, որ սպանությունը դուրս է մնում ավագակության դիսպոզիցիայից և ավագակության հետ կապված սպանությունը որակվում է համակցությամբ: Իսկ եթե ավագակության ժամանակ տուժողի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս է պատճառվում, այն համարվում է ավագակության ծանրացնող հանգամանք և ավելի խիստ է պատժվում: Առողջությանը պատճառված մյուս վնասները կլանվում են ավագակության հանցակազմում: Բացի այդ, շատ կարևոր է հանցավորի դիտավորությունը, ավագակության ժամանակ այն առաջին հերթին ուղղված է գույքի հափշտակմանը, իսկ անձի կյանքի և առողջության համար վտանգավոր բռնությունը կամ այդպիսի բռնության սպառնալիքը հանդիսանում է միայն նպատակին հասնելու միջոց:

**Ռոման ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**  
**Հայցորդ**

<sup>23</sup>Տե՛ս Кочои С.М. Ответственность за корыстные преступления против собственности, с. 233.

<sup>24</sup>Տե՛ս Сержик Аветисян. Некоторые проблемы квалификации разбоя в свете обеспечения справедливости и других принципов уголовного права // Դատական իշխանություն, <sup>1</sup> 12, 2010, с. 23:

## **Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի հարաբերակցությունը արարքի հանցավորությունը բացառող այլ հանգամանքների հետ**

Արարքի հանցավորությունը բացառող հանգամանքները նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ գլխում՝ 42-47-րդ հոդվածներում: Տվյալ հանգամանքները վկայում են ոչ թե արարքում հանցագործության որևէ հատկանիշի բացակայության, այլ արարքների իրավաչափության մասին՝ անկախ դրանցով պատճառած վնասից: Տվյալ հանգամանքների թվում, բացի հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելուց, նախատեսվում են անհրաժեշտ պաշտպանությունը, ծայրահեղ անհրաժեշտությունը, ֆիզիկական ու հոգեբանական հարկադրանքը, հիմնավորված ռիսկը, հրամանի կամ կարգադրության կատարումը<sup>1</sup>:

Հարկավոր է նշել, որ նշված հանգամանքները սերտորեն փոխկապակցված են: Դրանցից որոշները առանձին տարրերով նման են միմյանց: Մասնավորապես, ծայրահեղ անհրաժեշտության վիճակը, այսինքն՝ սպառնացող ավելի մեծ վտանգը վերացնելու համար վնասի պատճառումը, նկատվում է հանցանք կատարած անձին բռնելու, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի, դեպքերում: Արարքի հանցավորությունը բացառող առանձին հանգամանքներն արտահայտում են միանգամայն տարբեր, միմյանց հետ կապ չունեցող իրադրություններ: Օրինակ, որակապես այլ իրավական բնույթ ունեն այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը և ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը:

Այս կապակցությամբ որոշ հեղինակներ ի կողմից փորձեր են ձեռնարկվել խմբա-

վորել արարքի հանցավորությունը բացառող դիտարկվող հանգամանքները: Այսպես, Ա. Ա. Տեր-Հակոբովն առանձնացնում է դասակարգման հետևյալ հիմքերը.. ա/ արտաքին ներգործություն (անհաղթահարելի ուժ, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանք, ծայրահեղ անհրաժեշտություն), բ/ մասնագիտական պարտականություն (հրամանի կատարում, զենքի կիրառում, գիտական և արտադրական ռիսկ); գ/ սուբյեկտիվ իրավունք (հանցագործի ձեռքակալում, պաշտոնատար անձանց հակաիրավական գործողություններից պաշտպանություն)<sup>2</sup>:

Յու. Վ. Բաուլինը արարքի հանցավորությունը բացառող իրավաչափ արարքները ստորաբաժանում է երեք խմբի. 1/ իրավունքի իրականացում; 2/ իրավական պարտականությունների կատարում; 3/ ծառայողական պարտքի կատարում<sup>3</sup>:

Հանցանք կատարած անձին վնաս

<sup>1</sup>Գոյություն ունեն արարքի հանցավորությունը /հանրային վտանգավորությունն ու հակաիրավականությունը/ բացառող հանգամանքների դասակարգման այլ խմբեր ևս: Տե՛ս ավելի մանրամասն. Баулин Ю.В.Обстоятельства, исключающие преступность деяния, և այլն էջ 22-25:

<sup>2</sup>Տե՛ս Российское уголовное право. Общая часть /Под ред. В.Н.Кудрявцева и А.В.Наумова. М., 1997. էջ 228-229:

<sup>3</sup>Տե՛ս Баулин Ю.В. Обстоятельства, исключающие преступность деяния.... էջ 60:

պատճառելը դասվում է հանրորեն օգտակար գործողությունների թվին: Հանրային օգտակարության հատկություն ունեն մեկ արարքի հանցավորությունը բացառող այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են՝ անհրաժեշտ պաշտպանությունը, ծայրահեղ անհրաժեշտությունը, հիմնավորված ռիսկը:

Որպես մեր կողմից քննարկվող ինստիտուտի՝ վերը նշվածների հետ ընդհանուր և միավորող հատկանիշ հանդես է գալիս մեկ այս կամ այն իրադրությունից կախված՝ վնասի պատճառման անհրաժեշտության ու բավարարության սոցիալ-բարոյական չափանիշը: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ պաշտպանության, հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու, ծայրահեղ անհրաժեշտության և հիմնավորված ռիսկի ժամանակ վնասի պատճառումը թույլատրվում է միայն անհրաժեշտության, երբեմն միջոցի եզակիության իրադրությունում, վտանգավոր հետևանքների կամ դրանց առաջացման վտանգի վերացման այլ հնարավոր միջոցների բացակայության ժամանակ: Վնասի պատճառումն անհրաժեշտ է, առանց դրա կիրառման հնարավոր չէ հասնել սոցիալապես օգտակար արդյունքի:

Միևնույն ժամանակ, բոլոր դիտարկող ինստիտուտներում վնասի պատճառումը չի կրում կամայական բնույթ, այն սահմանափակված է: Վնասը թույլատրվում է միայն այն չափով, որը համապատասխանում է դրա միջոցով ակնկալվող նպատակին: Վնասի համապատասխանումը սոցիալապես նշանակալից արդյունքին անհրաժեշտ պաշտպանության, հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու, ծայրահեղ անհրաժեշտության ու հիմնավորված ռիսկի ժամանակ տարբեր է: Յուրաքանչյուր ինստիտուտի նկատմամբ համապատասխանելիության տվյալ կանոնի պահպանումը կոչված է բացառել անհրաժեշտությամբ չառաջացված վնասի պատճառման հնարավորությունը:

Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության պայմաններն առավելապես մոտ են անհրաժեշտ պաշտպանության իրականացման պայմաններին: Երկու դեպքերում էլ

համապատասխան հանգամանքների առաջացման համար հանդես է գալիս հանցավոր ոտնձգությունը: Ըստ էության, հանդնկնում են մեկ երկու գործողությունների համաչափության, դրանց սահմանազանցման հատկանիշները: Նշված երկու հանգամանքներում կիրառված գործողությունները դրսևորվում են անձին ֆիզիկական կամ գույքային վնաս պատճառելով:

Նոր քրեական օրենսգրքում անհրաժեշտ պաշտպանության ու հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտների տարանջատումը ստացավ հստակ արտահայտում: Նշված ինստիտուտների տարբերությունները կայանում են հետևյալում.

1) անհրաժեշտ պաշտպանությունը սովորաբար իրականացվում է հանցավոր, քրեապես պատժելի արարքի դեմ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ պաշտպանությունը թույլատրվում է հոգեկան հիվանդի, անչափահասի կամ փաստական սխալի ազդեցության տակ գործող անձի ոտնձգությունից, ծառայողական դիրքի չարաշահման եղևակով քաղաքացիների օրինական իրավունքների ու շահերի նկատմամբ ոտնձգություն իրականացնող պաշտոնատար անձանց անօրինական գործողություններից և այլն<sup>4</sup>: ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածի համաձայն բռնելիս վնասի պատճառել հնարավոր է միայն հանցանք կատարած անձին:

2) անհրաժեշտ պաշտպանությունն իրականացվում է առկա, այսինքն՝ սկսված, սակայն դեռ չավարտված ոտնձգության դեմ: Հանցանք կատարած անձին բռնելը իրականացվում է հանցագործություն կատարող (հանցագործությունը նախապատրաստող կամ առավել հազվադեպ՝ հանցագործության փորձ կատարող) կամ արդեն իսկ կատարած անձի նկատմամբ, իշխանության մարմիններ հասցնելու և նրա կողմից նոր հանցագործությունների կատարումը կանխելու նպատակով: Հանցագործին բռնելը, այդ թվում՝ նրան վնաս պատճառելու եղևակով, կարող է իրականացվել նրա կողմից հանցագործություն կատարելուց հետո:

<sup>4</sup>Տե՛ս Сахаров А. Б. Обстоятельства, исключющие уголовную ответственность//Советское государство и право. 1987. N 11. էջ 111-118:

Չարկավոր է նշել, որ կատարված հան-  
ցագործության վայրում անձին բռնելը հա-  
մընկնում է նրա կողմից կատարված  
ոտնձգության խափանման հետ: Այս դեպ-  
քում պահպանվում է անհրաժեշտ պաշտ-  
պանության իրադրությունը: Չարկ է նշել,  
որ անհրաժեշտ պաշտպանության իրա-  
վունքը մշտապես գոյություն ունի, երբ  
անձը, փորձելով թաքնվել, ակտիվ դիմադ-  
րություն է ցուցաբերում իշխանության  
ներկայացուցչի օրինական գործողու-  
թյուններին կամ քաղաքացիներին՝ նրանց  
նկատմամբ կատարելով հանցավոր ոտնձ-  
գություններ: Ոտնձգողին պատճառվող  
վնասն այդպիսի դեպքերում արդարաց-  
ված է ըստ անհրաժեշտ պաշտպանության  
կանոնների: Միևնույն ժամանակ, երբ  
հանցագործության կատարումը կանխ-  
ված է կամ ավարտված, անձն իրակա-  
նացնում է հանցագործին բռնելու և նրան  
իշխանության համապատասխան մար-  
միներ բերելու խնդիրը: Այդ ժամանակ  
նրա գործողությունները պետք է համա-  
պատասխանեն հանցանք կատարած ան-  
ձին բռնելիս վնաս պատճառելուն ներկա-  
յացվող պահանջներին;

3) անհրաժեշտ պաշտպանության ժա-  
մանակ անմիջապես պաշտպանվում է  
անձն ու պաշտպանվողի (այլ անձանց) ի-  
րավունքները, ինչպես նաև հասարակու-  
թյան ու պետության շահերը: Հանցագոր-  
ծություն կատարած անձին բռնելու նպա-  
տակներն ունեն ավելի նեղ ոլորտ: Հան-  
ցագործին բռնելով՝ ապահովվում են ար-  
դարադատության շահերը, հանցագոր-  
ծության դեմ պայքարի կանխարգելիչ  
խնդիրները;

4) անհրաժեշտ պաշտպանության ի-  
րավիճակում ոտնձգողի գործողություննե-  
րը ստեղծում են անմիջական վտանգ պե-  
տության կողմից պաշտպանվող հարաբե-  
րություններին, վնաս են պատճառում  
դրանց: Հանցանք կատարած անձի՝ քրեա-  
կան պատասխանատվությունից և պատ-  
ժից խուսափումը չի վնասում քրեական օ-  
րենքով պաշտպանվող հարաբերություն-  
ները, բացառությամբ ազատագրկման  
վայրից, կալանավորվածներին պահելու  
վայրից կամ ձերբակալվածներին պահե-  
լու վայրից անձի փախուստի, որը ոտնձ-  
գում է իրավակիրառ մարմինների գործու-  
նեությանը, ապակազմակերպում է քրեա-  
կատարողական, հետախուզական, դա-  
տական մարմինների գործունեությունը,

փախչողի կողմից նոր հանցագործու-  
թյունների կատարման վտանգ է ստեղծում:  
Ուստի, տվյալ դեպքում վնասի պատճա-  
ռումը պայմանավորվում է քրեորեն պատ-  
ժելի ոտնձգությունից հասարակական ու  
պետական շահերի պաշտպանության  
անհրաժեշտությամբ;

5) անհրաժեշտ պաշտպանության ժա-  
մանակ վնաս պատճառելը թույլատրվում  
է անկախ ոտնձգությունից խուսափելու  
կամ այլ անձանց կամ իշխանության մար-  
միներին օգնության համար դիմելու առ-  
կա հնարավորությունից: Հանցանք կա-  
տարած անձին բռնելիս նրան վնաս պատ-  
ճառելը հնարավոր է միայն նրան բռնելու  
այլ միջոցների բացակայության դեպքում:

Առանձնահատկությունների համան-  
ման չափանիշներ են առկա նաև հան-  
ցանք կատարած անձին բռնելիս վնաս  
պատճառելու և ծայրահեղ անհրաժեշ-  
տության ինստիտուտների միջև: Այդ ա-  
ռանձնահատկությունները, մասնավորա-  
պես, վերաբերում են.

**1) պաշտպանվող շահերի ոլորտին.**  
ծայրահեղ անհրաժեշտության ժամանակ  
վնասը պատճառվում է այլ, հանցավոր  
ոտնձգություն չկատարած, անձին կամ  
անձի (անձանց) իրավունքներին, հասա-  
րակության կամ պետության շահերին ան-  
միջականորեն սպառնացող վտանգը վե-  
րացնելու համար:

**2) վտանգի առաջացման հիմքերին.**  
ծայրահեղ անհրաժեշտության պայմաննե-  
րում այդպիսի վտանգի աղբյուր կարող են  
լինել զանազան երևույթները՝ բնության  
տարերային ուժերը, բարձր վտանգավո-  
րության աղբյուրների ազդեցությունը,  
կենդանիների հարձակումները, մարդ-  
կանց գործողությունները և այլն:

**3) գործողությունների իրականաց-  
ման ժամանակին.** ծայրահեղ անհրաժեշ-  
տության ժամանակ վերացվում է տվյալ  
պահին անմիջապես առաջացած և գոյու-  
թյուն ունեցող վտանգը:

**4) վնասի պատճառման ուղղվա-  
ծությանը.** եթե բռնելիս վնաս է պատ-  
ճառվում հանցանք կատարած անձին, ա-  
պա ծայրահեղ անհրաժեշտության դեպ-  
քում՝ վտանգի առաջացման հետ կապ  
չունեցող երրորդ անձանց:

**5) վնասի պատճառման սահմաննե-  
րին.** ծայրահեղ անհրաժեշտության ժա-  
մանակ պատճառված վնասը պետք է լի-  
նի ոչ այնչափ նշանակալից, որքան



կանխվող վնասը: Հանցանք կատարած անձին բռնելիս չի թույլատրվում միայն բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցում:

Ծայրահեղ անհրաժեշտության իրավաչափության կարևորագույն պայմաններից մեկն է հանդիսանում այն, որ առաջացած վտանգը չի կարող վերացվել այլ, վնասի պատճառման հետ կապ չունեցող, միջոցներով: Այլ բարիքի խախտման հաշվին ավելի բարձրարժեք շահի պաշտպանության եղանակը պետք է լինի բացառապես անհրաժեշտ, հարկադրված, ծայրահեղ: Այն դեպքում, երբ սպառնացող վտանգը կանխարգելու համար հնարավոր է մեկ այլ, վնաս չպատճառող կամ պակաս վնաս պատճառող եղանակ, անձը պետք է ընտրի այն: Իրավաչափության համաձայն չափանիշ կիրառվում է հանցանք կատարած անձին բռնելու գործողությունների գնահատման ժամանակ: Այն միջոցները, որոնց օգնությամբ բռնվում է հանցանք կատարած անձը, կասեցվում է նրա խուսափումը, ճնշվում է դիմադրությունը և այլն, պետք է լինեն անհրաժեշտ և խիստ նպատակային:

Ծայրահեղ անհրաժեշտության տարրերը հաճախակի առկա են հանցանք կատարած անձին բռնելուն ուղղված գործողությունների իրականացման ժամանակ: Այս դեպքում հաճախակի վնաս է պատճառվում ոչ միայն բռնվողին, այլ նաև երրորդ անձանց (նրանց իրավունքներին ու շահերին): Մասնավորապես, կարող է վնաս պատճառվել հանցագործին չպատկանող ավտոտրանսպորտային միջոցին, որով նա թաքնվելու փորձ է կատարում, կարող են վնասվել դռները, այլ առարկաներն ու գույքը, որոնք գտնվում են այն տարածքում, որտեղ բռնվում է անձը: Քանի որ բռնելիս վնասի պատճառումը հնարավոր է միայն հանցանք կատարած անձին, վերոնշյալ դեպքերը գնահատվում են իբրև իրավաչափ՝ ծայրահեղ անհրաժեշտության պայմանների սահմաններում:

Հիմնավորված ռիսկի հետ հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու հարաբերակցության մասին խոսելիս անհրաժեշտ ենք համարում նշել, որ ըստ օրենքի իմաստի, հանցանք կատարած անձին բռնելիս պետք է բացառվեն ռիսկային գործողությունները: Այլ կերպ ասած՝ անձը պետք է հստակ համոզված լինի.

ա/ հենց տվյալ անձն է կատարել կամ հենց նա կատարեց հանցագործությունը, որի համար նախատեսված պատասխանատվությունից նա խուսափելու փորձեր է ձեռնարկում,

բ/ բռնվողի մոտ կան հանցագործության սուբյեկտի անհրաժեշտ հատկանիշները,

գ/ նրա կատարած արարքը հանցագործություն է,

դ/ հենց տվյալ վնասի պատճառումը հանդիսանում է նրան բռնելու միակ հնարավոր միջոցը:

Հիմնավորված ռիսկի ժամանակ առաջարկված նպատակը չի կարող նվաճվել ռիսկի հետ կապ չունեցող միջոցներով: Սովորաբար, ինչպես ցույց է տալիս փորձը, հանրորեն օգտակար նպատակին կարելի է հասնել նաև առանց ռիսկի, բայց երկար ժամանակ անց, զգալի ծախսերի, լրացուցիչ ուժերի, միջոցների կիրառման միջոցով: Ռիսկը թույլ է տալիս ավելի արագ ու ռացիոնալ հասնել դրական արդյունքի:

Մինչդեռ, լիովին ակնհայտ է, որ հանցագործին բռնելու՝ նշված պայմանների անվերապահ պահպանումն օբյեկտիվ իրականության մեջ ոչ միշտ է հնարավոր: Բավական է ասել, որ հանցագործություն կատարելու մեջ անձի մեղավորությունը վերջին հաշվով հաստատում է դատարանը: Հանցանք կատարած անձին բռնելիս նրա արտաքին տեսքից, վարքից և այլ հատկանիշներից անձը շատ դեպքերում չի կարող վստահությամբ սահմանել ոտնձգողի տարիքը, նրա հոգեկան վիճակը, հանցագործության կատարմանը նրա մասնակցությունը: Վերջապես, նման ծայրահեղ իրադրությունում դժվար է ճիշտ գնահատել հանցագործին բռնելու այս կամ այն միջոցների առկայությունը:

Մի շարք դեպքերում հանցանք կատարած անձին բռնելու ուղղությամբ կատարված գործողություններն ունեն վառ արտահայտված ռիսկային բնույթ: Օրինակ, քաղաքացին կամ ոստիկանության աշխատակիցը, նկատելով անձին, ում արտաքին հատկանիշները համընկնում են հետախուզման մեջ գտնվող հանցագործի տվյալների հետ, որոշում է ընդունում բռնել նրան և հանցագործի՝ բռնվելուց խուսափելու փորձ կատարելուց դրդված՝ վնաս է պատճառում նրան: Եթե հետագայում պարզվում է, որ բռնվածը հանցա-

գործ չէր, քննարկվող ինստիտուտի սահմաններում նրան վնաս պատճառելն իրավաչափ չէ:

Արարքի հանցավորությունը բացառող նոր հանգամանքների շարքում օրենսդիրը նախատեսում է հրամանի և կարգադրության կատարումը: Քրեական օրենքը բացառում է անձի համար պարտադիր և օրենսդրությամբ սահմանված կարգով արձակված հրամանի կամ կարգադրության կատարման նպատակով պատճառված վնասի համար քրեական պատասխանատվությունը: Այդպիսի վնասի պատճառման համար քրեական պատասխանատվության է ենթակա անօրինական հրաման կամ կարգադրություն արձակած անձը:

Նշենք, որ տվյալ ինստիտուտը հարաբերակցվում է հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու հետ միայն այնքանով, որքանով որպես բռնելու սուբյեկտ կարող է հանդես գալ ձերբակալում իրականացնելու հատուկ լիազորություններ ունեցող անձը:

Ինչպես հայտնի է, հանցագործների ձերբակալման ժամանակ ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման գծով պաշտոնատար անձանց գործողությունները կարգավորված են հատուկ օրենքներով ու վարչական նորմատիվ ակտերով: Միևնույն ժամանակ, պաշտոնատար անձանց միջև հարաբերությունները հիմնված են վերադաս ղեկավարների հրամանների անվերապահ կատարման վրա: Դիտավորությամբ հանցանք կատարելը ակնհայտ անօրինական հրամանի կամ կարգադրության կատարման ժամանակ, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի, պատասխանատվությունից չի ազատում ո՛չ հրաման կամ կարգադրություն կատարողին, ո՛չ էլ այդպիսի հրաման կամ կարգադրություն տված անձին:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը ոստիկանության աշխատակիցներին արգելում է կիրառել հրազեն հղիության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամների և անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից քաղաքացիների կյանքի համար վտանգավոր զինված կամ խմբակային հարձակման և զինված դիմադրության դեպքերի), ինչպես նաև մարդկանց զգալի կուտակումների ժամանակ, երբ

հրազենի գործադրումից կարող են տուժել այլ անձինք: Օրենքի նշված դրույթը լիովին վերաբերելի է հանցանք կատարած անձին բռնելու իրադրությանը: Ուստի, հրազենի կիրառումը նշված անձանց նկատմամբ կամ նշված իրադրությունում, անգամ հանուն համապատասխան հրամանը կատարելու, հաստատապես անօրինական և հանցավոր է: Այդպիսի հրամանի կամ կարգադրության կատարման համար պատասխանատվություն է կրում ինչպես հրամանը տված ղեկավարը, այնպես էլ տվյալ հրամանը կատարած ստորադասը:

Այլ է իրադրությունը հրամանի կատարման համար զենք կիրառած անձի մոտ հիմնավոր կասկածի առկայության դեպքում: Ստորադասը, որպես կանոն, չունի լիարժեք տեղեկատվություն, հնարավորություն չունի վերստուգել անորոշ տվյալները, նա պարտավոր է վստահել ղեկավարի կողմից իրադրության գնահատականին: Ուստի, եթե ղեկավարի կողմից, փախուստի դիմած հանցագործի նկատմամբ, զենքի կիրառման մասին հրաման է տրված, այս դեպքում անկախ, օրինակ, այն հանգամանքից, որ տվյալ անձն ըստ արտաքին տեսքի կարող է և անչափահաս լինել (ինչը բացառում է զենքի կիրառման հնարավորությունը), ստորադասի կողմից վնաս պատճառելը չի կարող հանցավոր համարվել: Այդ ժամանակ, որպես արարքի հանցավորությունը բացառող հիմք, հանդես է գալիս հենց հրամանի կամ կարգադրության կատարումը: Տվյալ դեպքում պատասխանատվությունը կրում է հրաման տված ղեկավարը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ հարկավոր է ընդգծել, որ հանցանք կատարած անձին բռնելիս վնասի պատճառման ինստիտուտը կապված է արարքի հանցավորությունը բացառող այլ հանգամանքների հետ ևս, իսկ օբյեկտիվ իրականության մեջ հաճախակի հատվում է դրանց հետ: Հանցանք կատարած անձին բռնելը իրավական համակարգի անհրաժեշտ տարրերից է, որը հարկավոր է տարբերել համանման ինստիտուտներից և միևնույն ժամանակ տեսնել դրանց հետ փոխադարձ կապերը:

**Անդրանիկ ՄԱՆՈՒԿՅԱՆ**  
**ԵՊՀ իրավագիտության**  
**ֆակուլտետի ասպիրանտ**

## ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՅՈՒՆԵՍԿՕ-Ն

Աշխարհում տեղի ունեցող բազմաթիվ փոփոխությունների շարքում անընդհատ աճող և իրենց դիրքերն ամրապնդող միջազգային կազմակերպություններն ունեն ուրույն դեր և նշանակություն: Միջազգային կազմակերպությունների՝ որպես ինքնուրույն կառույցի, գաղափարը ծագել է ոչ վաղ անցյալում, չնայած վերջինիս հիմքերը դրվել են դեռևս 19-րդ դարում<sup>1</sup>: Արդեն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծվեցին բազմաթիվ միջազգային կազմակերպություններ, որոնք կոչված էին ապահովելու միջազգային հարաբերությունների ձևավորումն ու պետությունների համագործակցությունը տարբեր ոլորտներում: Անհրաժեշտ է փաստել, որ վերջին ժամանակներս միջազգային կազմակերպությունները դառնում են ավելի հանրահայտ, ազդեցիկ և զգալի ազդեցություն են ունենում աշխարհում տեղի ունեցող գործընթացների վրա: Հատկապես, ներկայումս զգալիորեն աճում է միջազգային կազմակերպությունների՝ այս կամ այն ոլորտում օրենսդրական գործունեության դերը: Միջազգային կազմակերպությունները, լայն առումով, պետությունների միջև սերտ համագործակցության նպատակ են հետապնդում՝ հանուն միջազգային խաղաղության ու անվտանգության, ժողովուրդների միջև հանդուրժողականության, մարդու իրավունքների համընդհանուր հարգման, ժողովրդավարական արժեքների դավանման:

Մեծ է միջազգային կազմակերպությունների դերը հատկապես մարդու իրավունքների, այդ թվում նաև կրթության իրավունքի, միջազգային իրավական կարգավորման և պաշտպանության գործում: Միջազգային Ասոցիացիաների Միության տվյալների համաձայն, մոտ 200 միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպություններ գործունեություն են իրականացնում կրթության, գիտության և մշակույթի ոլորտներում<sup>2</sup>: Կրթության իրավունքի միջազգային իրավական կարգավորման և պաշտպանության գործում կարևոր և ազդեցիկ տեղ և դեր ունեն այնպիսի միջազգային կազմակերպություն-

ներ, ինչպիսիք են Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ), Միավորված ազգերի կազմակերպության կրթության, գիտության և մշակույթի հարցերով կազմակերպությունը (ՅՈՒՆԵՍԿՕ), Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ), Եվրոպայի խորհուրդը (ԵԽ) և այլն:

ՄԱԿ-ի համակարգում գործող և մասնավորապես կրթության հարցերով զբաղվող հիմնական միջազգային կազմակերպությունը Միավորված ազգերի կազմակերպության կրթության, գիտության և մշակույթի հարցերով կազմակերպությունն է (ՅՈՒՆԵՍԿՕ):

<sup>1</sup>Առաջին այդպիսի կազմակերպություններ են համարվում, օրինակ, Համաշխարհային հեռագրային միությունը (1865թ.), Համաշխարհային փոստային միությունը (1874թ.):

<sup>2</sup><http://www.uia.be/>

1945թ. Լոնդոնում, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կառավարությունները ձեռնամուխ եղան կրթության, գիտության և մշակույթի հարցերով կազմակերպության ստեղծմանը: Կազմակերպության կանոնադրությունն ընդունվեց նույն թվականին և ուժի մեջ մտավ 1946թ. նոյեմբերի 4-ին, նույն թվականի դեկտեմբերին այն դարձավ ՄԱԿ-ի մասնագիտացված կազմակերպություններից մեկը: Ներկայումս կազմակերպությանն անդամակցում են 195 պետություն:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի հիմնական մանդատն աշխարհում խաղաղության ստեղծումն ու պահպանումն է՝ հիմնված մարդու մտավոր և բարոյական միասնության վրա: Վերջինիս գործունեությունն ընդգրկում է կրթության, բնական և հասարակական գիտությունների, մշակույթի, կայի և տեղեկատվության ոլորտները<sup>3</sup>: Կազմակերպության նպատակը նշված ոլորտներում ազգերի միջև համագործակցության ընդլայնման միջոցով խաղաղության ու անվտանգության պահպանումն է՝ ուղղված ՄԱԿ-ի կանոնադրությամբ աշխարհի ժողովուրդների կողմից առանց ռասայական, սեռական, լեզվական կամ կրոնական խտրականության համընդհանուր ճանաչման արժանացած արդարության, հանդուրժողականության, իրավունքի գերակայության, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների օժանդակմանը<sup>4</sup>:

Կրթությունը, թերևս, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործունեության հիմնական ոլորտն է: Սա է վկայում այն փաստը, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի բյուջեի մոտավորապես 35 տոկոսը ծախսվում է կրթական ծրագրերի իրականացման վրա<sup>5</sup>: Կրթության ոլորտում ՅՈՒՆԵՍԿՕ-ի գերակա ուղղություններն են անգրագիտության վերացումը և բոլորի

համար հիմնական կրթության ապահովումը, այսպես կոչված «միջազգային կրթության»<sup>6</sup> առաջխաղացումը, ինչպես նաև ներպետական օրենսդրական մակարդակով կրթության խտրականության արգելումն ու վերացումը: ՅՈՒՆԵՍԿՕ-ն իր գործունեությամբ նպատակ ունի նաև զարգացնելու տեխնիկական և մասնագիտական կրթությունը, բարձրագույն ու միջին մասնագիտական կրթությունը, օժանդակելու ուսուցիչների, կրթական ծրագրեր մշակողների և կրթական ոլորտում այլ վարչական աշխատողների որակավորմանը, աջակցելու համայնքային դպրոցաշինությանն ու դպրոցների կահավորմանը: Այս նպատակներին հասնելու համար ՅՈՒՆԵՍԿՕ-ն իրականացնում է մի շարք գործառույթներ, այն է՝

- սահմանում է միջազգային կրթական չափորոշիչներ և հետևում է դրանց կատարմանը,

- հավաքում և տարածում է տեղեկատվություն՝ կապված կրթության հետ,

- մատուցում է խորհրդատվական և տեխնիկական բնույթի ծառայություններ,

- օժանդակում է պետություններին՝ կրթական հաստատություններ և կենտրոններ հիմնելու գործում,

- կազմակերպում է սեմինարներ, կոնֆերանսներ և սիմպոզիումներ,

- սուբսիդավորում է որոշ հասարակական կազմակերպությունների<sup>7</sup>,

- սկսած 1991թվականից՝ երկու տարին մեկ անգամ, հրապարակում է Համաշխարհային կրթության վերաբերյալ զեկույց՝ կրթության զարգացման միտումների և կրթության քաղաքականության խնդիրների վերլուծության վերաբերյալ:

Կրթության վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ն ընդունել է մի շարք միջազգային իրավական ակտեր՝ հիմնականում նպատակ ու

<sup>3</sup>A Guide to Information at the United Nations. New York: UN, 1995. pp 78-79.

Տե՛ս նաև. ՅՈՒՆԵՍԿՕ-ի պաշտոնական կայք, [www.unesco.org](http://www.unesco.org)

<sup>4</sup>Տե՛ս. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանոնադրություն, հոդված 1:

<sup>5</sup>Տե՛ս. ՅՈՒՆԵՍԿՕ-ի պաշտոնական կայք, [www.unesco.org](http://www.unesco.org)

<sup>6</sup>«Միջազգային կրթություն»-ը ենթադրում է կրթություն միջազգային համագործակցության և խաղաղության համար, կրթություն, որի հիմքում ընկած են մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները և մարդու իրավունքների կրթությունը:

<sup>7</sup>Տե՛ս. ՅՈՒՆԵՍԿՕ-ի պաշտոնական կայք, [www.unesco.org](http://www.unesco.org)

Գենալով ամբողջովին բացահայտել Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածի բովանդակությունը: Լայն տարածում է գտել այն միտքը, որ ի շնորհիվ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հիմնական ջանքերի, այսօր կրթության իրավունքը հստակորեն սահմանված և արդյունավետ պաշտպանված սոցիալ-տնտեսական, մշակութային իրավունքներից մեկն է<sup>8</sup>:

Կրթության իրավունքի վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ն ընդունել է հետևյալ հիմնական իրավական ակտերը.

Կոնվենցիաներ՝

● Կրթության խտրականության դեմ (1960),

● Տեխնիկական և մասնագիտական կրթության մասին (1989):

Առաջարկություններ՝

● Կրթության խտրականության դեմ (1960),

● Ուսուցիչների կարգավիճակի մասին (1966),

● Միջազգային կրթության, համագործակցության և խաղաղության, ինչպես նաև մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ (1974),

● միջին մասնագիտական կրթության զարգացման մասին (1976),

● բարձրագույն կրթություն տրամադրող անձնակազմի կարգավիճակի մասին (1997):

Հռչակագրեր՝

● ՄԱԿ-ի Հազարամյակի զարգացման ծրագրի շրջանակներում գիտելիքներ չունեցող անձանց կրթության մասին (1964),

● ռասայի և ռասայական նախատրամադրվածության մասին (1978),

● ֆիզիկական կրթության և սպորտի մասին միջազգային կանոնադրություն (1978):

Նշվածներից 1960թ. Կրթության

խտրականության դեմ կոնվենցիան շրջադարձային դեր ունեցավ կրթության իրավունքի եռթյան ու բովանդակության բացահայտման, վերջինիս կարգավորման և պաշտպանության գործում: Ի լրումն վերոգրյալի այն լուծեց երկու կարևոր խնդիր. ա) պարտավորեցրեց մասնակից պետություններին նյութական և իրավական նախադրյալներ ստեղծել կրթության իրավունքի իրացման համար, բ) պարտավորեցրեց մասնակից պետություններին հավասար պայմաններ, հնարավորություն և վերաբերմունք ապահովել կրթություն ստանալու համար և դրանով իսկ կրթության իրավունքի հասանելիության երաշխավորման միջազգային իրավական հիմքեր ձևավորեց:

ՅՈՒՆԵՍԿՕ-ին անդամակցող պետությունները պարտավոր են քննարկման ներկայացնել ընդունված կոնվենցիաներն ու առաջարկությունները, իսկ հետագայում զեկուցել դրանց կատարման ընթացքի մասին: Քննարկման ներկայացնելու պարտավորությունը ենթադրում է, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ պետությունը պետք է կոնվենցիաներն ու առաջարկությունները մեկ տարվա ընթացքում ներկայացնի համապատասխան ներպետական մարմնի քննարկմանն ու հաստատմանը<sup>9</sup>: Վավերացման դեպքում դրանք դառնում են ներպետական օրենսդրության մաս:

Միջազգային կրթական չափորոշիչների մշտադիտարկումն իրականացնում է Կոնվենցիաների և առաջարկությունների կոմիտեն<sup>10</sup>: Այն, պետությունների ներկայացրած զեկույցների հիման վրա, մշտադիտարկում է իրականացնում սահմանված կրթական չափորոշիչների իմպլեմենտացման նկատմամբ, ինչպես նաև քննում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի պաշտպանության ներքո գտնվող մարդու իրավունքների խախտման հետ կապված գործերն ու հարցերը: Այս վերջին գործառույթը հնարավորություն

<sup>8</sup>Klaus Dieter Beiter. The Protection of the Right to Education by International Law. Martinus Nijhoff Publishers, 2006. pg. 233.

<sup>9</sup>Տե՛ս. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանոնադրություն, հոդված 4:

<sup>10</sup>Տե՛ս. ՅՈՒՆԵՍԿՕ-ի պաշտոնական կայք, [www.unesco.org](http://www.unesco.org)

է տալիս միջազգային մակարդակով անհատական դիմումներ ներկայացնել կրթության իրավունքի խախտման վերաբերյալ:

Ինչ վերաբերում է զեկույցների ներկայացմանը, ապա պետությունները տվյալներ պետք է ներկայացնեն կոնվենցիաների և առաջարկությունների կատարման ուղղությամբ ձեռնարկված բոլոր միջոցների մասին<sup>11</sup>: Ձեկույցների ներկայացման ընթացակարգը հիմնված է մասնակից պետության և կոմիտեի միջև երկխոսության վրա: Առաջացած հարցերի դեպքում Կոմիտեն դիմում է պետությանը, որպեսզի վերջինս այդ հարցերի հետ կապված հանդես գա մեկնաբանությամբ: Կոմիտեի կազմած եզրակացությունը ներառում է մեկնաբանություններ այն մասին, թե ինչպես պետք է իրականացվի այս կամ այն նորմը, դրա իրականացման աստիճանը և հետագայում ինչ քայլեր պետք է ձեռնարկվեն կոնվենցիաներն ու առաջարկություններն ավելի արդու-նավետ իրականացնելու ուղղությամբ:

Կոնվենցիաների և առաջարկությունների կոմիտեն իրավասու է քննելու անձի, անձանց խմբի կամ հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված դիմումներ, որոնց համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ պետությունը խախտել է վերջինիս կողմից պաշտպանվող իրավունքներից առնվազն մեկը, մասնավորապես՝ կապված կրթության, գիտության, մշակույթի և տեղեկատվության հետ<sup>12</sup>: Փաստորեն, Կոմիտեն իրավասու է քննելու միջազգային իրավական ակտերով պաշտպանվող կրթության իրավունքի խախտման վերաբերյալ դիմումներ, ինչպիսին կարող է լինել, օրինակ, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածը<sup>13</sup>:

Դիմումը ստանալուն պես, Գլխավոր

քարտուղարը իրականացնում է հետևյալ գործողությունները.

1. դիմումատուին տեղեկացնում է գանգատի ընդունելիության պայմանների մասին,

2. համոզվում է, որ դիմումատուն չի առարկում դիմումը և վերջինիս անունը Կոմիտեին հանձնելու նկատմամբ,

3. դիմումատուի թույլտվությունը ստանալուց հետո, Գլխավոր քարտուղարը դիմումն ուղարկում է շահագրգիռ պետության Կառավարությանը և տեղեկացնում, որ Կոմիտեն դիմումը կքննի Կառավարության պատասխանի հետ միասին,

4. Կոմիտեին է ուղարկում դիմումն ու Կառավարության պատասխանը՝ դիմումատուի կողմից տրված լրացուցիչ տեղեկատվության հետ միասին:

Դիմումը քննվում է դռնփակ նիստում: Առաջին հերթին Կոմիտեն որոշում է դիմումի ընդունելիության հարցը: Ի լրումն ընդունելիության այլ պայմանների՝ այն չպետք է լինի անանուն, ակնհայտ անհիմն, պետք է պարունակի իրավունքի խախտման վերաբերյալ համապատասխան ապացույց, չպետք է ներկայացված լինի իրավունքի չարաշահմամբ, պետք է ներկայացված լինի ողջամիտ ժամկետում, տեղեկություն պարունակի այն մասին, թե արդյոք փորձ արվել է սպառելու իրավունքի պաշտպանության ներպետական միջոցները:

Այնուհետև, Գլխավոր քարտուղարը տեղյակ է պահում դիմումատուին և շահագրգիռ պետության Կառավարությանը Կոմիտեի՝ դիմումի ընդունելիության վերաբերյալ կայացրած որոշման մասին: Եթե դիմումը համարվում է ընդունելի՝ Կոմիտեն ըստ էության քննում է այն, հակառակ դեպքում՝ այն քննության ենթակա չէ<sup>14</sup>:

Դիմումն ըստ էության քննելու դեպ-

<sup>11</sup>Տե՛ս. ՅՈՒՆԵՍԿՕ-ի 70 EX/Decision 5.2.1 (1965), 71 EX/Decision 3.2 (1965), 77 EX/Decision 8.3 (1967), 15 C/Resolution 12.2 (1965) փաստաթղթերը:

<sup>12</sup>Տե՛ս. ՅՈՒՆԵՍԿՕ-ի 104EX/ Decision 3.3 փաստաթուղթը (1978):

<sup>13</sup>Տե՛ս. ՅՈՒՆԵՍԿՕ-ի 104EX/ Decision 3.3 փաստաթուղթը (1978):

<sup>14</sup>Մանրամասն տես. ՅՈՒՆԵՍԿՕ-ի 104 EX/ Decision 3.3 փաստաթուղթը, (1978):

քում Կոմիտեն առաջին հերթին փորձ է անում հաշտեցման եզրեր գտնել դիմումատուի և շահագրգիռ պետության Կառավարության միջև: Այս առումով, Կոմիտեն չի իրականացնում միջազգային դատական մարմնի գործառույթ: Փոխարենը, այն փորձում է վեճը լուծել միջազգային համագործակցության և հաշտեցման հիման վրա: Դիմումների հետ կապված Կոմիտեի մոտեցման վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ն արտահայտվել է հետևյալ կերպ. «Այն պարագայում, երբ դիմումների ներկայացման այլ ընթացակարգեր հաճախ ձեռք են բերում կոնֆլիկտային և մեղադրական բնույթ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի ընթացակարգն ի սկզբանե միտված է եղել կողմերի միջև առկա վեճը լուծել հաշտեցման և համաձայնության եզրեր գտնելու միջոցով: Այս է պատճառը, որ Կոմիտեն արել է ամեն ինչ՝ խուսափելու համար մարդու իրավունքները պետության կողմից խախտելու մասին եզրակացության հանգեցում: Այսպիսի եզրակացությունը, իրականում, կրեթի փակուղու, որն էլ իր հերթին կխոչընդոտի վեճի լուծմանը»<sup>15</sup>:

Դիմումը քննելուց հետո Կոմիտեն պատրաստում է գաղտնի զեկույց՝ կայացրած որոշման և առաջարկությունների մասին: Կողմերի հաշտության չգալու դեպքում՝ այդ մասին նշվում է զեկույցում: Ձեկույցն ուղարկվում է Գործադիր մարմին: Վերջինս ընդունում է Կոմիտեի ներկայացրած զեկույցը դռնփակ նիստում, որից հետո դիմումատուն ու շահագրգիռ Կառավարությունը տեղյակ են պահվում կայացված որոշման վերաբերյալ՝ ինչը վերջնական է:

Կոմիտեի գործունեության արդյունավետությունը բազմաթիվ քննարկումների առարկա է դարձել: Օրինակ, իրավագետներ Վայսբրոտն ու Ֆարլեյը

քննադատաբար են մոտենում այն հարցին, որ Կոմիտեն հստակ տարբերակված մոտեցում չի ցուցաբերում դիմումի ընդունելիության և գործն ըստ էության քննելու հարցերի միջև<sup>16</sup>:

Կարծում ենք, որ դիմումի դռնփակ քննությունը և վերջինիս ելքի վերաբերյալ Կոմիտեի պատրաստած *գաղտնի զեկույցը* նույնպես բացասական ազդեցություն է ունենում Կոմիտեի աշխատանքի արդյունավետության վրա: Առաջին հերթին չի պահպանվում հրապարակայնության սկզբունքը, ինչը կայացրած որոշման, և ընդհանրապես այս կամ այն ընթացակարգի արդարության, անաչառության, մրցակցության ապահովման երաշխիքն է: Երկրորդ, բաց զեկույցը այս կամ այն իրավունքի խախտման և Կոմիտեի արած առաջարկությունների կամ նորմի մեկնաբանման վերաբերյալ այլ շահագրգռված պետության, քաղաքացիական հասարակության, հասարակական և այլ կազմակերպությունների կողմից ազատորեն տեղեկատվություն փնտրելու և ստանալու հնարավորության սահմանափակում է: Այս առումով, նպատակահարմար ենք համարում համակարգում համապատասխան փոփոխությունների կատարումը, մասնավորապես, հրապարակային նիստերի անցկացումը և բաց զեկույցների ներկայացումը:

Այս ամենով հանդերձ, պետք է փաստել, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն կրթության ոլորտն ուղղակիորեն կարգավորող և կրթության իրավունքը պաշտպանող հիմնական միջազգային մարմինն է:

**Հասնիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ**  
**«Գլաձոր» համալսարանի**  
**դասախոս**

<sup>15</sup>Մանրամասն տես. ՅՈՒՆԵՍԿՕ-ի 169 EX/CR/2 փաստաթուղթը, (2004):

<sup>16</sup>Մանրամասն տես. Weissbrodt D. and Farley R. "The UNESCO human rights procedure: An evaluation". In Human Rights Quarterly, Vol.16, 1994, pp. 391-414.

## **Անմեղության կանխավարկածը ԸՇ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներում**

Անմեղության կանխավարկածը, ամրագրված լինելով ԸՇ Սահմանադրության 21-րդ հոդվածում, ձեռք է բերում սահմանադրական սկզբունքի նշանակություն: Ինչպես ցանկացած սահմանադրական նորմի, այնպես էլ անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքի իրացման համար պետք է նախատեսված լինեն պաշտպանության կայուն կառուցակարգեր, որոնք ունակ են ապահովելու անմեղության կանխավարկածի իրացումը ոչ միայն իրավակիրառ պրակտիկայում, այլև ճյուղային օրենսդրությունում: Բանն այն է, որ անմեղության կանխավարկածը կարող է խախտվել ոչ միայն իրավակիրառ մարմինների, այլև օրենսդրի կողմից: Հաճախ օրենսդիր մարմինը սահմանում է իրավական կարգավորման այնպիսի կառուցակարգեր, որոնք կամ ուղղակի խախտում են անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքը, խեղաթյուրում դրա իրավափիլիսոփայական բովանդակությունը կամ խոչընդոտում դրա արդյունավետ իրականացումը: Օրենսդիր մարմնի կողմից անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքի խախտման կամ անիրավաչափ սահմանափակելու դեպքերի կանխման, դրանք վերացնելու և մինչև սահմանադրաիրավական խախտումը եղած դրությունը վերականգնելու կառուցակարգերում կարևոր նշանակություն ունի սահմանադրական արդարադատությունը: ԸՇ Սահմանադրության 100-րդ հոդվածի համաձայն՝ ԸՇ ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների և որոշումների սահմանադրականության նկատմամբ սահմանադրական արդարադատություն է իրականացնում ԸՇ սահմանադրական դատարանը:

ՀՀ սահմանադրական դատարանը իր գործունեության ընթացքում անդրադարձել է անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքն ընթացիկ օրենսդրությամբ իրացնելու կառուցակարգերի սահմանադրականացման հարցերին: ՀՀ սահմանադրական դատարանը իր որոշումներում հստակեցրել է անմեղության կանխավարկածի բովանդակությունը, էությունը և նրա բաղադրատարրերը:

Անմեղության կանխավարկածի սահմանադրաիրավական բովանդակությունը ՀՀ սահմանադրական դատարանը ներկայացրել է 30.03.2010թ. ՍԴՈ-871 որոշմամբ: Սույն որոշման 5-րդ կետում նշվում է, որ ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածում ամրագրված՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը պա-

հանջում է հանցագործության կատարման մեջ մեղադրվողին համարել անմեղ այնքան ժամանակ, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Այս սկզբունքի էությունն անձի մեղքը բացառապես դատական կարգով հաստատելու երաշխավորումն է, այսինքն՝ այս սկզբունքի ուժով անձի մեղքը կարող է հաստատվել բացառապես քրեական դատավարության արդյունքում և միայն դատական ակտով: Անմեղության կանխավարկածի սկզբունքը պահանջում է նաև, որ անձի նկատմամբ կիրառվող դատավարական միջոցները չպետք է պարունակեն պատժի տարրեր, իսկ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը:



Ելնելով անմեղության կանխավարկածի սկզբունքի իրավաբանական բովանդակությունից՝ սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածում ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ նպատակ ունենալով պաշտպանել անձին հանցագործի մեղադրանքից, միաժամանակ չի կարող բացառել իրավասու մարմնի կողմից նրան քրեական հանցագործության մեջ կասկածելու հանգամանքը՝ մինչև այն պահը, երբ այդ կասկածներն այդ մարմնի իրավաչափ գործողությունների արդյունքում հնարավոր չի եղել հիմնավորվել:

ՀՀ սահմանադրական դատարանի նշված որոշման արժեքավոր կողմերից է այն, որ անմեղության կանխավարկածի սահմանադրական բովանդակությունից բխեցվեց «անձի նկատմամբ կիրառվող դատավարական միջոցների՝ պատժի տարրեր չպարունակելու» պահանջը: Իհարկե 1998թ. ՀՀ քր. դատ. օր-ի 18-րդ հոդվածում, օրենսդիրը ամրագրել է, որ խափանման միջոցները չպետք է պարունակեն պատժի տարրեր, սակայն ՀՀ սահմանադրական դատարանը իր որոշմամբ նախ ընդլայնել է այս դրույթի գործողության ոլորտը՝ տարածելով դատավարական ցանկացած միջոցի նկատմամբ, երկրորդ, այս դրույթին տվել է սահմանադրական նշանակություն, ինչից բխում է, որ նոր նախագծվող քրեական դատավարության օրենսգրքում անմեղության կանխավարկածի սկզբունքի համատեքստում պետք է ամրագրի «դատավարական հարկադրանքի միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր» դրույթը:

ՀՀ սահմանադրական դատարանը 22.09.2009թ. ՍԴՊ-832 որոշմամբ անդրադարձել է անմեղության կանխավարկածի գործողության ոլորտի հարցին: Մասնավորապես՝ արդյո՞ք անմեղության կանխավարկածը միայն քրեադատավարական սկզբունք է, թե՞ կարող է կիրառվել նաև այլ վարույթների շրջանակներում: Նշված գործով դիմողը գտնում էր, որ հարկ վճարողի համար հարկային արտոնությունների նրա իրավունքը հաստատող փաստաթղթերը ներկայացնելու

պարտականության սահմանումն իրավաչափ չէ և նման պարտականություն սահմանող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի «գ» կետը հակասում է ՀՀ Սահմանադրության 21, 22 և 33.1. հոդվածներին: Դիմողը գտնում էր, որ Սահմանադրության 21 և 22 հոդվածներով սահմանված անմեղության կանխավարկածի և «լռության» իրավունքի սկզբունքները կիրառելի են ոչ միայն քրեական դատավարության ոլորտում, այլ նաև այլ վարույթներում:

ՀՀ սահմանադրական դատարանը անմեղության կանխավարկածի կիրառելիության ոլորտը պարզելու համար վերլուծել է «քրեական մեղադրանք» հասկացության վերաբերյալ եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը: Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի՝ անձի դատական պաշտպանության իրավական երաշխիքներն ամրագրող 6-րդ հոդվածը՝ ընդհանրապես, և դրա 2-րդ կետում ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքը կիրառելի են ոչ միայն ներպետական օրենսդրությանը համապատասխան որպես քրեական հանցանք որակված արարքների առնչությամբ հարուցված վարույթների նկատմամբ, այլև, պայմանավորված տվյալ արարքի բնույթով և նախատեսված պատասխանատվության տեսակներով ու խստությամբ, կարող են կիրառվել նաև վարչական և կարգապահական պատասխանատվության վարույթների նկատմամբ: Այսպիսով, ՀՀ սահմանադրական դատարանը ճանաչել է, որ անմեղության կանխավարկածը կարող է կիրառվել նաև վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթների նկատմամբ:

Մինչույն ժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ վարչական կամ կարգապահական պատասխանատվության վարույթների առնչությամբ անմեղության կանխավարկածի և դրա հետ փոխկապակցված «լռելու իրա-

վունքի» կիրառելիության հանգամանքը դեռևս բավարար պայման չէ վիճարկվող նորմը նշված սկզբունքի և իրավունքի ենթադրյալ խախտման տեսանկյունից քննության առարկա դարձնելու համար: Այս առնչությամբ էական նշանակություն ունի «մեղադրանք», «մեղադրվող», «մեղադրվում է» հասկացությունների բովանդակությունը: Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ «մեղադրանք» հասկացությունը կարող է սահմանվել որպես «իրավասու մարմինների կողմից շահագրգիռ անձին ուղղված պաշտոնական ծանուցում առ այն, որ տվյալ անձը ենթադրաբար կատարել է տվյալ իրավախախտումը»: Մեղադրանքը որոշ դեպքերում կարող է դրսևորվել նաև այլ ձևով, սակայն էականն այն է, որ այն պետք է վկայի իրավախախտում կատարած լինելու ենթադրության մասին (տե՛ս, Օգթուրքն ընդդեմ Գերմանիայի գործով 1984թ. փետրվարի 21-ի վճիռը, *Ozturk v. Germany*): Նշված գործով ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ անձն այդ սկզբունքների պաշտպանությունից սկսում է օգտվել միայն այն պահից սկսած, երբ նա տեղեկացվում է, որ իրավասու մարմինները հիմք ունեն ենթադրելու, որ նա կատարել է դատապարտելի արարք: Հետեևաբար, անձը չի կարող օգտվել նշված սկզբունքների պաշտպանությունից, քանի դեռ իրավասու մարմինների մոտ չի ծագել ենթադրություն իր կողմից դատապարտելի արարք կատարած լինելու վերաբերյալ, և ինքը չի տեղեկացվել այդ ենթադրության առկայության մասին: Ինչպես նկատում ենք, ՀՀ սահմանադրական դատարանը անմեղության կանխավարկածի պաշտպանության ծագման սկիզբը կապում է երկու պայմանի հետ.

1. իրավասու մարմինների մոտ ծագել է ենթադրություն անձի կողմից դատապարտելի արարք կատարած լինելու վերաբերյալ,

2. անձը տեղեկացվել է այդ ենթադրության առկայության մասին:

Նշված պայմանները ինքնին ընդունելի են, սակայն երկրորդ պայմանի կիրառության հետ կապված առկա են որոշակի մտահոգություն: Բանն այն է, որ ՀՀ սահմանադրական դատարանը չի մեկնաբանել, թե անձը ինչ ձևով պետք է տեղեկացվի դատապարտելի արարք կատարած լինելու վերաբերյալ: Կարծում ենք, պարտադիր չէ, որ իրավասու մարմինները պաշտոնապես գրավոր դատավարական փաստաթղթի ձևով տեղեկացնեն անձին դատապարտելի արարք կատարելու կասկածանքի մասին: Իրավական պրակտիկայում «անձը տեղեկացվել է այդ ենթադրության առկայության մասին» պայմանը պետք է լայն մեկնաբանել, որի պարագայում անձի կողմից դատապարտելի արարքի կատարման կասկածանքի մասին կարող է վկայել նրա նկատմամբ այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն և էականորոն ներգործում են կասկածվող անձի դրության վրա: Օրինակ, հնարավոր է, որ անձին պաշտոնապես չեն տեղեկացրել, որ ինքը կասկածվում է որոշակի իրավախախտման մեջ, սակայն նրա նկատմամբ կատարվում են այնպիսի ստուգողական գործողություններ (գույքի վրա կալանք դնել և այլն), որոնց հիմքում դրված են իրավախախտում կատարելու կասկածը:

ՀՀ սահմանադրական դատարանը 24.07.2007թ. ՍԴՈ-710 որոշմամբ քննարկել է քրեական գործը դատարանի որոշմամբ լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտի և անմեղության կանխավարկածի համատեղելիության հարցը: Տեսության մեջ նշվում է, որ դատարանը այն դեպքերում, երբ բավարար ապացույցներ չկան մեղադրական դատավճիռ կայացնելու համար, խուսափում է գործը ըստ էության լուծելուց և գործը ուղղարկում է լրացուցիչ նախաքննության: Այս դեպքում քննիչը գործը կարճում է արդարացման հիմքերով<sup>1</sup>: Ա. Ղամբարյանը նշում է, որ դատարանի

<sup>1</sup>Ларин. А.М Презумпция невиновности. М.: Наука. 1982. С. 74.

այս քայլը չի բխում անմեղության կանխավարկածից<sup>2</sup>: Ըստ Սահմանադրական դատարանի՝ ՀՀ Սահմանադրության 21 հոդվածում ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքի կարևոր բաղադրատարրերից է չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու պահանջը: Նշված պահանջի կատարումը և քրեական գործը դատարանի որոշմամբ լրացուցիչ նախաքննության ուղարկելը գործնականում անհամատեղելի են միմյանց հետ: Քրեական գործը նման կարգով լրացուցիչ նախաքննության ուղարկելու դեպքում, ըստ էության, շրջանցվում է նշված հոդվածում ամրագրված չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու սահմանադրական պահանջը: ՀՀ սահմանադրական դատարանը նշված դիրքորոշումը հաստատել է նաև 02.04.2010թ. ՍԴՈ- 872 որոշմամբ:

ՀՀ սահմանադրական դատարանը 30.03.2010թ. ՍԴՈ-871 որոշմամբ անդրադարձել է ՀՀ քր. դատ. օր-ի 2-րդ մասում ամրագրված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու դրույթի համապատասխանությանը անմեղության կանխավարկածի սկզբունքին: Առանձին իրավաբաններ գտնում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի պահանջներին, քանի որ այս հիմքի կիրառմամբ ընդունված ակտերն ընթերցողի մոտ չփարատված կասկածների մասին համոզմունք են ձևավորում, ինչն անհամատեղելի է անմեղության կանխավարկածի սկզբունքի հետ: Նշված հիմքով գործի կարճման դեպքում վարույթն իրականացնող մարմնի սուբյեկտիվ գիտակցության մեջ շարունակում է պահպանվել հանցագործությանը մեղադրյալի մաս-

նակցության փաստի վերաբերյալ կասկածը, որը հիմնավորող ապացույցները բավարար չեն: Տեսության մեջ նույնպես նշվում է, որ ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի երկրորդ մասում առկա ձևակերպումը արդարացվածի վրա որոշակի ստվեր է գցում ու թեև ձևականորեն հավասարեցված է արդարացման մյուս հիմքերին, հոգեբանորեն ընկալվում է իբրև վարկաբեկող<sup>3</sup>: Վ. Սավիցկին նշում է, որ սույն ձևակերպումը առիթ է տալիս կասկածելու մեղադրյալի իրական անմեղությանը: Չէ որ եթե հանցագործության կատարմանը մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չէ, ուրեմն ձեռք են բերվել քիչ, գուցե շատ քիչ ապացույցներ, սակայն ինչ-որ մեղադրող ապացույցներ համեմայնդեպս կան: Այսինքն՝ մեղավորության համոզիչ, հիմնավոր ապացույցներ չկան: Ապացուցված չէ արտահայտությունը կարելի է մեկնաբանել տարբեր կերպ, մասնավորապես՝ իբրև ապացուցված չէ ամբողջությամբ՝ լրիվ: Սրանից հետևում է, որ հանցագործության կատարմանը մեղադրյալի մասնակցությունը մասնակիորեն՝ մասամբ ապացուցված է, սակայն նախաքննական մարմինը, թերևս, չկարողացավ ի հայտ բերել մեղավորության բոլոր ապացույցները, ուստի ստիպված գործը կարճեց<sup>4</sup>: Ինչպես նկատում ենք նշված հեղինակները «Մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում» ձևակերպման խոցելիությունը կապում են մեղավորության վերաբերյալ հասարակության կամ մեղադրյալի հոգեբանական ընկալման հետ: Միգուցե քննարկվող հիմքով հետապնդումը դադարեցնելու դեպքում հոգեբանական առումով չի բացառվում մեղավորության ընկալման որոշակի անորոշություն, սակայն դրանից չի բխում, որ նման ձևակերպումը հակասում է անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքին: Բանն այն է, որ իրավական համակարգում մի շարք ինստիտուտների կիրառումը կարող է առաջաց-

<sup>2</sup>Ղամբարյան Ա. Անմեղության կանխավարկածը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում: Երևան, 2005, էջ 6:

<sup>3</sup>Օրլով Ю. К. Основы теории доказательств в уголовном процессе. М.: 2000. С. 98.

<sup>4</sup>Савицкий В. М. Язык процессуального закона: вопросы терминологии. М.: 1987. С. 172.

եել հոգեբանական տարաբնույթ ընկալումներ, օրինակ սպանության փաստն ամրագրող տեսանկարահանումը որպես ապացույց անթույլատրելի ճանաչելը և այդ հիմքով անձին արդարացնելը հասարակության և տուժողի ազգականների շրջանակում կարող է առաջացնել ակնհայտ մարդասպանին անպատիժ թողնելու հոգեբանական ընկալում, սակայն նման հոգեբանական ընկալումը չպետք է կասկածի տակ դնի ապացույցների անթույլատրելիության ինստիտուտը և դիտարկվի որպես տուժողի իրավունքների պաշտպանությանը հակասող դրույթ: Այս առումով, ՀՀ սահմանադրական դատարանը վերը նշված գործով նշել է, որ անմեղության կանխավարկածի առանձին դրսևորում է «չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու» պահանջը (ՀՀ սահմանադրության 21-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասություն): Քրեական հետապնդումը դադարեցնելու վիճարկվող հիմքը նույնպես կոչված է իրացնելու անմեղության կանխավարկածի սկզբունքի բաղադրատարր հանդիսացող՝ «չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու» սկզբունքը: Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ նշված տեսանկյունից խնդիր կարող է առաջանալ միայն այն դեպքում, եթե իրավական հետևանքի առումով տարբերություն դրվի՝ ապացույցների բացակայության հիմքով, և անձի անմեղությունը հաստատված լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու միջև, մինչդեռ օրենսդիրը նման տարբերակում չի կատարել: Ավելին, ի տարբերություն ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-13-րդ կետերում ամրագրված՝ ոչ արդարացնող հիմքերով քրեական գործի կարճման, երբ մեղադրյալի կողմից հանցանքի կատարումը, որպես կանոն, մինչդեռ տական կամ դատական վարույթներում ապացուցված է, և ըստ այդմ, օրենսդիրը մեղադրյալին արդարացվածի կարգավիճակ չի տրամադրում, վիճարկվող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում անձին վերապահվում է արդարացվածի կարգավիճակ: ՀՀ սահմանադրական

դատարանը, նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասում տեղ գտած՝ «...կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում...» դրույթը կարող է մեկնաբանվել երկու առումով, առաջին՝ «չմասնակցությունը, դա չապացուցված մասնակցությունն է» կամ «հանցագործության կատարմանը անձի ապացուցված չմասնակցությունն է», սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առնվող 35-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հարցը պետք է գնահատվի հենց երկրորդ մեկնաբանման տեսանկյունից, քանի որ, ի թիվս այլնի, ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 42-րդ կետի համաձայն՝ արդարացվածն այն անձն է, որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ կամ, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է անմեղության հիմքով:

Նշված գործով ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ անմեղության կանխավարկածն անձին պաշտպանում է ոչ թե քրեական հետապնդման այն հիմքից, որը կասկած է թողնում անձի տվյալ հանցագործությանը մասնակցության առնչությամբ, այլ այնպիսի որոշումներից կամ դրանցում այնպիսի ձևակերպումներից, որոնք կարող են կասկածի ենթարկել տվյալ անձի արդարացումը կամ անմեղությունը: Նշված հանգամանքը գործնականում կարող է ավելի մեծ չափով իրավաբանական նշանակություն ունենալ արդարացված անձին պատճառված վնասի հատուցման իրավունքի կապակցությամբ ընդունվող որոշումների համար: Այս առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը վիճարկվող հիմքով արդարացվածին ոչ միայն պաշտպանում է նման հետագա ոչ իրավաչափ որոշումներից, այլ պաշտպանում է նաև հենց քրեական հետապնդումը դադարեցնելու որոշման մեջ այնպիսի ձևակերպումներ նախատեսելուց, որոնք կարող են կասկածի ենթարկել անձի արդարացումը կամ անմեղությունը: Մասնավորապես, ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով նախատեսված հանգամանքների առկայությամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս չի թույլատրվում որոշման մեջ տալ ձևակերպումներ, որոնք կասկածի տակ կդնեն այն անձի անմեղությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է:

Հաշվի առնելով, որ վիճարկվող հիմքով քրեական հետապնդման դադարեցման և քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված արդարացնող այլ հիմքերով քրեական հե-

տապնդման դադարեցման միջև իրավունքի տեսանկյունից որևէ որակական տարբերություն օրենսդրությունը չի նախատեսում, ինչպես նաև նկատի ունենալով, որ օրենսդրությունը նախատեսում է պաշտպանություն ընդդեմ այն ակտերի, որոնք կարող են կասկածի ենթարկել վիճարկվող հիմքով անձի արդարացումը կամ նրա անմեղությունը՝ սահմանադրական դատարանն արդարացիորեն գտել է, որ քրեական հետապնդումը դադարեցնելու մասով վիճարկվող հիմքն իրավակիրառական պրակտիկայում համարժեք իրացման դեպքում չի կարող վտանգել անձի անմեղության կանխավարկածը:

**Ելնելով վերոգրյալից կարելի է եզրակացնել.**

1. ՀՀ սահմանադրական դատարանը 30.03.2010թ. ՍԴՈ-871 որոշմամբ ներկայացրել է անմեղության կանխավարկածի սահմանադրական բովանդակությունը և դրանից բխեցրել է ՀՀ Սահմանադրության տեքստում անմիջապես ամրագրում չունեցող «անձի նկատմամբ կիրառվող դատավարական միջոցները չպետք է պարունակեն պատժի տարրեր» պահանջը, ինչը նշանակում է, որ օրենսդիրը ՀՀ քր. դատ. նոր օրենսգրքում պարտավոր է պահպանել սահմանադրաիրավական այս դրույթը:

2. Անմեղության կանխավարկածի գործողության ոլորտը պարզելու նպատակով ՀՀ սահմանադրական դատարանը 22.09.2009թ. ՍԴՈ-832 որոշմամբ վերլուծել է «քրեական մեղադրանք» հասկացության վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը և հստակ դիրքորոշում հայտնել, որ անմեղության կանխավարկածը կարող է կիրառվել նաև վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթների նկատմամբ:

3. ՀՀ սահմանադրական դատարանը անմեղության կանխավարկածի պաշտպանության ծագման սկիզբը կապում է երկու պայմանի հետ՝ իրավասու մարմինների մոտ ծագել է ենթադրություն անձի կողմից դատապարտելի արարք կատարած լինելու վերաբերյալ, և անձը տեղեկացվել է այդ ենթադրության առկայության մասին: Իրավական պրակտիկայում «անձը տեղեկացվել է այդ ենթադրության առկայության մասին» պայմանը պետք է լայն մեկնաբանել, որի պարագայում անձի կողմից դատապարտելի արարքի կատարման կասկածանքի մասին կարող է վկայել նրա նկատմամբ այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն և էականորոն ներգործում են կասկածվող անձի դրության վրա:

**Աշոտ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
**«Ա պետական կառավարման ակադեմիայի**  
**ասպիրանտ**

# Ընտրախախտումների դեմ՝ համատեղ ուժերով

Ընտրախախտումների վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և քննարկման նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնելու համար «Հ գլխավոր դատախազի հրամանով ստեղծված աշխատանքային խումբը 2012թ. ապրիլի 4-ին հանդիպել է հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

«Ընդառաջելով հասարակական կազմակերպությունների առաջարկությանը, ՀՀ գլխավոր դատախազությունում կազմակերպվել է այս հանդիպումը, քննարկելու համագործակցության հարցեր, ինչպես նաև Ձեզ տրամադրել տեղեկություն՝ աշխատանքային խմբի կատարած աշխատանքների վերաբերյալ»,- ողջունելով հանդիպման մասնակիցներին նշել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ **Արամ Թամազյանը**՝ ներկայացնելով աշխատանքային խմբի գործունեության առանձնահատկություններն ու առաքելությունը:

Ա.Թամազյանը ընդգծել է, որ դատախազությունը իրականացնելու է պատշաճ հսկողություն, որպեսզի ընտրախախտումների վերաբերյալ հաղորդումները ստուգվեն հնարավորինս սեղմ ժամկետում: «Հետաքննության և նախաքննության մարմիններին հանձնարարվել է հանցագործության հատկանիշներ մատնանշող տվյալների առկայություն պարունակող խախտումների վերաբերյալ նախապատրաստված նյութերով կայացնեն համապատասխան որոշում, դրանով իսկ հնարավորություն տալով կողմին կայացված որոշման հետ համաձայն չլինելու դեպքում բողոքարկել այն միաժամանակ նկատի ունենալով, որ ցանկացած հաղորդում չէ, որ կարող է քրեական գործ հարուցելու առիթ հանդիսանալ»,- նշել է Ա.Թամազյանը: Արձանագրելով, որ դատախազությունն իրա-

կանացնելու է օրենքով իրեն վերապահված լիազորությունները և չի փոխարինելու պետական մյուս մարմիններին՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը վստահեցրել է, որ կապահովվի աշխատանքային խմբի գործունեության հրապարակայնությունը:

Հանդիպման ընթացքում ավատանքային խմբի անդամներ **Հարություն Հարությունյանն ու Սմբատ Մելիքջանյանը** պարզաբանել են ընտրախախտումների համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատժատեսակները. ներկայացնելով ՀՀ քրեական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերով սահմանված հանցատեսակներն ու զանցանքները, դրանց տարբերությունը: Բանախոսներն արձանագրել են, որ դատախազությունը հսկողություն է իրականացնելու բացառապես քրեական օրենսգրքով նախատեսված ընտրախախտումների վերաբերյալ հաղորդումների գրանցման, քննարկման նկատմամբ՝ ընդգծելով, որ վարչական վարույթի հարուցումը և դրա նկատմամբ հսկողության իրականացումը դատախազության լիազորություններից դուրս է:

Աշխատանքային խմբի ղեկավար **Կորյուն Փիլոյանը** հանդիպման մասնակիցներին ներկայացրել է ընտրախախտումների վերաբերյալ ապրիլի 4-ի դրությամբ ՀՀ դատախազություն մուտք եղած դիմում բողոքները և դրանց հետագա ընթացքը:

Աշխատանքային խմբի անդամները պատասխանել են նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հարցերին՝ պայմանավորվածությամբ ձեռք բերելով հանդիպումները դարձնել պարբերական:

Քննարկմանը ներկա էին միջազգային կառույցների, ԱՄՆ դեսպանատան, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության, քաղաքացիական հասարակության և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

## **Հանդիպում ՀՀ Հատուկ քննչական ծառայությունում**

**ՀՀ Հատուկ քննչական ծառայության պետ Անդրանիկ Միրզոյանը ընդունել է Հայաստանում ԱՄՆ դեսպանատան անդրազգային հանցավորության հարցերով պատասխանատու Դենիել Հեսթինգսի և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավարի տեղակալ Կարել Հովսեփյանի գլխավորած պատվիրակությանը:**

Հանդիպման ժամանակ քննարկվել են ընտրական գործընթացների վերաբերյալ ՀՀ-ին վերապահված հանցագործությունների քննության հետ կապված մի շարք հարցեր:

Ա. Միրզոյանը տեղեկացրել է, որ ընտրական գործընթացների հետ կապված գործող քրեական օրենսգրքում նախատեսված է 12 հանցակազմ, որոնցից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածով ՀՀ-ի ենթակայությանը վերապահվել է 4-ը: Մասնավորապես ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը, ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը, կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելը, ընտրողի կամ քվեի ազատ իրականացմանը խոչընդոտելը:

Յուրերի խնդրանքով Ա. Միրզոյանը հանդիպման ընթացքում անդրադարձել է ընտրակաշառքի դեպքերին, ընտրական գործընթացների վերաբերյալ հարողումների քննարկման կարգին,

քրեական գործ հարուցելու առիթների և հիմքերի վերաբերյալ հարցերին:

«ՀՀ Հատուկ քննչական ծառայության քննիչների մոտ ձևավորվել է ընտրական գործընթացների վերաբերյալ նյութերի նախապատրաստման և քրեական գործերի քննության բավականին հարուստ փորձ և մեթոդիկա», - նշել է Ա. Միրզոյանը՝ վստահեցնելով, որ ՀՀ-ն ունի կամք և վճռականություն՝ իր լիազորությունների շրջանակներում պաշտպանելու քաղաքացիների ընտրական իրավունքը և ընտրախախտում թույլ տված անձանց գործողություններին համարժեք քրեաիրավական զնահատական տալու:

Կարևորելով հանրային իրազեկումը, շեշտվել է նաև, որ Հատուկ քննչական ծառայությունը թույլատրելի սահմաններում պատրաստական է ապահովելու հրապարակայնությունը:

ՀՀ պետն իր պատրաստականությունն է հայտնել պետական և ոչ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և ՋԼՄ-ների հետ համագործակցության հարցում՝ ընտրությունների բնականոն անցկացման գործընթացն ապահովելու համար:

# ԿԻՔԵՐՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ

«Հայաստանի գլխավոր դատախազի հրամանով «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմիններում քննվող գործերով վարչություն»-ը վերանվանվել է «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբերհանցագործությունների գործերով վարչություն»:

Կիբերհանցագործությունները, որպես կանոն, կապված են հանցավոր ծանապարհով ստացված եկամուտների օրինականացման՝ փողերի լվացման, ահաբեկչության, դրա ֆինանսավորման և պետության ու հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցակազմերի հետ, որոնց նկատմամբ դատախազական հսկողությունն իրականացվում է ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող գործերով վարչության կողմից:

Սրանք բարձր տեխնոլոգիաների՝ համակարգչային համակարգի օգտագործմամբ, էլեկտրոնային հաղորդակցությունների ոլորտում (էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքով կարգավորվող ոլորտում) կատարվող և այդ համակարգի, այդ թվում՝ տեղեկատվության փոխանակման անվտանգության դեմ ուղղված հանցագործություններն են: Որպես կանոն ոտնձգության թիրախ են դառնում տեխնոլոգիական համակարգերը, որոնք համոզե են գալիս որպես տեղեկատվության կրող և պահպանող:

Ժամանակակից հանցագործության այս տեսակի՝ կիբերհանցագործության դեմ արդյունավետ պայքար կազմակերպելու համար ներկայումս խիստ անհրաժեշտություն է առաջացել հետաքննության և նախաքննության մարմիններում ապահովելու կիբերհանցագործությունների բացահայտման և գործերի քննության, իսկ ՀՀ դատախազության համակարգում՝ դրանց նկատմամբ իրականացվող դատախազական ղեկավարման և դատախազական հսկողության մասնագիտացումն ու կենտրոնացումը, քանի որ այսօրինակ քրեական գործերի քննությունն ունի առանձնահատկություններ, այդ թվում՝ ինչպես ապացույցների ձեռք բերման եղանակների, այնպես էլ՝ տեսակների առումով: Մասնավորապես՝ անհրաժեշտ են թվային-էլեկտրոնային ապացույցների հայտնաբերման, ֆիքսման, զննման, առգրավման, պահպանման և փորձաքննությունների անցկացման միանգամայն նոր մոտեցումներ, իմացություններ և հմտություններ:

ՀՀ գլխավոր դատախազի՝ 06.04.2012թ. թիվ 15 հրամանով կիբերհանցագործությունների քննության նկատմամբ հսկողության իրավունքը վերապահվել է «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբերհանցագործությունների գործերով վարչությանը», որը հնարավորություն կտա ապահովել այս վարչության դատախազների մասնագիտացումը՝ այսօրինակ գործերով հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ պատշաճ հսկողություն իրականացնելու համար:

## Ի ՆՇԱՆԱՎՈՐՈՒՄ ԸԱՂԹԱՆԱԿԻ ՕՐԿԱ

ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը Հաղթանակի օրվա՝ մայիսի 9-ի առիթով շնորհավորական ուղերձ է հղել Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգի նախկին աշխատակիցներ՝ Հայրենական Սմեժ պատերազմի վետերաններին: Նա իր և դատախազության կուլեգիայի ու բոլոր աշխատակիցների անունից շնորհավորել է պատերազմի հաղթական ավարտի 67-ամյակի կապակցությամբ, նրանց մաղթել առողջություն, երկար տարիների կյանք ու ամենայն բարիք:



## **ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ**

### **ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ**

### **ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

#### **ՀՈՎՍԵՓՅԱՆ Արագի Սուրենի**

Ծնվել է 1949թ. Վրաստանի Բոգդանովկայի շրջանի Փոկա գյուղում:

Ավարտել է Երևանի Պետական համալսարանի իրավագիտության Ֆակուլտետը:

1978-1995 թվականներին աշխատել է Վրաստանի դատախազության համակարգում:

1995 թվականից աշխատում է ՀՀ դատախազության մարմիններում. ՀՀ զինվորական դատախազի օգնական, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության բաժնի ավագ դատախազ, Շիրակի կայազորի զինվորական դատախազ:

Արդարադատության առաջին դասի խորհրդական է:

ՀՀ գլխավոր դատախազի 2012թ. ապրիլի 2-ի հրամանով Ա. Հովսեփյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալ:

#### **ԷԼԻՋԲԱՐՅԱՆ Գրիգոր Վալիկոյի**

Ծնվել է 1969թ. Վրաստանի Ախալքալակի շրջանում:

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում ավարտելուց հետո 1993 թվականից աշխատանքի է անցել ՀՀ դատախազության համակարգում. Երևանի կայազորի զինվորական դատախազության քննիչ, ավագ քննիչ, ՀՀ զինվորական դատախազության ՀԿԳ քննիչ, Գուգարքի կայազորի զինվորական դատախազի տեղակալ:

Արդարադատության առաջին դասի խորհրդական է:

ՀՀ գլխավոր դատախազի 2012թ. ապրիլի 2-ի հրամանով Գ. Էլիզբարյանը նշանակվել է Շիրակի կայազորի զինվորական դատախազ:

#### **ՂԱՄԲԱՐՅԱՆ Արթուր Սիրեկանի**

Ծնվել է 1980թ. Երևանում:

Ավարտել է ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

Դատախազության համակարգում է 2004 թվականից. ՀՀ դատախազության գիտաուսումնական կենտրոնի գիտաշխատող, ամբիոնի վարիչ, ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ, ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժնի ավագ դատախազ:

Իրավաբանական գիտությունների թեկնածու է, դոցենտ, իրավագիտության տարբեր հարցերին նվիրված գրքերի և գիտական հոդվածների հեղինակ:

ՀՀ գլխավոր դատախազի 2012թ. մարտի 24-ի հրամանով Ա. Ղամբարյանը նշանակվել է ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժնի պետ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

- Շարունակվող համագործակցություն..... էջ 2
- ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ..... էջ 4
- Հանդիպում ՀՀ գլխավոր դատախազությունում..... էջ 5
- Կողորդինացիոն խորհրդի արտահերթ նիստ ..... էջ 6
- Չինաստանի գերագույն ժողովրդական դատախազը կայացելի Հայաստան..... էջ 7

### ՀԱՅ ԻՐԱՎՈՒՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

- Արմեն ԵՍԱՅԱՆ Մարդու իրավունքները միջնադարյան հայ իրավական աղբյուրներում..... էջ 8

### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

- Թամարա ՇԱՔԱՐՅԱՆ Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի սահմանումը և զարգացումը ..... էջ 14

### ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- Լյուդվիկ ԴԱՎԹՅԱՆ Փորձագիտական ապացույցների ձեռք բերումը և թույլատրելիությունը Եվրոպական Միությունում..... էջ 27

### ԲԻԶՆԵՍ ԵՎ ԻՐԱՎՈՒՄ

- Նաիրա ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ Մարքեթինգային հետազոտություններ..... էջ 34

### ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՄ

- Ռոման ԱԼԱՎԵՐԴՅԱՆ Ավազակությունը որպես հանցակազմ և հափշտակության տեսակ..... 40

### ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

- Անդրանիկ ՄԱՆՈՒԿՅԱՆ Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի հարաբերակցությունը արարքի հանցավորությունը բացառող այլ հանգամանքների հետ..... էջ 44

### ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

- Հասմիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ Կրթության իրավունքը և ՅՈՒՆԵՍԿՕ-ն..... էջ 49

### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

- Աշոտ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ Անմեղության կանխավարկածը ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներում..... էջ 54

### ԽՐՈՆԻԿԱ

- Ընտրախախտումների դեմ՝ համատեղ ուժերով..... էջ 60
- Հանդիպում ՀՀ Հատուկ քննչական ծառայությունում..... էջ 65
- Կիբեռհանցագործությունների գործերով..... էջ 62
- Ի նշանավորումն հաղթանակի օրվա..... էջ 62
- Նշանակումներ ՀՀ դատախազության համակարգում..... էջ 63

## **Դատախազության կայքէջը շարունակում է մնալ առաջատարը՝ տեղեկատվության թափանցիկության առումով**

2012թ. փետրվարի 15-ից ապրիլի 15-ն ընկած ժամանակահատվածում Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն իրականացրել է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կայքերի հերթական մոնիտորինգը, որը 2010 և 2011 թվականներին իրականացրած համանման դիտարկումների շարունակությունն է:

Կոմիտեն ուսումնասիրել է պետական մարմինների 52 կայք, որոնք բաժանվել են 3 խմբերի: Երրորդ խմբում ընդգրկված են ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատախազության, Երևանի քաղաքապետարանի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի պաշտոնական կայքերը, որոնց շարքում ՀՀ դատախազության կայքէջը 55,58 տոկոս արդյունքով համարվել է առաջատարը՝ տեղեկատվության թափանցիկության առումով:

**ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ** գիտագործնական հանդեսը, ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՎ) կողմից, ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.) ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար թույլատրելի գիտական պարբերականների ցանկում:

Главный редактор: Г. АМБАРЯН  
Editor-in-chief G. AMBARYAN

© “Օրинаканутюн” Издание Генеральной  
прокуратуры Республики Армения, 2012 № 71

© “Orinakanutiun” (Legality) - journal of General Prosecutor's office of the  
Republic of Armenia, 2012 № 71